Հաշվետվություն No.: 106657-AM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգի բարելավման ծրագիր (P127759)

Ստուգող խորհրդի հաշվետվությունը և առաջարկությունները

Հուլիսի 8, 2016 թ.

The Inspection Panel | THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

Ստուգող խորհրդի
հաշվետվությունը և առաջարկությունները՝ ուսումնասիրություն անցկացնելու պահանջի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. Ոռոգման համակարգի բարելավման

ծրագիր (P127759)

Համառոտ շարադրանք

1. Սույն Հաշվետվությունը և առաջարկությունները պատասխանում են Հայաստանի Ոռոգան համակարգի բարելավման ծրագիրը ուսումնասիրության ենթարկելու երկու դիմում-պահանջին: Դիմում-պահանջներում խոսքը գնում է երկու համայնքի ոռոգման ջրի մատակարարման վրա հնարավոր բացասական ազդեցության, հանրային քննարկումների և համայնքների ընդգրկման ոչ բավարար գործընթացների և մշակութային օբյեկտների վրա ազդեցության մասին: 2016թ. հունիսին Ստուգող խորհրդի այցից հետո (պահանջների իրավունակությունը ճշտելու նպատակով) Բանկի ղեկավարությունը տեղեկացրել է Խորհրդին, որ Հայաստանի կառավարությունն առաջարկում է փոփոխություններ անել ծրագրում, որոնք պահանջում են ծրագրի վերագնահատում Բանկի կողմից: Այս զարգացումների ենթատեքստում Խորհուրդը հետաձգում է իր կարծիքի տրամադրումը՝ հետաքննությունն արդարացված կամ ոչ արդարացված համարելու վերաբերյալ: Խորհուրդը կրկին անգամ կգնահատի իրավիճակը, երբ հետագա զարգացումները տեղի ունենան, և կներկայացնի Տնօրենների խորհրդին իր առաջարկությունները 12 ամիսը չգերազանցող ժամկետում:

A. Ներածություն

2. 2016թ. մարտի 18-ին Ստուգող խորհուրդը (Խորհուրդ) ստացավ նամակ՝ Հայաստանի ոռոգման համակարգերի վերականգնման ծրագիրը ուսումնասիրելու պահանջով (“առաջին պահանջը”): Ծրագրով նախատեսված է փոխարինել մեխանիկական ոռոգման չորս համակարգը՝ ինքնահոս համակարգերով՝ նպատակ ունենալով նվազեցնել հոսանքի սպառումը՝ դրանով իսկ կրճատելով ծախսերը:[1] Առաջին դիմում-պահանջը ներկայացրել էին Գողթ համայնքի անդամները (“Դիմողները”)[2],, որոնք խնդրել էին Խորհրդին գաղտնի պահել իրենց ինքնությունը: Նրանք մտահոգված են, որ Ծրագրի իրականացումը կարող է պակասեցնել համայնքին հասանելի ոռոգման ջուրը, որը մատակարարվում է Գեղարդալճի ջրամբարից՝ պնդելով, որ Ծրագրի հիդրոլոգիական տվյալները սխալ են և որ հանրային քննարկումները և համայնքի մասնակցությունը պատշաճորեն ապահովված չեն եղել:

3. 2016թ. մայիսի 3-ին, երբ Խորհուրդն արդեն գրանցել էր առաջին դիմում-պահանջը, նա ստանում է ուսումնասիրության ևս մեկ դիմում-պահանջ՝ նույն Ծրագրի

կապակցությամբ: Դիմում-պահանջը ներկայացրել էին տիկնայք Սարա Պետրոսյանը և Արուսյակ Այվազյանը՝ իրենց և Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ազդակիր Գառնի գյուղի 531 բնակչի անունից ("Դիմողներ"): Դիմում-պահանջի հեղինակները խնդրել են գաղտնի պահել 531 բնակչի ինքնությունը: Նրանց անհանգստացնում է ջրի բացակայությունը ինքնահոս ոռոգումն ապահովելու համար, Ազատի կիրճի ոչնչացումը՝ զբոսաշրջության վրա ազդեցության հետ մեկտեղ, և հանրային քննարկումների ու մասնակցության հետ կապված խնդիրները:

---

[1] Ծրագրի գնահատման փաստաթուղթը նախատեսում է "*էլեկտրաէներգիայի սպառման խնայողություն՝ չորս մեխանիկական ոռոգման համակարգերը ինքնահոս համակարգերով փոխարինելու արդյունքում […]՝ դրանով իսկ նվազեցնելով պոմպերի շահագործման ծախսերը […]*". ԾԳՓ, էջ 24:

[2] Դիմում-պահանջը ներառում է Գողթ համայնքի անդամների 98 ստորագրություն:

[3] Գառնին և Գողթը հարևան գյուղեր են, որոնք գտնվում են միմյանցից մոտ 10 կմ հեռավորության վրա:

4. Խորհուրդը գրանցել է առաջին դիմում-պահանջը 2016թ. ապրիլի 26-ին, իսկ երկրորդը՝ 2016թ. մայիսի 24-ին: Քանի որ երկու դիմում-պահանջները բարձրացնում են նմանատիպ հարցեր, որոնք վերաբերում են միևնույն Ծրագրի ինքնահոս ոռոգման համակարգին, ինչպես նաև ելնելով խնայողության և արդյունավետության նկատառումներից, Խորհուրդն ուսումնասիրում է այդ դիմում-պահանջները միասին: Խորհուրդը ստացել է Ղեկավարության՝ երկու դիմում-պահանջներին ուղղված պատասխանը (“Պատասխան”)՝ 2016թ. հունիսի 10-ին:

5. Ստուգող խորհրդի[4] ստեղծման Որոշման համաձայն, սույն Հաշվետվության և առաջարկության նպատակն է տալ առաջարկություն Գործադիր տնօրենների խորհրդին՝ արդարացված թե ոչ արդարացված համարել դիմում-պահանջների առարկա հանդիսացող հարցերի հետաքննությունը: Խորհրդի առաջարկությունը հիմնված է դիմում-պահանջների իրավունակության և այլ գործոնների իր գնահատման վրա, ինչպես արտացոլված է Խորհրդի Որոշման և նրա Գործառնական ընթացակարգերի մեջ:[5]

6. Այս փաստաթղթում ներկայացված է համապատասխան Ծրագրի նկարագրությունը (Բաժին Բ), երկու դիմում-պահանջի ամփոփ նկարագրությունը (Բաժին Գ), Ղեկավարության պատասխանի ամփոփը (Բաժին Դ), Ստուգող խորհրդի որոշումը դիմում-պահանջների և դիտարկումների տեխնիկական իրավունակության վերաբերյալ (Բաժին Ե): Ստուգող խորհրդի առաջարկությունները ներկայացված են Բաժին Զ-ում:

Բ. Ծրագրի նկարագրությունը

7. Ոռոգման համակարերի բարելավման ծրագիրը (P127759) ստորագրվել է Համաշխարհային բանկի Տնօրենների խորհրդի կողմից 2013 թ. մայիսի 22-ին՝ տրամադրելով 30 միլիոն ԱՄՆ դոլարի փոխառություն (ՎԶՄԲ-ի Հատուկ ներդրումների փոխառություն): Ծրագիրը փակվելու է 2017թ. հունիսի 30-ին: Ծրագրի ամբողջ արժեքը կազմում է 37, 5 միլիոն ԱՄՆ դոլար, Փոխառուի համաֆինանսավորումը՝ 7, 5 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագիրը դասվել է “Բ” կարգի, որը նախատեսում է հետևյալ բնապահպանական քաղաքականությունների պահպանումը. Շրջակա միջավայրի գնահատում (OP/BP 4.01); Վնասատուների կառավարում (OP/BP 4.09); Հարկադրված վերաբնակեցում (OP/BP 4.12); Պատվարների անվտանգություն OP/BP 4.37) և Միջազգային ջրուղիներին առնչվող ծրագրեր (OP/BP 7.50):

8. Դիմում-պահանջների առարկա Ծրագրի զարգացման նպատակն է “*կրճատել օգտագործվող էլեկտրաէներգիան և բարելավել ջրի տեղափոխման արդյունավետությունը ընտրված ոռոգման համակարգերում:*”[6] Ծրագիրը բաղկացած է

երեք բաղադրիչից. (i) Ոռոգման համակարգի բարելավում (33, 1 միլիոն ԱՄՆ դոլար); (ii) Կառավարման տեղեկատվություն (1, 7 միլիոն ԱՄՆ դոլար); և (iii) Ծրագրի կառավարում և օժանդակություն Ջրօգտագործողների ընկերություններին (2, 7 միլիոն ԱՄՆ դոլար): Երկու դիմում-պահանջն էլ վերաբերում են Բաղադրիչ 1-ի ենթաբաղադրիչ 1.1 -ին (Մեխանիկական ոռոգման փոխարինումը ինքնահոսով, 24, 7 միլիոն ԱՄՆ դոլար), որը ֆինանսավորում է ինքնահոս ոռոգման համակարգերի շինարարությունը չորս տարածքում, այդ թվում՝ Գեղարդալճի համակարգը, որն առաջին դիմում-պահանջի առարկան է, և երկրորդ դիմում-պահանջրի առարկա՝ Քաղցրաշենի համակարգը:

---

[4] Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկ No. IBRD 93-10): "Համաշխարհային բանկի Ստուգող խորհուրդ", սեպտեմբերի 22, 1993 (այսուհետ՝ "Որոշում"), կետ 19: Հասանելի է http://siteresources.worldbank.org/EXTINSPECTIONPANEL/Resources/ResolutionMarch2005.pdf կայքում:

[5] Ստուգող խորհրդի Գործառնական ընթացակարգ, ապրիլ 2014թ: Հասանելի է http://ewebapps.worldbank.org/apps/ip/PanelMandateDocuments/2014%20Updated%20Operating%20Procedures.pdf կայքում :

[6] Ծրագրի գնահատման փաստաթուղթ (ԾԳՓ), էջ 7: Բանկն ակնկալում է էլեկտրաէներգիայի և պահպանման ծախսերի խնայողություն տարեկան շուրջ 2 միլիոն ԱՄՆ դոլարի չափով, և էլեկտրաէներգիայի սպառման կրճատում շուրջ 17.8 միլիոն Կվտ/ժ-ով: Ղեկավարության պատասխան, էջ v:

9. Գեղարդալճի օբյեկտում Ծրագիրը նախատեսում է փոխարինել գոյություն ունեցող յոթ պոմպակայաններից երեքը և Գեղարդալճի ջրամբարից ջուր մատակարարելու համար օգտագործել ինքնահոս համակարգ: Աշխատանքը ներառում է ջրամբարի պատվարի բարձրացում 1, 6 մետրով՝ ջրամբարի 2, 4 միլիոն մ^3 տարողությունը 3,4 միլիոն մ^3-ի հասցնելու համար, և 23-կմ երկարությամբ ճնշումային խողովակաշարի և հարակից կառույցների կառուցում:

10. Քաղցրաշենի օբյեկտում գործող մեխանիկական ոռոգման համակարգը վերցնում է ջուրը Արտաշատի ջրանցքից, պոմպակայանով բարձրացնում ջուրը 180 մ բարձրության վրա և այնտեղից բաշխում ինքնահոս եղանակով: Ծրագրով Ազատ գետի վրա նախատեսվում է կառուցել գլխամասային ջրառ հանգույց՝ Ազատի ջրամբարից վերև ինը կիլոմետր հեռավորության վրա: Կառուցվելու է նաև 23, 5 կմ երկարությամբ խողովակաշար, որը ջուրը կտանի Քաղցրաշենի պոմպակայանի ջրընդունիչ ավազան, ինչը հնարավորություն կտա ինքնահոս եղանակով ոռոգել գոյություն ունեցող համակարգի սպասարկման տարածքը:

C. Ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջների ամփոփ նկարագիրը

11. Այս բաժնում ներկայացված են Ուսումնասիրություն իրականացնելու երկու դիմում-պահանջների ամփոփ նկարագրերը: Առաջին դիմում-պահանջը կցված է սույն փաստաթղթին որպես Հավելված 1, իսկ երկրորդը՝ որպես Հավելված 2:

<u>Առաջին դիմում-պահանջը Գեղարդալճի համակարգի վերաբերյալ</u>

12. Առաջին դիմում-պահանջը ներկայացրել էին Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի ազդակիր Գողթ համայնքի անդամները: Դիմում-պահանջը պնդում է, որ համայնքի ջրապահանջարկը բավարարելու համար բավարար քանակի ջուր չկա, որ ջրի հոսքերի և ծավալների հաշվարկման համար կիրառված մեթոդաբանությունը թերի է և որ քննարկումները Ծրագրի ազդակիր համայնքների հետ և Ծրագրում նրանց մասնակցությունը բավարար չեն եղել:

13. **Ջրի պահանջարկը և մատակարարումը:** Դիմում-պահանջը պնդում է, որ Գողթ համայնքի տարեկան ջրի պահանջարկը կազմում է 4, 4 միլիոն մ^3, մինչդեռ Ծրագրի փաստաթղթերում խոսքը գնում է ընդամենը 2, 25 միլիոն մ^3-ի մասին: Ինչպես ասվում է դիմում-պահանջում՝ Ծրագրի շրջանակներում առաջարկվող ինքնահոս համակարգը, որը Ծրագրով կառուցվելիք ճնշումային խողովակաշարով ջուր է մատակարարելու նաև լրացուցիչ համայնքներին, հավանաբար չի կարող բավարարել Գողթ համայնքի ոռոգման ջրի պահանջարկը՝ ոռոգման ջրի անբավարարության պատճառով:

14. **Հիդրոլոգիական տվյալները:** Դիմում-պահանջում նշվում է, որ Ծրագրի հիգրոլոգիական տվյալները “*չեն համապատասխանում իրականությանը*”, քանի որ Կարմիր գետում բավարար քանակի ջուր չկա, որպեսզի պահանջվող ջրի ծավալները մատակարարվեն ջրամբարին*:*

15. **Հանրային քննարկումներ:** Դիմողները բողոքում են հանրային քննարկումների և Ծրագրում մասնակցության բացակայությունից: Նրանք բացատրում են, որ 2015թ. նոյեմբերի 19-ին Գողթ համայնքը դեմ է արտահայտվել Ծրագրին, բայց ոչ մի հետագա լսումներ կամ քննարկումներ տեղի չեն ունեցել՝ ոտնահարելով նրանց իրավունքները: Դիմողները խնդրում են դադարեցնել Ծրագիրը մինչև նրանց համայնքում կանցկացվեն լրացուցիչ մասնակցային լսումներ:

16. Դիմում-պահանջում ներառված է նաև լրացուցիչ աշխատանքներ իրականացնելու առաջարկությունը, այդ թվում նոր ենթակառուցվածքի կառուցում, ինչպիսին Գիլանլար գետը Գեղարդալճի ջրամբարին միացնող ջրանցքը:

Երկրորդ դիմում-պահանջը վերաբերում է Քաղցրաշենի համակարգին

17. Երկրորդ դիմում-պահանջը ներկայացրել են Գառնի համայնքի երկու անդամ՝ Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ազդակիր 531 բնակչի անունից: Դիմողները պնդում են, որ Ծրագիրն ունի բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցություն, որ այն տնտեսապես անարդյունավետ է, ռիսկային և անկայուն: Նրանք բողոքում են, որ ջուրը բավարար չէ ինքնահոս ոռոգման համար, որ Ազատի կիրճի ավերածությունը կազդի զբոսաշրջության վրա, որ կան խնդիրներ՝ կապված հանրային քննարկումների և հանրության մասնակցության հետ:

18. **Ջրամատակարարում և բնապահպանական թողք:** Դիմում-պահանջում նշվում է, որ Ազատ գետի ջուրը բավարար չէ առաջարկվող համակարգում բնապահպանական թողքն ապահովելու համար, ինչը կհանգեցնի գետի ցամաքելուն: Դիմողները բացատրում են, որ նկատել են, որ ջրի մակարդակն Ազատ գետում անընդհատ իջնում է; ջրի մակարդակը կտրուկ ընկել է 2015թ. հուլիս և օգոստոս ամիսներին, որովհետև չորացել էին Ազատ գետը սնուցող վտանկները:

19. **Ազատի կիրճը:** Դիմողներին անհանգստացնում է Ազատի կիրճը, որն ազգային տեսարժան վայրերից է և ՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Վերին Ազատի դաշտավայրի մի մասը: Նրանք պնդում են, որ Ծրագրին առնչվող աշխատանքները "*կոչնչացնեն*" տեսարժան վայրը՝ ունենալով նաև զգալի վիզուալ ազդեցություն: Դրանից բացի, դիմողները նշում են, որ Ծրագիրն անտեսել է Գառնիի եզակի կարևորությունը Հայաստանի զբոսաշրջության զարգացման համար: Նրանք բացատրում են, որ վերջին քսան տարվա ընթացքում Գառնիի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները ուղղակիորեն կապված են եղել տեղական զբոսաշրջության զարգացման հետ: Նամակ-պահանջում նրանք բացատրում են, որ առաջարկություններով դիմել են կառավարությանը, սակայն ոչ մի պատասխան չեն ստացել: Ծրագրի աշխատանքները Ազատի կիրճում սկսվեցին 2016թ. ապրիլի 2-ին: Դիմողները հայտնում են, որ երկու անգամ փակել են ճանապարհը և ստիպել կառավարությանը հեռացնել ձորից շինարարական սարքավորումները:

20. **Հանրային քննարկումներ:** Դիմում-պահանջում նշվում է տեղեկատվության, հանրային քննարկումների և մասնակցության բացակայության մասին: Դիմողները նշում են, որ համայնքը տեղեկացված չի եղել հանրային լսումների մասին, իսկ ծրագրի հակառակորդների մասնակցությունը ժողովներին կանխվել է: Դիմում-պահանջների հեղինակները պնդում են նաև, որ Գառնիի բնակիչներին մի քանի անգամ ահաբեկել են, իսկ համայնքի հաստատումը ձեռք է բերվել *"խաբեությամբ"*: Նրանք պնդում են, որ ծախսերի ընթացակարգը թափանցիկ չէր, իսկ փաստաթղթերը՝ կեղծ:

21. Դիմողներն առաջարկում են կառուցել ջրամբարի մոտ արևային

էլեկտրական կամ հողմային տուրբիններ, փոխարինել 50 տարի շարունակ շահագործվող պոմպակայանները ժամանակակից և էներգախնայող պոմպերով՝ նախագծված ջրի այժմյան մակարդակների համար, կառուցել նոր ջրամբարներ, որոնք կկուտակեն Ազատ գետը թափվող ջրերը, կատարել հնգամյա չափումներ, որից հետո միայն քննարկել Ծրագրի օգտակար լինելը:

D. Ղեկավարության պատասխանի ամփոփ նկարագիրը

22. Մյուս բաժինը ներկայացնում է Ղեկավարության պատասխանի ամփոփ նկարագիրը, որը կցված է սույն փաստաթղթին որպես Հավելված III:

23. Փաստաթղթի սկզբին նշված է, որ Ղեկավարությունը "*համաձայն չէ այն կարծիքի հետ, որ ենթադրյալ վնասն իրոք գոյություն ունի կամ որ դրան հանգեցրել է Բանկի քաղաքականության կատարման թերացումը":* Համաձայն Ղեկավարության պատասխանի, "*երկու համակարգն էլ պատրաստվել են մանրակրկիտ ձևով և Բանկի քաղաքականության պահանջներին համապատասխան*"[7]: Ղեկավարությունը բացատրում է, որ Ծրագիրը չի փոխելու առկա ոռոգման ջրի ծավալները կամ նրա բաշխումը; ջուրն ուղղակի տեղափոխվելու է ինքնահոս եղանակով: Ղեկավարությունը պնդում է, որ երկու համակարգն էլ կենսունակ են, ջրի հոսքի հաշվարկները "*իրատեսական են և պահպանողական*", և որ Ծրագիրը չի կրճատելու ոռոգման ջրի մատակարարումը, բայց ավելի շուտ նախագծված է ապահովելու, որ երկու համայնքն էլ շարունակեն ստանալ իրենց ջուրը: Ղեկավարությունը պնդում է, որ երկու դիմում-պահանջում արտահայտված մտահոգություններից շատերը "*հիմնված են ոչ ճշգրիտ տեղեկատվության և ոչ ճիշտ ենթադրությունների վրա*": Ղեկավարության մանրամասն պատասխանը երկու դիմում-պահանջի վերաբերյալ ներկայացված է ստորև:

<u>Ղեկավարության պատասխանը Գեղարդալճի համակարգին առնչվող առաջին դիմում-պահանջին</u>

24. Ղեկավարությունը նշում է, որ նախկինում Բանկին ներկայցվել էին երկու բողոք-նամակ, որոնք վերաբերում էին նույն ոռոգման համակարգին, ընդ որում առաջինը 2015թ. նոյեմբերին ներկայացրել էր մասնավոր հիդրոէլեկտրակայանի շահագործողը, իսկ երկրորդը՝ ստորագրված մեկ այլ անհատի կողմից, ներկայացվել էր 2016թ. մարտին: Երկու բողոք-նամակում բարձրացված մտահոգությունները և Ստուգող խորհրդի ուսումնասիրությունը պահանջող նամակերում ներկայացվածները "*նույնն են:*"[8]

25. Ղեկավարությունը նշում է, որ Գողթ համայնքին մատակարարվող ոռոգման ջուրն անցնում է մասնավոր հիդրոէլեկտրակայանով, որի ջրառի ծավալները թափանցիկ չեն: Ղեկավարությունը նշում է, որ այդ մասնավոր հիդրոէլեկտրակայանի

կառուցումից հետո ջրամբարի արտահոսելը և ջրաթափի շահագործման գործելակերպն առաջացրել են լուրջ մտահոգություններ՝ կապված պատվարի անվտանգության հետ:

26. **Ոռոգման ջրի մատակարարումը Գողթին**. Ղեկավարությունը նշում է, որ "*Ծրագիրը չի ընդլայնում ոռոգվող տարածքը, այն չի փոխում նաև թիրախային համայնքներին մատակարարվող ոռոգման ջրի ծավալը*"[9]: Ղեկավարությունը նշում է, որ առաջարկվող Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգը փոխելու է մատակարարման եղանակը՝ պոմպերով աշխատող համակարգը ինքնահոս խողովակաշարով փոխարինելու միջոցով: Ղեկավարությունը բացատրում է, որ Գեղարդալճի ջրամբարի տարողության ծավալը նախատեսվում է մեծացնել 2, 4 միլիոն մ^3-ից մինչև 3, 4 միլիոն մ^3՝ նպատակ ունենալով ապահովել ջրով 26 կմ երկարությամբ ինքնահոս խողովակաշարը, որը ոռոգելու է ընդհանուր 1448 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում 705 հա Գողթ համայնքում:

27. Ըստ Ղեկավարության, դիմում-պահանջը հիմնված է գերգնահատված ջրապահանջարկի վրա, որը չի համապատասխանում Գողթի ոռոգվող տարածքի այժմյան ջրապահանջարկին, ոչ էլ ջրի սպառման պատմական տվյալներին:[10] Դրանից բացի, Ղեկավարությունը նշում է, որ փոփոխված ջրամբարի տարողությունը, կարծես, շփոթում են ջրի տարեկան առկա ծավալի հետ, որն այդ ջրամբարը կարող է մատակարարել:

[7] Ղեկավարության պատասխանը, էջ v:
[8] Ղեկավարության պատասխանը, կետ 18
[9] Ղեկավարության պատասխանը, կետ 22
[10] Ղեկավարության պատասխանի համաձայն, հաշվարկային տարեկան ոռոգման պահանջը կազմում է մոտ 2, 2 միլիոն մ^3, բանակցված պայմանագրում սահմանված է պատմական միջին ծավալը՝ շուրջ 2, 2 միլիոն մ^3; փաստացի չափված ջրամատակարարման ծավալը 2015թ. կազմել էր 1, 28 միլիոն մ^3, իսկ փաստացի ներկայացված հաշիվը՝ 0, 3 միլիոն մ^3: Ղեկավարության պատասխանը, էջ 9:

Ղեկավարությունն իր պատասխանի մեջ բացատրում է, որ ջուրը մշտապես մտնում և դուրս է գալիս ջրամբարից, և ջրամբարից տարվա ընթացքում մատակարարվող ընդհանուր ծավալը պարտադիր չէ, որ հավասար լինի այն ընդհանուր ծավալին, որը կարող է կուտակված լինել ջրամբարում:

28. **Կարմիր գետում ջրի առկայության հաշվարկման մեթոդաբանությունը:** Ղեկավարությունը համարում է, որ Կարմիր գետում բավարար քանակի ջուր չլինելու վերաբերյալ պնդումը ճիշտ չէ; հաշվարկները, որոնք կիրառվել են ջրի բավարար լինելը պարզելու համար, "*իրատեսական են և պահպանողական:*"[11]

29. **Հանրային քննարկումներ:** Ղեկավարությունը նշում է, որ այս ծրագրի համար մշակվել է Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ (ԲՍԿՇ), որը հրապարակվել է Հայաստանում 2013թ. փետրվարին: Երևանում տեղի ունեցավ հանրային քննարկումների հանդիպում հիմնական շահառուների հետ, այդ թվում՝ կենտրոնական և տեղական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ), գիտական հաստատությունների և Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) ներկայացուցիչների հետ: Ղեկավարությունը բացատրում է, որ Գեղարդալճի ոռոգման համակարգի նախագիծը և բնապահպանական ու սոցիալական ասպեկտները քննարկելու նպատակով ազդակիր համայնքների հետ կազմակերպվել են հինգ խորհրդակցական ժողովներ:

<u>Ղեկավարության պատասխանը Քաղցրաշենի համակարգին վերաբերող երկրորդ դիմում-պահանջին</u>

30. Ղեկավարությունը նշում է, որ Քաղցրաշենի համակարգի վերաբերյալ նամակ-բողոքը ներկայացվել է Բանկին 2016թ. փետրվարի 3-ին: Բողոքը ներկայացրել է նույն անձնավորությունը, որը ներկայացրել է նաև ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջը: Ղեկավարությունը պատրաստել է առաջին նամակի պատասխանը և 2016թ. մարտի 10-ին կազմակերպել է Երևանում կլոր սեղանի քննարկումներ դիմում-պահանջը ստորագրած քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների հետ:

31. **Բնապահպանական մտահոգություններ:** Ղեկավարությունը նշում է, որ Քաղցրաշենի համակարգի նախագիծը հիմնված է Հայաստանի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի ծառայության պաշտոնական տվյալների վրա, որոնք վկայում են, որ Ազատ գետում կա բավարար քանակի ջուր՝ ոռոգման պահանջարկը և բնապահպանական պահանջները բավարարելու համար: Ղեկավարությունը նաև նշում է, որ առաջարկվող ջրառ կառույցը չի սահմանափակելու բնապահպանական թողքը: Գլխամասային հանգույցում

[12] Ղեկավարության պատասխանը, կետ 52

տեղադրվելու է ջրաչափ սարք, և Ղեկավարությունը առաջարկում է ապահովել դրա հասանելիությունը համայնքի վերահսկողության համար:

32. **Ջրամատակարարում:** Ղեկավարության Պատասխանի մեջ նշվում է, որ "*Ծրագիրը չի ազդելու Գառնի համայնքի ոռգման ջրի ջրառի վրա:*"[12] Ղեկավարությունը բացատրում է, որ շահառու համայնքներին սպասարկող պոմպակայանը և առաջարկվող գլխամասային հանգույցը գտնվում են Գառնի համայնքի ջրառի կետի ստորին բիեֆում, ուստի *"Ծրագրի և Գառնիի ոռոգման ջրի մատակարարման միջև ոչ մի կապ չկա:"* Ղեկավարությունը նշում է նաև, որ չնայած նրան, որ ջրառն իրականացվում է առաջարկվող գլխամասային հանգույցի վերին բիեֆում գտնվող կետում և այդ պատճառով Բանկի ծրագրի շրջանակից դուրս է, Բանկի թիմը դիմել է Եվրասիական զարգացման բանկից լրացուցիչ միջոցներ ստանալու միջնորդությամբ՝ Գառնի ջրանցքի վերականգնմանն օժանդակելու մտադրությամբ:

[11] Ղեկավարության պատասխանը, էջ vii

[13] Ղեկավարության պատասխանը, կետ 52

33. **Զբոսաշրջության հետ կապված մտահոգությունները:** Ղեկավարությունը նշում է, որ Ազատի կիրճը ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության պոտենցիալ օբյեկտների ցանկում նշված "Վերին Ազատի հարթավայրի" մաս չէ: ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության միակ օբյեկտը, որը գտնվում է աշխատանքների հարևանությամբ, դա Եղվարդի վանքն է՝ առաջարկված գլխամասային հանգույցից ավելի քան 10 կմ հեռավորության վրա: Ինչ վերաբերում է վիզուալ ազդեցությանը, Ղեկավարությունը նշում է, որ խողովակաշարը լինելու է փակ (ստորգետնյա), իսկ առաջարկվող ամբարտակի բարձրությունը՝ առավելագույնը երկու մետր: Ղեկավարությունը նշում է նաև, որ աշխատանքները չեն ազդելու Ազատի կիրճում գտնվող բնության չորս հուշարձանների վրա: Զբոսաշրջային գործունեությունը մոտակայքում վերաբերում է հիմնականում Գառնիի առաջին դարի հեթանոսական տաճարին, որը կիրճում չի գտնվում:

34. **Հանրային քննարկումներ:** Ծրագրի համար մշակվել և հրապարակվել էր ՇՄՍԿՇ, իսկ 2013թ. փետրվարին Երևանում կազմակերպվել էին հանրային քննարկումներ հիմնական շահառուների հետ: Առանձին ՇՄՍԿՇ-ներ մշակվեցին, հրապարակվեցին և քննարկվեցին նաև առանձին օբյեկտների համար: Գառնի համայնքի հետ կազմակերպվեցին երեք հանրային քննարկումներ Ծրագրի և ՇՄՍԿՇ-ների շուրջ, 2015թ. դեկտեմբերին տրվել էր ՇՄՍԿՇ-ի նախագծի վերջնական քննարկման հայտարարությունը: Գառնիի ցուցարարների կողմից ճանապարհի փակման պատճառով վերջնական քննարկումը չէր կարող ընթանալ, ինչպես որ պլանավորվել էր և ավարտվեց 2016թ. հունվարի 22-ին: Ղեկավարությունը նշում է, որ Ծրագրի մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվել էր Գառնի համայնքի հասարակական վայրերում, իսկ ծրագրի բոլոր տեղեկատվական նյութերը պարունակում են Ծրագրին առնչվող բողոքների լուծման/վիճելի հարցերի քննության մեխանիզմների մանրամասները:

35. Ղեկավարությունը նշում է նաև, որ 2015թ. դեկտեմբերին կազմակերպվեցին վեց ֆոկուս խմբերի մի շարք քննարկումներ (ՖԽՔ) և երեք խորացված հարցազրույցներ Գառնի համայնքի տարբեր անդամների հետ՝ նպատակ ունենալով հասկանալ "*Գառնի համայնքի ավելի լայն հանրության տեսակետները*":[13] Ղեկավարությունը նշում է, որ Գառնիի բնակիչների մի փոքր խումբ "*չափազանց ակտիվ էր*", նրանք պնդում էին, որ "*իբր գործում են մի շարք տարբեր թվով ստորագրողների անունից,*" սակայն այդ ստորագրություններով նամակները այդպես էլ չեն տրամադրվել*:* Ղեկավարությունն ավելացնում է, որ 2016թ. մարտին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակում տեղի է ունեցել հանդիպում ՔՀԿ-ների և Գառնիի բնակիչների հետ:

36. **Կառավարմանն առնչվող մտահոգությունները:** Ղեկավարությունը նշում է, որ Ծրագիրը փոխելու է նույն քանակությամբ իրականացվող ջրառի

[13] Ղեկավարության պատասխանը, կետ 64

եղանակը միայն: Էլեկտրաէներգիայի խնայողությունից օգտվելու է ամբողջ երկիրը, ոչ թե որևէ կոնկրետ անհատ: Կբարձրանա նաև ջրի հոսքի և ջրօգտագործման թափանցիկության աստիճանը, մինչդեռ կառավարման փոփոխություն չի լինելու:

E. Դիմում-պահանջի ուսումնասիրությունը Ստուգող խորհրդի կողմից, Ղեկավարության պատասխանը և դիմում-պահանջների իրավունակության ստուգման այցը

37. Ստուգող խորհրդի անդամ Ժան Մատտսսոնը և գործառնությունների պատասխանատու Բիրգիտ Քուբան գտնվում էին Հայաստանում 2016թ. հունիսի 17-21-ն ընկած ժամանակահատվածում և հանդիպել են դիմում-պահանջների հեղինակների, Գողթ և Գառնի համայնքների ազդակիր անդամների, Ֆինանսների նախարարության պաշտոնյաների, Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի և Ջրային տնտեսության Ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենի հետ: Թիմը հանդիպել է նաև Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի և կենտրոնական գրասենյակի աշխատողների հետ: Ստուգող խորհուրդը շնորհակալություն է հայտնում բոլոր վերոհիշյալ անձանց՝ իրենց կարծիքներով, տեսակետներով և տեղեկատվությամբ կիսվելու համար և հատուկ շնորհակալություն է հայտնում Համաշխարհային բանկի երևանյան գրասնեյակին՝ կազմակերպչական օժանդակության համար:

---

[14] Ղեկավարության պատասխանը, կետ 64

38. Ստուգող խորհրդի ուսումնասիրությունը հիմնված է դիմում-պահանջների,Ղեկավարության պատասխանի, այլ փաստաթղթային վկայությունների և դաշտային այցի ժամանակ հավաքագրած տեղեկատվության վրա: Հաջորդ բաժնում ներկայացվող ուսումնասիրությունը ընդգրկում է Խորհրդի կարծիքը դիմում-պահանջների իրավունակության վերաբերյալ՝ ըստ 1999 Պարզաբանման մեջ (ենթաբաժին Ե1) սահմանված չափանիշների[14] և Խորհրդի առաջարկությունները հիմնավորող այլ գործոնների դիտարկման (ենթաբաժին Ե2):

Ե.1. Իրավունակության գնահատում

39. Ստուգող խորհուրդը բավարարված է, որ երկու դիմում-պահանջն էլ համապատասխանում են իրավունակության բոլոր վեց չափանիշներին, որոնք սահմանված են 1999 Պարզաբանումների կետ 9-ում: Ստուգող խորհուրդը նշում է, որ իր կողմից իրավունակության հաստատումը, որն իրենից ներկայացնում է ստուգելի փաստերի մի շարք, որոնք մեծամասամբ կենտրոնանում են դիմում-պահանջների հեղինակների ձևակերպած բովանդակության վրա, չի պարունակում Խորհրդի՝ դիմում-պահանջներում արված հայտարարությունների գնահատական:

40. Չափանիշ (ա). "*Ազդակիր կողմը բաղկացած է ցանկացած երկու կամ ավելի անձանցից, որոնք ունեն ընդհանուր շահեր կամ մտահոգություններ և որոնք գտնվում են փոխառուի տարածքում*": Առաջին դիմում-պահանջը ներկայացվել էր Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի ազդակիր՝ Գողթ համայնքի անդամների կողմից, և ներառում է համայնքի 98 անդամի ստորագրությունները: Երկրորդ դիմում-պահանջը ներկայացրել էին տիկին Սարա Պետրոսյանը և տիկին Արուսյակ Այվազյանը՝ իրենց և Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ազդակիր Գառնի գյուղի 531 բնակչի անունից: Ստուգող խորհուրդը հաստատում է, որ դիմում-պահանջի հեղինակները բնակվում են Փոխառուի տարածքում և գնտվում են Ծրագրի գործողությունների ազդեցության տակ: Այսպիսով, Խորհուրդը համարում է, որ կետ 9 (ա)-ի պահանջը բավարարված է:

41. Չափանիշ (բ): "*Դիմում-պահանջը պնդում է, որ ըստ էության Բանկի կողմից իր գործառնական քաղաքականության և ընթացակարգերի կոպիտ խախտումը ունի կամ կարող է ունենալ էական բացասական ազդեցություն դիմում-պահանջի հեղինակի վրա*": Առաջին դիմում-պահանջի հեղինակներն անհանգստացած են նրանով, որ Ծրագիրը կարող է հանգեցնել Գողթ համայնքում ոռոգման ջրի սակավությանը և պնդում են, որ Ծրագրի հիդրոլոգիական տվյալները ճիշտ չեն: Դիմում-պահանջում նաև նշվում է համայնքի՝ հանրային քննարկումներում և Ծրագրում մասնակցության բացակայության մասին: Երկրորդ դիմում-պահանջը մտահոգություն է հայտնում ինքնահոս համակարգի համար ջրի բացակայության,

Ազատի կիրճի ոչնչացման՝ զբոսաշրջության վրա ազդեցությամբ, և հանրային քննարկումների և մասնակցության հետ կապված խնդիրների վերաբերյալ: Այսպիսով, Ստուգող խորհուրդը գտնում է, որ կետ 9 (բ)-ի պահանջը բավարարված է:

42. Չափանիշ (գ). "*Դիմում-պահանջում հայտարարվում է, որ խնդրո առարկան արդեն ներկայացվել էր Ղեկավարության ուշադրությանը, և որ՝ պահանջի հեղինակի կարծիքով, Ղեկավարությունը պատշաճ կերպով չի արձագանքել, որպեսզի ցույց տա, որ հետևել է կամ քայլեր է ձեռնարկում, որ հետևի Բանկի քաղաքականությանը և ընթացակարգերին*": Ստուգող խորհուրդը հավաստել է, որ դիմում-պահանջների հեղինակների մտահոգությունները տարբեր առիթներով ներկայացվել էին Բանկի ուշադրությանը նախքան նշված երկու դիմում-պահանջի ներկայացնելը: Պահանջների հեղինակները Գողթ համայնքից բողոք էին ներկայացրել Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ 2015թ. նոյեմբերին և ստացել ղեկավարության պատասխանը 2015թ. դեկտեմբերին, որը նրանք համարել էին ոչ բավարար: Գառնի համայնքից դիմողները նամակ էին ուղարկել Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ 2015թ. փետրվարին: 2016թ. մարտին Բանկի երևանյան գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում դիմում-պահանջների հեղինակների հետ, որտեղ բարձրացվեցին այն նույն հարցադրումները, որոնք ներկայացվել էին դիմում-պահանջներում:

---

[14] "Տնօրենների խորհրդի կողմից Ստուգող խորհրդի երկրորդ ուսումնասիրության 1999 Պարզաբանումը", ապրիլ 1999 (այսուհետ՝ "1999 Պարզաբանումներ"), հասանելի է http://siteresources.worldbank.org/EXTINSPECTIONPANEL/Resources/1999ClarificationoftheBoard.pdf

Ղեկավարության պատասխանը հաստատում է, որ Ղեկավարությունը "*տեղյակ է եղել երկու դիմում-պահանջներում արտահայտված մտահոգությունների մասին և անցած երկու տարվա ընթացքում ինտենսիվորեն քննարկել է այդ հարցերը Ծրագրի շահառուների հետ:*"[15] Ուստի, Ստուգող խորհուրդը համարում է, որ այդ չափանիշը բավարարված է:

43. Չափանիշ (դ). "*Խնդիրը կապված չէ գնումների գործընթացի հետ":* Խորհուրդը բավարարված է, որ դիմում-պահանջների պնդումները գնումներին չեն առնչվում:

44. Չափանիշ (ե): "*Առնչվող փոխառությունը չի փակվել կամ նախատեսված զգալի վճարումներ չեն կատարվել*": Առաջին դիմում-պահանջը Խորհրդի կողմից ստանալու պահին վճարված է եղել Ծրագրի շուրջ 62 տոկոսը: Երկրորդ դիմում-պահանջը ստանալու ժամանակ վճարումները կազմել էին 72 տոկոս: Այս չափանիշը, հետևաբար, բավարարված է:

45. Չափանիշ (զ): "*Ստուգող խորհուրդը նախկինում այս խնդրի վերաբերյալ առաջարկություն չէր արել, կամ՝ եթե արել էր, դիմում-պահանջում հայտարարվում է, որ հայտնվել են նոր ապացույցներ կամ հանգամանքներ, որոնք նախորդ դիմում-պահանջի ներկայացման ժամանակ հայտնի չեն եղել*": Խորհուրդը առաջին անգամ է ստացել դիմում-պահանջ այս հարցի կապակցությամբ, հետևաբար սույն չափանիշը բավարարված է:

E.2. Խորհրդի նկատառումները՝ կապված իր առաջարկությունների հետ

46. Ներկայացնելով իր առաջարկությունը Տնօրենների խորհրդին և գործելով իր Գործառնական ընթացակարգերի համաձայն, Ստուգող խորհուրդը դիտարկում է հետևյալը. արդյոք առկա է ճշմարտանման պատճառահետևանքային կապ ծրագրի և դիմում-պահանջում նշվածի միջև; արդյոք ենթադրյալ վնասը և Բանկի՝ իր գործառնական քաղաքականության և ընթացակարգերի կատարման հնարավոր թերացումը կարող են կրել լուրջ բնույթ; և արդյոք Ղեկավարությունը պատշաճ ձևով զբաղվել է այդ հարցերով կամ խոստովանել է անհամապատասխանությունը և ներկայացրել շտկող միջոցառումներ՝ Պահանջների հեղինակների հարցադրումներին անդրադառնալու նպատակով: Ստուգող խորհուրդը ներկայացնում է ստորև իր նախնական դիտարկումները ենթադրյալ վնասի և պահանջների կատարման վերաբերյալ և նշում է, որ անելով դա, չի տալիս որևէ վճռորոշ գնահատական Բանկի կողմից իր քաղաքականության կամ ընթացակարգերի կատարման և դրանով պայմանավորված որևէ լուրջ բացասական ազդեցության վերաբերյալ:

47. Ստուգող խորհուրդն ընդունում է, որ գյուղատնտեսությունը և գյուղական զարգացումն ունեն առանցքային դեր Հայաստանի տնտեսական դիվերսիֆիկացման,

աշխատատեղերի ստեղծման և աղքատության հաղթահարման[16] համար և որ ոռոգումն ու ջրի կառավարումը կարևոր են երկրի զարգացման համար: Ստուգող խորհուրդը հասկանում է, որ արդեն երկու տասնամյակ է, որ Համաշխարհային բանկը ներառված է Հայաստանի ոռոգման ոլորտում: Բանկի ղեկավարությունը տեղեկացրել է Ստուգող խորհրդին, որ այս կոկրետ դեպքում Ծրագրի թիմը տեղյակ է եղել համայնքների մտահոգությունների մասին և ակտիվորեն աշխատել է նրանց հետ՝ երկու բողոքում արտահայտված խնդիրների լուծման ուղղությամբ:

48. Դիմում-պահանջների իրավունակության ստուգման նպատակ հետապնդող այցի ժամանակ Ստուգող խորհրդի թիմն այցելեց Գեղարդալճի և Քաղցրաշենի ոռոգման համակարգերի տարածքները և հանդիպեց շահառուների տարբեր խմբերի հետ, այդ թվում՝ ազդակիր Գողթ և Գառնի համայնքների անդամների հետ: Ստորև նկարագրված են Խորհրդի՝ Ծրագրի հնարավոր ազդեցության և ենթադրյալ վնասի վերաբերյալ դաշտային դիտարկումները:

[15] Ղեկավարության պատասխանը, էջ viii:
[16] ԾԳՓ-ում (PAD) նշված է, որ ոռոգվող գյուղատնտեսությունը կարևոր է գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների համար, քանի որ այն կազմում է ՀՆԱ-ի մեջ ոլորտի մասնաբաժնի 80 տոկոսը: ԾԳՓ, էջ 10:

Առաջին բաժինը վերաբերում է Գողթ համայնքի մտահոգություններին, իսկ երկրորդը՝ Գառնի համայնքի:

Գեղարդալճի համակարգին վերաբերող դիտարկումներ

49. Գողթ գյուղի բնակիչները տեղեկացրեցին Ստուգող խորհրդին այն վնասի մասին, որը նրանք ակնկալում են Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի իրականացման հետևանքով: Դիմում-պահանջի հեղինակները կարծում են, որ Համաշխարհային բանկը համարժեքորեն չի գնահատել Ծրագրի փաստացի ազդեցությունը: Ըստ նրանց, Ծրագիրը ջուր է տալու մյուս համայնքներին Գողթ համայնքի հաշվին: Նրանք պնդում են, որ Ծրագիրը կվատթարացնի նրանց արդեն իսկ բարդ վիճակը, ինչպես նկարագրված է ստորև: Պահանջի հեղինակները պնդում են նաև, որ նրանց համայնքը պատշաճ կերպով չի ներառվել հանրային քննարկումների մեջ և նրանց կարծիքը հաշվի չի առնվել:

50. **Ապրուստը:** Դիմում-պահանջների հեղինակները բացատրեցին Ստուգող խորհրդին, որ Գողթ համայնքի անդամների ապրուստը կախված է ջրից: Գյուղացիների մեծամանությունը հողագործներ են, ովքեր աճեցնում են ծիրան, կեռաս, լոլիկ և այլ մրգեր ու բանջարեղեն, և ոմանք վաճառում են իրենց արտադրանքը Երևանում: Ըստ նրանց, համայնքն ունի լրացուցիչ դաշտեր, որտեղ կարելի է տնկել ծառեր, բայց ջուրը բավարար չէ գոյություն ունեցող տնկարկների համար: Խորհրդի թիմին ասեցին, որ այդ ծառերը պետք է ջրվեն տարին վեց անգամ՝ սկսելով ուշ գարնանը մինչև ուշ ամառ, որպեսզի ծառերն այնպիսի բերք տան, որը հնարավոր կլինի վաճառել շուկայում:

51. **Ջրի մատակարարումը:** Դիմում-պահանջի հեղինակներն ասացին Խորհրդին, որ պատմականորեն Գեղարդալճի ջրամբարը պատկանում էր Գեղարդի վանքին: 17-րդ դարում այն ավերվել էր երկրաշարժից և վերակառուցվել 1963թ: Կառուցվելու պահից ի վեր ջրամբարից ոռոգվում էին միայն Գողթ համայնքի վարելահողերը, և դիմում-պահանջի հեղինակները կարծում են, թե նրանց համայնքը պետք է հաստատի ջրամբարին առնչվող բոլոր փոփոխությունները: Ըստ հեղինակների, ջրամբարի տարողությունն այժմ կազմում է 2, 4 միլիոն մ^3, և համայնքի և իրականացնող գործակալության միջև կա բանավոր համաձայնություն, որ այս նույն ծավալը կպահպանվի Գողթ համայնքի համար: Սակայն, դիմում-պահանջի հեղինակները պնդում են, որ այդ ծավալը բավարար չէ այժմ ոռոգվող 530 հեկտարի համար: Ծրագրով նախատեսված է, որ պատվարի բարձրությունը 1, 6 մետրով բարձրացնելուց, ջրամբարի տարողությունը 1 միլիոն մ^3-ով՝ մինչև 3, 4 միլիոն մ^3 ավելացնելուց և ջրամբարի նորոգման աշխատանքներն իրականացնելուց հետո, կոռոգվի այլ համայնքների լրացուցիչ ավելի քան 700 հա հող: Ըստ դիմում-պահանջների հեղինակների, Ծրագիրը հաշվարկել է, որ կստանա այդ լրացուցիչ 1 միլիոն մ^3 ջուրը Կարմիր գետից՝ ձնհալի արդյունքում, որը՝ ըստ հեղինակների, չի կարող երաշխավորվել: Նրանք պնդում են, որ Կարմիր գետի ջրի հոսքի վերաբերյալ

Ծրագրի տվյալները ճիշտ չեն:

52. Ստուգող խորհրդի թիմը տեղեկացվել էր տարբեր շահառուների կողմից, որ այս տարին ջրառատ տարի է: Ըստ Գողթ համայնքի անդամների, չորս տարի առաջ ջուրը գետերում շատ ավելի քիչ էր; 2010թ. և 2012թ. ջրի ծավալը կազմել էր այս տարվա ծավալի մեկ երրորդը: Խորհրդի թիմին ասացին, որ Կարմիր գետում ջուր է լինում միայն մայիսի 20-ից մինչև հունիսի 10-ը, իսկ մնացած ժամանակ գետը ամբողջությամբ չոր է: Դիմում-պահանջների հեղինակները տեղեկացրել են նաև թիմին, որ արտահոսքի պատճառով համակարգում կան ջրի մեծ կորուստներ: Խորհրդի անդամները նույպես կարող էին տեսնել, որ Կարմիր գետից Գեղարդալճի ջրամբար տանող ջրանցքը մասամբ բաց է; համայնքն ասում է, որ գարնանը ստիպված են բահով հեռացնել ձյունն ու սառույցը ջրանցքից, որպեսզի ջուրը կարողանա հոսել դեպի ջրամբար:

53. **Հանրային քննարկումներ և մասնակցություն:** Դիմում-պահանջի հեղինակները նաև պնդում էին, որ Ծրագրի թիմի վերաբերմունքն իրենց համայնքի նկատմամբ ի սկզբանե *“ոչ ադեկվատ”* է եղել: Ըստ համայնքի անդամների, հանդիպումները պատշաճորեն չէին հայտարարվում, ինչը անհնարին էր դարձնում բոլոր հետաքրքրված անձանց մասնակցությունը: Թեև այդ ժողովներին մասնակցողները կտրականապես դեմ էին Ծրագրին, նրանց դիրքորոշումը հաշվի չէր առնվել և Ծրագրի իրականացումը շարունակվել էր: Ստուգող խորհրդի թիմին ասացին, որ ժողովները մակերեսային էին և ոչ իմաստալից: Համայնքի անդամները նաև բողոքում էին, որ ժողովներն իրենց համայնքում չէին ներգրավում որոշում կայացնողներին: Դիմում-պահանջի հեղինակները բացատրեցին Խորհրդի թիմին, որ 2016թ. հունիսի 3-ին փակել էին դեպի Գեղարդ տանող ճանապարհը, որովհետև չեն ստացել իրենց բողոքների համարժեք պատասխանը:

54. **Համայնքի առաջարկությունները:** Դիմողները շեշտեցին, որ նրանց անհանգստացնում է ոչ միայն իրենց համայնքը և որ նրանք ուզում են գտնել այնպիսի լուծում, որը օգտակար կլինի նաև մյուս համայնքների համար: Նրանք պնդում են, որ Ծրագիրն իր ներկայիս տեսքով չպետք է իրականացվի և առաջարկում են միացնել Գիլանլար գետը ջրամբարին և կառուցել երկրորդ ջրամբար, որը գոյություն ունեցող Գեղարդալճի ջրամբարի հետ միասին կկարողանա կուտակել զգալիորեն ավելի շատ ջուր: Դիմում-պահանջի հեղինակները կարծում են, որ դա կմեղմի ազդակիր համայնքների անհանգստությունը: Համայնքի անդամներն ասացին Խորհրդին, որ չնայած ավելի վաղ տրված խոստումներին, Խորհրդի թիմի այցի ժամանակ նրանք տեղեկացան, որ երկրորդ ջրամբարը չի կառուցվելու: Դիմում-պահանջի հեղինակները բացատրեցին, որ Ծրագիրը պետք է կառուցի առնվազն մի հեղեղատար դեպի համայնքը՝ ջրառատ ժամանակ սելավաջրերն օգտագործելու համար: Համայնքն արտահայտեց իր մտահոգությունը, որ մինչ օրս լուծում չի գտնվել: Գեղարդալճի տարածքի բարձրության պատճառով շինարարական աշխատանքները հնարավոր է իրականացնել միայն ամռանը, ինչը նշանակում է, որ աշխատանքները հարկավոր է սկսել շուտով, եթե ծրագիրը պետք է իրականացվի այս տարի:

55. Ստուգող խորհրդի այցի ժամանակ Բանկի ծրագրի թիմը կրկին շեշտեց, որ Կարմիր գետում ջրի հոսքը հաշվարկելու համար Ծրագիրը կիրառել է պահպանողական մոտեցում և պնդում է, որ Ծրագիրը կենսունակ է: Բանկի թիմը նաև բացատրեց, որ Ծրագրի նախագիծը նախատեսված չէր ոռոգման բոլոր փոփոխություններն ուսումնասիրելու համար, քանի որ Ծրագիրն ուղղված է ոչ թե հասանելիության ապահովմանը, այլ էլեկտրաէներգիայի անհրաժեշտության կրճատման համար: Ծրագրի թիմը նաև տեղեկացրեց Խորհրդին, որ Բանկն աշխատում է Ծրագրի իրականացման գրասենյակի հետ, որպեսզի գտնի ուղիներ՝ չափազանց տեխնիկական տեղեկատվությունն ավելի արդյունավետ կերպով հաղորդելու համար: Համաշխարհային բանկը աշխատում է նաև ոռոգման և

ջրամատակարարման կառավարման հարցերով ազգային երկխոսություն սկսելու ուղղությամբ:

56. Ստուգող խորհուրդը գիտի, որ Ծրագրի շինարարական աշխատանքները դադարեցվել են 2016թ. հունիսի 3-ին համայնքի կողմից կազմակերպված բողոքի ցույցերից հետո: Ջրային տնտեսության պետական կոմիտեի 2016թ. հունիսի 23-ի մամլո հաղորդագրության համաձայան, Կոմիտեն առաջարկում է կառուցել լրացուցիչ ջրանցք, որը Գիլանլար գետը կմիացնի Գեղարդալճի ջրամբարին: Մամլո հաղորդագրության մեջ ասվում է, որ լրացուցիչ ջուրը կապահովի Գողթ համայնքի մատակարարումը ողջ ոռոգման շրջանի ընթացքում, այդ թվում՝ չորային տարիների ժամանակ:

<u>Քաղցրաշենի համակարգին վերաբերող դիտարկումներ</u>

57. Գառնի գյուղի համայնքի անդամները նշում են, որ Ծրագիրը կհանգեցնի Ազատ գետի ցամաքելուն՝ ունենալով լուրջ ազդեցություն շրջակա միջավայրի, գյուղատնտեսության և զբոսաշրջության վրա: Դիմում-պահանջի հեղինակները բողոքում էին նաև Ծրագրի հանրային քննարկումների գործընթացից:

58. **Ջրամատակարարում:** Համայնքի անդամները հայտնեցին Խորհրդի թիմին, որ անցյալում իրենց համայնքն ապահովում էր մրգով ամբողջ Հայաստանը, բայց այլևս չի կարող անել դա ոռոգման ջրի սակավության պատճառով: Նրանք ասացին, որ ջրի մակարդակը Ազատ գետում ցածր է եղել վերջին յոթ-ութ տարվա ընթացքում: Համայնքի անդամները կազմակերպեցին ջրի մակարդակների չափումներ, որոնք՝ իրենց պնդմամբ, ցույց տվեցին, որ ամռան ամիսներին բավարար քանակի ջուր չկա: Ըստ դիմում-պահանջի հեղինակների, Ծրագիրը սպառնում է Ազատ գետի գոյությանը: Թեև Գառնի համայնքը ստանում է իր ոռոգման ջուրը Ծրագրի աշխատանքների տարածքի վերին բիեֆում, համայնքը վախենում է, որ Ծրագրի հետագա միջամտությունները կշարունակվեն հոսանքն ի վեր, ինչն անուղղակիորեն կազդի նրանց ջրամատակարարման վրա: Համայնքի անդամները բացատրեցին, որ Գառնիի գյուղատնտեսական հողերի 100 հեկտարն արդեն դարձել է խոպան; գյուղացիները հողի հարկ են վճարում, բայց չեն կարող միրգ աճեցնել ջրի պակասության պատճառով, և մարդիկ ստիպված են արտագաղթել տեղում հնարավորությունների բացակայության պատճառով:

59. **Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:** Համայնքի անդամներն ասացին Խորհրդին, որ Ծրագրի իրականացման արդյունքում Ազատ գետը կչորանա՝ կիրճը վերացնելով անապատի: Արդյունքում կստեղծվի էկոլոգիական անհավասարակշռություն՝ վտանգելով բնաշխարհը և ավելի գրավիչ դարձնելով տարածքը օձերի համար: Նրանք վախենում են նաև, որ այդ տարածքում կմեծանա մալարիայի սպառնալիքը, եթե Ազատի ջրամբարում լինի ավելի շատ կանգնած ջուր:

60. **Մշակութային ժառանգություն:** Համայնքի անդամները շեշտեցին Գառնիի կարևորությունը Հայաստանի զբոսաշրջության համար: Նրանք բացատրեցին, որ բազմաթիվ զբոսաշրջիկներ գալիս են, որպեսզի տեսնեն հելենիստական Գառնիի տաճարը և Ազատի կիրճը: Պահանջի հեղինակները վախենում են, որ Ծրագիրը կոչնչացնի բնությունը և բնապատկերը տաճարի շուրջ՝ պակասացնելով Գառնիի գրավչությունը զբոսաշրջության համար:

61. **Հանրային քննարկումներ և մասնակցություն:** Ըստ դիմում-պահանջի հեղինակների, տեղի է ունեցել 11 հանդիպում համայնքի հետ, այդ թվում՝ մի քանիսը Համաշխարհային բանկի հետ, բայց նրանք դեռ պնդում են, որ համայնքի մտահոգությունները հաշվի չեն առնվել: Համայնքի անդամները պատմեցին Խորհրդի թիմին մի դեպքի մասին, երբ գյուղի հրապարակում հավաքվել էին մարդիկ, ովքեր բողոքում էին Ծրագրի դեմ, որովհետև տեղական կառավարման մարմինը ստիպել էր ուսուցիչներին հավաքվել մի փոքր դահլիճում և ստորագրել մի փաստաթուղթ Ծրագրին համաձայն լինելու վերաբերյալ: Համայնքի անդամները հայտնեցին նաև իրենց կասկածները Ծրագրի շուրջ կոռուպցիայի վերաբերյալ և տեղեկացրեցին Խորհրդին այն դեպքերի մասին, երբ համայնքի անդամները զգացել էին ահաբեկման

կամ սպառնալիք:

62. Խորհրդի այցի ժամանակ Բանկի թիմը կրկին շեշտեց, որ Ծրագիրը չի ազդելու Գառնի համայնքի ոռոգման ջրի մատակարարման վրա և ազդեցություն չի ունենալու Ազատ գետի բնապահպանական թողքի վրա: Բանկի թիմը նաև բացատրեց, որ Ծրագիրն ապահովում է ավելի մեծ թափանցիկություն և ներդնում է մոնիտորինգի սարքեր, որոնք համայնքների համար հասանելի են լինելու:

63. Խորհուրդը տեղեկացավ, որ Ծրագրի իրականացումը դադարեցվել է 2016թ. մայիսի վերջին համայնքի կազմակերպած բողոքի ցույցից հետո: Ըստ դիմում-պահանջի հեղինակների, շինարարական մեխանիզմները հանվել են կիրճից: Խորհրդին ասացին, որ շինարարությունը վերսկսելու դեպքում համայնքը կշարունակի փակել ճանապարհը և դադարեցնել ջրի մատակարարումը:

64. Ջրային տնտեսության պետական կոմիտեի 2016թ. հունիսի 23-ի մամլո հաղորդագրության համաձայն, Կոմիտեն առաջարկում է տեղափոխել ջրառի կետը Ազատ գետի ստորին հոսանքով 5, 2 կիլոմետր հեռավորության վրա՝ Գեղադիր-Հացավան պոմպակայանին մոտ: Այս քայլը կկանխի շինարարության իրականացումը հանգստյան գոտում: Խորհրդին ասվեց, որ նոր վայրում ռելիեֆի տարբեր բարձրությունների պատճառով ինքնահոս ոռոգումը բավարար չի լինելու և կառաջանա մեխանիկական ոռոգման անհրաժեշտություն:

E.3. Խորհրդի ուսումնասիրությունը

65. Խորհուրդը ողջունում է Բանկի և իրականացնող գործակալության հանձնառության բարձր մակարդակը՝ համայնքի հետ սերտ աշխատանքը շարունակելու ուղղությամբ՝ բարելավելով տեխնիկական տեղեկատվության հաղորդման եղանակը և գտնելով այնպիսի լուծում, որն ընդունելի կլինի բոլոր շահառուների համար:

66. Խորհուրդն ընդունում է նաև երկու համայնքից դիմում-պահանջների հեղինակների վճռական նվիրվածությունը սեփական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև այլընտրանքային լուծումների նրանց առաջարկները, որոնցից մի քանիսը, ինչպես նրանք պնդում են, կլավացնեն նաև մյուս համայնքների ջրամատակարարումը: Դժբախտաբար, դիրքերն այս փուլում, կարծես, արմատացած են և բևեռացված, ինչն ավելի է խորացնում պատմությունից եկող անվստահությունը:

67. 2016թ. հունիսի 23-ին դիմում-պահանջների իրավունակությունը ստուգելու նպատակով Խորհրդի այցից կարճ ժամանակ անց Ջրային տնտեսության պետական կոմիտեն թողարկեց մամլո հաղորդագրություն՝ առաջարկելով Ծրագրի

փոփոխություններ, ինչպես նկարագրված է կետ 56-ում և կետ 64-ում: 2016թ. հուլիսի 5-ին Բանկի ղեկավարությունը տրամադրեց Խորհրդին մի փաստաթուղթ, որը կոչվում է *Հայաստանի կառավարության Որոշման թարմացում* և կցված է այս հաշվետվությանը որպես Հավելված IV: Ղեկավարությունը բացատրում է, որ Հայաստանի կառավարությունը որոշել է "*զգալիորեն փոխել*"[17] երկու ոռոգման համակարգերի նախագիծը, ինչը պահանջում է, որ Բանկը կրկին գնահատի այդ նախագծերը տեխնիկական և տնտեսական կենսունակության և հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցության տեսանկյունից: Դրանից հետո Բանկը կմտածի, կարող է արդյոք նոր նախագիծը ֆինանսավորվել Ծրագրի շրջանակներում: Ղեկավարությունը նշում է, որ "*երկու համակարգերի նոր նախագծերը, ինչպես որոշել է կառավարությունը, կլուծեն ուսումնասիրություն իրականացնելու պահանջում արտահայտված մտահոգությունները*":

68. Ինչ վերաբերում է Գեղարդալճի համակարգին, կառավարությունը որոշել է ընդունել դիմում-պահանջի հեղինակների առաջարկներից մեկը և կառուցել լրացուցիչ ջրանցք՝ ջրամբար մտնող ջրի հոսքն ավելացնելու նպատակով: Ղեկավարությունը բացատրում է, որ տեխնիկական տեսանկյունից դրա կարիքը չկա, բայց այդ ջրանցքը կլինի ջրի լրացուցիչ աղբյուր ջրամբարի համար՝ էլ ավելի կրճատելով շահառու համայնքների ռիսկերը երաշտի ժամանակ:

69. Ինչ վերաբերում է Քաղցրաշենի համակարգին, ապա կառավարությունը որոշել է չկառուցել նոր գլխամասային հանգույցն Ազատ գետի վրա, փոխարենն օգտագործելով ստորին բիեֆում՝ 5 կմ հեռավորության վրա գտնվող գործող կառույցը: Ղեկավարությունը նշում է, որ բարձրությունը կորցնելու պատճառով համակարգը՝ համայնքները ոռոգման ջրով ապահովելու համար, կշարունակի կախված լինել էլեկտրաէներգիայից: Բանկի թիմի կատարված նախնական վերլուծությունը ցույց տվեց, որ համակարգը, այնուամենայնիվ, կունենա դրական շահութաբերության նորմ: Ղեկավարությունը նշում է, որ փոխզիջումային նախագիծը կարող է լինել իրագործելի և կենսունակ, բայց *"կզիջի"* սկզբնական նախագծին:

70. Համաձայն նորացված Որոշման, Բանկի հաջորդ քայլերը նախատեսում են խորհրդատուների մոբիլիզացում ծրագրի տարածք 2016թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում՝ տեխնիկական մանրամասների ըմբռնումը թիմի կողմից հաստատելու համար: Ղեկավարությունն ակնկալում է, որ տեխնիկական մանրամասները պատրաստ կլինեն Բանկի դիտարկման համար մինչև 2016թ. սեպտեմբեր-հոկտեմբերը: Բանկը պլանավորում է կրկնակի գնահատման առաքելությունն իրականացնել 2016թ. հոկտեմբեր/նոյեմբերին,

[17] Ղեկավարությունը նշում է, որ նախագծի փոփոխությունները քննարկվել են և ընդունվել ավագանիների կողմից:

որի ընթացքում “*կլինեն շարունակական քննարկումներ ազդակիր համայնքների և շահառուների հետ փոխզիջումային լուծումների շուրջ*”: Ղեկավարությունը բացատրում է, որ կարելի է սահմանել հաջորդ գործողությունները, որոնք կապահովեն առաջարկվող լուծումների կայունությունը և այդ գործողությունների մոնիտորինգի մեջ համայնքի մասնակցությունը: Ղեկավարությունն ակնկալում է, որ ծրագրի վերագնահատումը և վերակառուցումը հնարավոր է ավարտել մինչև 2017թ. ապրիլը, եթե Բանկը որոշի, որ նոր նախագծերը կարող են ֆինանսավորվել Ծրագրի շրջակներում:

71. Ստուգող խորհուրդն ընդունում է Հայաստանի կառավարության և Բանկի ղեկավարության հանձնառությունը և գործադրվող ջանքերը՝ ուղղված երկու դիմում-պահանջում բարձրացված մտահոգությունների լուծմանը: Խորհուրդն ուզում է շեշտել ազդակիր համայնքների հետ շարունակական իմաստալից քննարկումների կարևորությունը առաջիկա ամիսներին իրականացվելիք վերակազմավորման գործընթացում:

F. Առաջարկություն

72. Դիմում-պահանջները և նրանց հեղինակները համապատասխանում են իրավունակության չափանիշներին, որոնք սահմանված են Ստուգող խորհրդի ստեղծման Որոշման և 1999 Պարզաբանման դրույթներում: Դրանից բացի, հենվելով նաև վերոհիշյալ դիտարկումների վրա, Խորհուրդը հաստատել է հնարավոր կապի գոյությունը Պահանջներում նշված վնասի և Ծրագրի միջև՝ ինչպես պահանջվում է Խորհդրի Գործառնական ընթացակարգերով: Միևնույն ժամանակ, առաջարկվող վերանախագծումը հնարավորություն է տալիս անդրադառնալ դիմողների մտահոգություններին և դրանով իսկ խուսափել հնարավոր ենթադրյալ վնասներից:

73. Դիմողների մտահոգությունների լուծման նպատակով ծրագրի վերակազմավորմանն ուղղված Հայաստանի կառավարության և Բանկի ղեկավարության վերջին ջանքերի լույսի ներքո, Խորհուրդը հետաձգում է իր կարծիքի տրամադրումը՝ հետաքննությունն արդարացված կամ ոչ արդարացված համարելու վերաբերյալ: Խորհուրդը կրկին կգնահատի իրավիճակը, երբ տեղի կունենան հետագա զարգացումները, և կներկայացնի Տնօրենների խորհրդին իր առաջարկությունը 12 ամիսը չգերազանցող ժամկետում: Այդ ընթացքում Խորհուրդն ակնկալում է, որ Ղեկավարությունը կանոնավոր կերպով կտեղեկացնի նրան նոր սխեմաների գնահատման և Ծրագրի վերակազմավորման հետ կապված զարգացումների մասին:

Հավելված IV

Ղեկավարության նորացված տվյալները Հայաստանի կառավարության Որոշման վերաբերյալ

Հուլիսի 5, 2016թ.

Հայաստանի Ոռոգման համակարգի բարելավման
ծրագիր
Նորացված տվյալներ Հայաստանի կառավարության
Որոշման վերաբերյալ

Նախադրյալները

1. ***Հայաստանի կառավարությունը տեղեկացրել է Բանկի ղեկավարությանը, որ որոշել է զգալիորեն փոխել ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջների առարկա հանդիսացող երկու սխեմաների նախագծերը:*** Ելնելով առաջարկվող նախագծային փոփոխություններից, Բանկին անհրաժեշտ կլինի կրկին գնահատել այդ երկու սխեմաները տեխնիկական և տնտեսական կենսունակության, ինչպես նաև հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների տեսանկյունից, որոնք կարող են առաջանալ նախագծային փոփոխությունների արդյունքում: Հիմնվելով նոր գնահատման վրա, Բանկը պետք է որոշի, արդյոք նոր նախագիծը կարող է ֆինանսավորվել Ծրագրի շրջանակներում: Նոր նախագծի համար ամեն դեպքում պահանջվում է ծրագրի վերակառուցում:

2. 2016թ. մայիսի 21-ին Վարչապետի՝ Գառնի այցից հետո բոլոր աշխատանքները (որոնք ընդամենը սկզբնական փուլում էին) ժամանակավորապես դադարեցվեցին: Կառավարությունն ուսումնասիրեց Քաղցրաշենի և Գեղրդալճի համակարգերի հնարավոր փոխզիջումային տարբերակները, որոնք կարող են լուծել համայնքների մտահոգությունները: Համայնքների անդամների հետ քննարկումներից հետո փոխզիջումային տարբերակները ընտրվեցին երկու համակարգի համար, և 2016թ. հունիսի 23-ին կառավարությունը հրապարակեց համապատասխան մամլո հաղորդագրությունը:[1] Շինարարական աշխատանքները վերսկսվել են երկու ենթածրագրերի այն հատվածներում միայն, որտեղ հակասություններ չեն եղել:

3. Ղեկավարությունը նշում է, որ կառավարության կողմից որոշված երկու համակարգերի վերանախագծումը կարող է լուծել ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջներում արտահայտված մտահոգությունները: Ղեկավարությունը նաև նշում է, որ չնայած նրան, որ Բանկի թիմը դիտարկել է նմանատիպ առաջարկվող նախագծային փոփոխությունները ծրագրի նախապատրաստման ընթացքում, այն ժամանակ տեղին չէր ուսումնասիրել դրանք որպես “այլընտրանքային տարբերակներ”, քանի որ այդ տարբերակները չէին համապատասխանի ծրագրի սկզբնական նպատակին, այն է՝ ապահովել ինքնահոս ոռոգում:

4. Քաղցրաշենի համակարգը համայնքի առաջնորդների հետ քննարկելուց հետո կառավարությունը որոշեց չկառուցել նոր գլխամասային հանգույցն Ազատ գետի վրա, որը նախատեսված էր ոռոգման ջուրն ինքնահոս եղանակով տեղափոխելու համար: Որպես փոխզիջումային տարբերակ կօգտագործվի գոյություն ունեցող հանգույցը, որը գտնվում է սկզբնական առաջարկված կետի ստորին բիեֆում՝ 5 կմ հեռավորության վրա: Սակայն, քանի որ ջրառի նոր առաջարկվող կետը գտնվում է ավելի ցածր բարձրության վրա, անհրաժեշտ կլինի տեղադրել նոր պոմպեր, որոնք պետք է ապահովեն անհրաժեշտ ճնշում՝ նախատեսված համակարգի աշխատանքն ապահովելու համար: Այսպիսով, շահառու համայնքներին ջուր հասցնելու համար, կպահպանվի համակարգի կախվածությունը էլեկտրաէներգիայից: Էլեկտրաէներգիայի սպառումը, հավանաբար, կլինի ավելի փոքր, քան “առանց ծրագրի” սցենարի դեպքում, իսկ թիմի նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգն այս դեպքում էլ կարող է ապահովել տնտեսական շահութաբերության դրական նորմը:[2] Սա պայմանավորված է հաշվարկված գյուղատնտեսական օգուտներով, որոնք մնում են անփոփոխ՝ ի հավելումն գլխամասային հանգույցը չկառուցելու հաշվին առաջացող խնայողություններին: Լրացուցիչ պոմպերի վերաբերյալ մանրամասն փաստաթղթերը պատրաստվում են: Մինչ այդ, աշխատանքները վերսկսվել են ոռոգման խողովակաշարի մնացած հատվածի վրա, որը չի հանդիսանում որևէ հակասության առարկա և որը շահագործվելու է ջրառ կառուցվածքի դիրքից և տեխնոլոգիայից անկախ:

---

[1] Նախագծի առաջարկվող փոփոխություններն ուղարկվել են Կոտայքի մարզպետարան և Գառնի ու Գողթ համայնքներին, որտեղ առաջարկները քննարկվել և ընդունվել են ավագանիների կողմից: Մամլո հաղորդագրության թողարկումից հետո կազմակերպվեցին հանդիպումներ համայնքների ակտիվիստների հետ; մասնավորապես, այցեր և քննարկումներ Գողթ համայնքի ակտիվիստների հետ տեղի ունեցան Գեղարդալճի ջրամբարի տարածքում: Հանդիպմանը ներկա էին ԾԻԳ-ի համապատասխան մասնագետները, Գողթի գյուղապետը, Սևան-Հրազդանյան Ջրառից Գեղարդալճի ջրամբարի համար պատասխանատու աշխատողը:

[2] Ըստ նախնական հաշվարկների, այդ փոխզիջումային լուծման դեպքում տարեկան էլեկտրաէներգիայի սպառումը կկազմի շուրջ 4 միլիոն Կվտ/ժ:

5. Կարևոր է նշել, որ փոխզիջումային նախագիծը զգալիորեն տարբերվում է այն տարբերակից, որն ի սկզբանե նպատակ է ունեցել ընդհանրապես վերացնել էլեկտրաէներգիայի սպառումը ֆերմերներին ոռոգման ջրով ապահովելու ճանապարհին: Ղեկավարությունը նշում է, որ չնայած նրան, որ նման փոխզիջումային նախագիծը կարող է լինել իրագործելի և կենսունակ, գերադասելին մնում է սկզբնական նախագիծը: Սակայն, Ղեկավարությունը նշում է կառավարության ցանկությունը՝ լուծել ենթադրյալ ազդեցությունների խնդիրը (օրինակ, բնապահպանական մտահոգությունները, Գառնիի ջրամատակարարումը և զբոսաշրջությունը) առաջարկվող գլխամասային հանգույցը չկառուցելու միջոցով:

Գեղարդալճի համակարգ

6. Ինչ վերաբերում է Գեղարդալճի համակարգին, կառավարությունը որոշել է ներառել աշխատանքներում լրացուցիչ դոտացիոն ջրանցք (Գիլանլար)՝ Գեղարդալճի ջրամբար մտնող հոսքերը համալրելու նպատակով: Սա ի սկզբանե դիմում-պահանջի հեղինակների առաջարկն է եղել: Այս դոտացիոն ջրանցքը կհավաքեր մոտակա լեռնագոգից թափվող սեզոնային ջրերը և կուղղեր դրանք դեպի ջրամբար: Թեև դրա կարիքը չկա տեխնիկական տեսանկյունից, քանի որ առկա ջրի քանակը բավարար է երկու համայնքի պահանջարկն ապահովելու համար, այս լրացուցիչ ջրանցքը կհանդիսանա ջրի լրացուցիչ աղբյուր ջրամբարի համար և դրանով իսկ էլ ավելի կնվազեցնի երաշտային ժամանակաշրջանի հետ կապված ռիսկերը ջրամբարի բոլոր շահառուների համար: Ղեկավարությունը նշում է, որ դոտացիոն ջրանցքն իրենից ներկայացնում է լրացուցիչ ենթակառուցվածք, որի հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները պետք է ուսումնասիրվեն Բնապահպանական գնահատման կազմում: Աշխատանքները վերսկսվել են համակարգի մնացած մասում, որտեղ հակասություններ չկան:

Հաջորդ քայլերը

7. ***Երկու համակարգերի վերոհիշյալ փոփոխությունների արդյունքում ստեղծվում է մի նախագիծ, որը տարբերվում է Բանկի սկզբնապես գնահատված նախագծից:*** Որպես այդպիսին, համակարգերը պետք է կրկին գնահատվեն. եթե որոշվի, որ դրանք կարող են ֆինանսավորվել ծրագրի շրջանակներում տեխնիկական, տնտեսական, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից, ապա ծրագրի վերակառուցման անհրաժեշտություն կառաջանա: Քաղցրաշենի համակարգի դեպքում հարկավոր կլինի նորացնել էլեկտրաէներգիայի խնայողության գծով Ծրագրի թիրախները, հաշվի առնելով, որ սկզբնական թիրախներն այլևս չեն կարող իրականացվել: Ավելին, հարկավոր կլինի ավելացնել պոմպերի (որոնք նախկինում նախագծում ընդգրկված չեն եղել) գնումը և անցկացնել մրցույթ: Ինչ վերաբերում է Գեղարդալճի համակարգին, առաջարկվող Գիլանլարի ջրանցքի մանրամասն նախագծերը և վերլուծությունը գտնվում են պատրաստման փուլում և պետք է ուսումնասիրվեն Բանկի կողմից, այդ թվում՝ կատարվի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման թարմացում,

որը պետք է ներառի ջրանցքի և դրա շինարարության հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները:

8. Առաջիկա ամիսներին (հուլիս/օգոստոս, 2016թ.) խորհրդատուները կմոբիլիզացնեն իրենց աշխատանքն օբյեկտներում, որպեսզի հաստատեն թիմի՝ տեխնիկական մանրամասների ընկալումը: Այդ ժամանակահատվածի ընթացքում անհրաժեշտ կլինի հավաքել և վերլուծել բազմազան տեղեկատվություն (օր., հողի կադաստր, պոմպերի մանրամասն գնահատում և տեղեկատվություն ծախսերի մասին, հիդրոլոգիական տեղեկատվություն): Բանկի Ղեկավարությունն ակնկալում է, որ մինչև 2016թ. սեպտեմբեր/հոկտեմբերը բոլոր տեխնիկական մանրամասները կլինեն պատրաստ և հասանելի Բանկի ուսումնասիրության համար: Վերահսկողության առաքելությունը, որի այցը պլանավորված է 2016թ. հոկտեմբեր/նոյեմբերին, կիրականացնի այդ նոր սխեմաների կրկնակի գնահատումը, ինչը պետք է փաստաթղթավորվի: Այս վերագնահատումը կներառի նաև շարունակական քննարկումներ ազդակիր համայնքների և շահառուների հետ փոխզիջումային լուծումների շուրջ: Այդ առաքելության ընթացքում հնարավոր կլինի նույնականացնել հետագա գործողությունները՝ լուծումների կայունությունը և դրանց մոնիտորինգի մեջ համայնքների մասնակցությունն ապահովելու նպատակով: Եվ վերջապես, առաքելության արդյունքները կարող են դառնալ ծրագրի վերակազմավորման հիմք, որը կմշակվի թիմի կողմից: Վերակազմավորման գործընթացը նախաձեռնելու համար կպահանջվի կառավարության պաշտոնական նամակը: Ընդհանուր առմամբ, Ղեկավարությունն ակնկալում է, որ վերագնահատումը և վերակառուցումը հնարավոր կլինի ավարտել մինչև 2017թ. ապրիլը, ենթադրելով, որ Բանկը կորոշի, որ այս նոր նախագծերը կարող են ֆինանսավորվել ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթուղթը հաշվետվության անգլերեն բնօրինակի թարգմանությունն է: Անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն բնօրինակը:

Բնօրինակի անգլերեն տարբերակը նաև տվյալ փաստաթղթի միակ պաշտոնական տարբերակն է:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ (P127759) ՍՏՈՒԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՆ

Ղեկավարությունն ուսումնասիրել է Հայաստանի Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիրը (P127759) Ստուգող խորհուրդի ուսումնասիրությանը ենթարկելու դիմում-պահանջները, որոնք Ստուգող խորհուրդը ստացել է 2016թ. մարտի 18-ին և 2016թ. մայիսի 4-ին և համապատասխանաբար գրանցել 2016թ. ապրիլի 26-ին և 2016թ. մայիսի 24-ին (RQ16/01): Ղեկավարությունը պատրաստել է հետևյալ պատասխանը.

Սույն փաստաթուղթը հաշվետվության անգլերեն բնօրինակի թարգմանությունն է: Անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն բնօրինակը:
Բնօրինակի անգլերեն տարբերակը նաև տվյալ փաստաթղթի միակ պաշտոնական տարբերակն է:

Հունիսի 10, 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ iv

ԱՄՓՈՓԱԳԻՐ v

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

II. ԴԻՄՈՒՄ-ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 1

III. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 2

IV. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳԵՂԱՐԴԱԼՃԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՄՈՒՄ-ՊԱՀԱՆՋԻՆ 5

V. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՄՈՒՄ- ՊԱՀԱՆՋԻՆ 16

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 23

Աղյուսակներ

Աղյուսակ 1. Գողթ համայնքի ոռոգման ջրի պահանջարկը և մատակարարումը

Պատկերներ

Պատկեր 1. Գեղարդալճի ոռոգման համակարգի քարտեզը
Պատկեր 2. Գոյություն ունեցող Գեղարդալիճ-Գողթ խողովակաշարի և ՀԷԿ-ի քարտեզը
Պատկեր 3. Ջրային իրավունքների կառուցվածքը
Պատկեր 4. Քաղցրաշենի ոռոգման համակարգի քարտեզը

Հավելվածներ

Հավելված 1. Դիմում-պահանջ Գողթից՝ բողոքներ և պատասխաններ
Հավելված 2. Դիմում-պահանջ Գառնիից՝ բողոքներ և պատասխաններ
Հավելված 3. Ջրի բալանսի աղյուսակներ
Հավելված 4. ԾԻԳ-ի ձեռնարկած գործողությունները Գառնիի շահառուներին հուզող խնդիրները լուծելու ուղղությամբ

Քարտեզներ

Քարտեզ 1. ՎԶՄԲ 42289: Ընդհանուր տվյալներ
Քարտեզ 2. ՎԶՄԲ 42310: Գեղարդալճի ոռոգման համակարգ
Քարտեզ 3. ՎԶՄԲ 42290: Քաղցրաշենի ոռոգման համակարգ
Քարտեզ 4. ՎԶՄԲ 42323: Առաջարկվող բնական հուշարձանների գտնվելու վայրը

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԸ	Բանկի ընթացակարգեր
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՇ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկումներ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԳՏՀ	Գլոբալ տեղորոշման համակարգ
Հա	Հեկտար
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՏԽ	Ստուգող խորհուրդ
Կվտ/ժ	Կիլովատ/ժամ
մ^3	Խորանարդ մետր
ՀՄԿ	Հազարամյակի մարտահրավերների կորպորացիա
Մվտ	Մեգավատ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՇԵՊ	Շահագործում և պահպանում
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
ԾԻԳ	Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակ
ՋՏՊԿ	Ջրային տնտեսության պետական կոմիտե
ՅՈՒՆԵՍԿՈ	Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
Ջրառ	Ջրամատակարարման գործակալություն
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն

Դոլարով նշված բոլոր գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով, եթե այլ կերպ նշված չէ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

i. Դիմում-պահանջներում բարձրացված հարցադրումներն ուշադիր ուսումնասիրելուց հետո, Ղեկավարությունը համաձայն չէ այն կարծիքի հետ, որ ենթադրյալ վնասն իրոք գոյություն ունի կամ որ դրան հանգեցրել է Բանկի քաղաքականության կատարման թերացումը: Ղեկավարությունը պնդում է, որ առաջարկվող երկու ոռոգման համակարգն էլ պատրաստվել են մանրակրկիտ ձևով և Բանկի քաղաքականության պահանջներին համապատասխան:

Նախադրյալները

ii. 2016թ. ապրիլի 26-ին Ստուգող խորհուրդը գրանցել է ուսումնասիրություն իրականացնելու Դիմում-պահանջ, որը վերաբերում է Բանկի կողմից ֆինանսավորվող Հայաստանի Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրին: Երկրորդ Դիմում-պահանջը նույն ծրագրի վերաբերյալ ստացվել է մեկ այլ դիմողից 2016թ. մայիսի 4-ին և գրանցվել է 2016թ. մայիսի 24-ին: Երկու դիմողներն էլ նշում են, որ իրենք ներկայացնում են Ծրագրի մեկ բաղադրիչի ազդակիր համայնքները: Նրանք պնդում են, որ սխեմաները, որոնք նախագծվել են Ազատ և Կարմիր գետերից վերցրած ջուրը բաշխող ոռոգման համակարգերում էլեկտրաէներգիայի սպառումը վերացնելու նպատակով, ունեն բացասական ազդեցություն: Դիմողները նաև պնդում են, որ Ծրագրի իրականացման արդյունքում ազդակիր համայնքներին հասանելի ջուրը կարող է պակասել, որ քննարկումները եղել են ոչ բավարար, որ շրջակա միջավայրը և բնապատկերը ենթարկվելու են բացասական ազդեցության և որ ջրի հոսքերի հաշվարկման համար Բանկի կիրառած մեթոդաբանությունը և այլընտրանքային տարբերակների դիտարկումները թերի են եղել:

iii. ***ՎԶՄԲ-ի 30 միլիոն ԱՄՆ դոլար փոխառության տրամադրում նախատեսած Ծրագիրը հաստատվել է 2013թ. մայիսի 22-ին:*** Փոխառուի համաֆինանսավորումը կազմում է 7,5 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագիրը օժանդակում է Հայաստանի ոռոգվող գյուղատնտեսությանը, որն ապահովում է ՀՆԱ-ում տվյալ ոլորտի բաժնի շուրջ 80 տոկոսը: Ծրագրի նպատակներն են. (ա) ընտրված ոռոգման համակարգերում կրճատել օգտագործվող էլեկտրաէներգիան և բարձրացնել ոռոգման համակարգի արդյունավետությունը, և (բ) բարելավել ոլորտի կարևոր տվյալների և տեղեկատվության հասանելիությունն ու հուսալիությունը որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Նպատակներին հասնելն ապահովվում է Ծրագրի երեք բաղադրիչի իրականացման միջոցով, որոնցից մեկը ուղղված է ընտրված ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացմանը՝ շահագործման ծախսերի կրճատման միջոցով: Ստացած երկու դիմում-պահանջները վերաբերում են Ծրագրի այս բաղադրիչին:

iv. Ծրագրի համապատասխան բաղադրիչով նախատեսվում է փոխարինել Ազատ գետից ոռոգման նպատակների համար ջուր մղող հին, անհուսալի և թանկ էլեկտրական պոմպերը ինքնահոս եղանակով աշխատող խողովակաշարերով: Բանկն ակնկալում է էլեկտրաէներգիայի և պահպանման ծախսերի զգալի

խնայողություններ տարեկան շուրջ 2 միլիոն ԱՄՆ դոլարի չափով, ինչպես նաև 17,8 միլիոն ԿՎտ/ժ էլեկտրաէներգիայի սպառման կրճատում: Դրանից բացի, ակնկալվում է ոռոգման ծառայությունների հուսալիության բարելավում, ինչը կնպաստի բերքատվության ավելացմանը: Ամենակարևորն այն է, որ չեն փոխվելու ոչ առկա ոռոգման ջրի ծավալները, ոչ էլ այդ ծավալների բաշխումը: Ջուրը պարզապես տեղափոխվելու է ինքնահոս եղանակով, այսինքն առանց էլեկտրաէներգիայի սպառման: Որպես այդպիսին, ջուրը չի փոխելու կամ ազդելու գոյություն ունեցող հատկացումների, ջրօգտագործման թույլտվությունների կամ համայնքի համար ոռոգման ջրի հասանելիության վրա: Ծրագիրը միայն փոխելու է ջրի տեղափոխման եղանակը՝ գործող մեխանիկական ոռոգման համակարգը փոխարկելով ինքնահոս եղանակով աշխատող խողովակաշարերի:

Ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջները

v. ***Ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջը ներկայացրել էին Գողթ համայնքի անդամները Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի վերաբերյալ: Երկրորդ դիմում-պահանջը ներկայացրել էին Գառնիի բնակիչները՝ Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի վերաբերյալ:*** Երկու համակարգն էլ ֆինանսավորվում են Ծրագրի միևնույն բաղադրիչով: Դիմում-պահանջները պնդում են, որ (ա) Ծրագիրը կարող է պակասեցնել համայնքներին հասանելի ջրամատակարարումը; (բ) համակարգերին ջուր մատակարարելու համար բավարար քանակի ջուր չկա, (գ) քննարկումները Ծրագրի ազդակիր համայնքների հետ բավարար չեն եղել, (դ) ջրի հոսքերի և ծավալների հաշվարկման համար կիրառված մեթոդաբանությունը թերի է, (ե) Ծրագիրը բացասական ազդեցություն կունենա ՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգություն հանդիսացող օբյեկտների և զբոսաշրջության վրա, և (զ) այլընտրանքային առաջարկությունների դիտարկումները թափանցիկ չեն եղել:

Ղեկավարության պատասխանը

vi. ***Ղեկավարությունը մանրակրկիտ ուսումնասիրել է երկու դիմում-պահանջում բարձրացված հարցադրումները և եզրակացրել է, որ դիմողների իրավունքները կամ շահերը չեն ենթարկվել կամ, ամենայն հավանականությամբ, չեն ենթարկվելու Ծրագրի բացասական ազդեցության:*** Ղեկավարությունը համաձայն չէ, որ Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագիրը կհանգեցնի դիմում-պահանջներում նշված հնարավոր բացասական ազդեցությունների: Ղեկավարությունը պնդում է, որ առաջարկվող երկու սխեմաներն էլ մշակվել են մանրակրկիտ կերպով և համապատասխանում են Բանկի քաղաքականությանը և լավագույն միջազգային փորձին:

vii. ***Ղեկավարության կարծիքով, ուսումնասիրություն իրականացնելու դիմում-պահանջները հիմնված են Ծրագրի վերաբերյալ մի շարք ոչ ճիշտ պնդումների և տեղում տիրող իրավիճակի վրա:*** Սա հիմնականում վերաբերում է Ազատ և Կարմիր գետերի ջրի ծավալներին, ջրապահանջարկին և երկու համայնքի համար ոռոգման ջրի առկայությանը, ինչպես նաև Ծրագրի շինարարական աշխատանքների ենթադրվող ազդեցությանը: Ըստ երևույթին, դիմում-պահանջի

ներկայացման դրդապատճառը նաև ընդհանուր անվստահությունն է կառավարության՝ մրցակից պահանջարկների միջև ջրի բաշխման գործընթացների նկատմամբ:

viii. ***Ղեկավարությունը նշում է, որ Ծրագրի նպատակն է նվազեցնել էլեկտրաէներգիայի սպառումը անարդյունավետ մեխանիկական ոռոգման համակարգերում՝ փոխարինելով դրանք ինքնահոս խողովակաշարերով: Ծրագիրը չի փոխում կամ չի ազդում ջրի բաշխման, ջրօգտագործման թույլտվությունների կամ համայնքների համար ոռոգման ջրի հասանելիության վրա, ոչ էլ ընդլայնում է երկու նոր համակարգերի սպասարկման տակ գտնվող ոռոգվող տարածքները:*** Ոռոգման երկու համակարգերն էլ՝ աշխատելով ինքնահոս եղանակով, իրականացնելու են նույն քանակի ջրառ նույն ջրուղիներից, ինչպես կատարվում է հիմա մեխանիկական ոռոգման համակարգերով: Որոշ շահառուների հակադրվելը Ծրագրին՝ պայմանավորված ջրառի կետի տեղափոխմամբ, գետի երկայնքում գտնվող ջրօգտագործողների միջև վստահության և՝ հատկապես, գործող համակարգում ջրօգտագործման թույլտվության մեխանիզմի կիրարկման թերությունների ապացույց է: Ծրագիրը միտված է բարելավելու ջրի հոսքերի և դրանց՝ գոյություն ունեցող բաշխումների մասին տեղեկատվության հասանելիությունը:

Ջրի մատակարարման առկայությունը

ix. ***Ղեկավարությունը պնդում է, որ երկու համակարգն էլ կենսունակ են: Կիրառված հաշվարկները ցույց են տալիս, որ Ազատ և Կարմիր գետերում ջրի քանակները բավարար են համակարգերի շահագործման, բնապահպանական պահանջների կատարման և ազդակիր համայնքների ջրապահանջնարկների բավարարման համար:*** Ղեկավարությունը համաձայն չէ, որ Ծրագրի իրականացման պատճառով երաշտի կամ ջրի սակավության դեպքերի ազդեցությունը համայնքների վրա կլինի ավելի մեծ: Հիդրոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները ցույց տվեցին, որ ոռոգման պահանջարկները և բնապահպանական պահանջները բավարարելու համար բավարար քանակությամբ ջուր կա: Համակարգերի նախագիծը հիմնված է Հայաստանի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության կողմից հավաքագրվող ավելի քան 60 տարվա պաշտոնական և որակի գծով վերահսկվող տվյալների վերլուծության վրա: Այս վերլուծությունը ներկայացված է 3-րդ Հավելվածում, ինչպես նաև ՇՄՍԱԳ-ի փաստաթղթերում:

x. ***Ծրագիրը չի նվազեցնելու Գողթի կամ Գառնիի համայնքների ոռոգման ջրի մատակարարումը և նախագծված է այնպես, որ երկու համայնքն էլ կարողանալու են շարունակել ստանալ իրենց հատկացված կամ թույլատրված ջրի քանակը:*** Գողթի համայնքին հուզող հարցը, որ իր ջուրը կարող է պակասել, հիմնված է ջրի պահանջարկի մոտավոր հաշվարկի վրա, որը կրկնակի գերազանցում է պատմականորեն ստացած ծավալը: Ավելին, Ղեկավարությունը պարզել է, որ Գողթի ոռոգման ջրամատակարարումը գտնվում է մի մասնավոր ՀԷԿ-ի շահագործողի հսկողության տակ, և որ նրա կողմից վերցրած ջրի ծավալները թափանցիկ չեն համայնքի համար: Ինչ վերաբերում է Գառնիի համայնքին, ապա կարևոր է նշել, որ թե՛ այժմյան, թե՛ առաջարկվող ջրառի կետերը գտնվում են

Գառնիի ջրառի կետի ստորին հոսանքում; ուստի Ծրագրի և Գառնիի ոռոգման ջրի մատակարարման միջև ոչ մի կապ չկա:

Ջրի հոսքի հաշվարկման մեթոդաբանությունը

xi. ***Ղեկավարությունը համոզված է, որ հաշվարկները, որոնք կիրառվել են պարզելու համար, որ Կարմիր գետում, որից սնվում է Գողթ համայնքին սպասարկող ջրամբարը, բավարար քանակությամբ ջուր կա, իրատեսական են և պահպանողական:*** Կիրառված մոտեցումը հիմնված է ընդունված հիդրոլոգիական մեթոդաբանությունների վրա, և հաշվարկները ընդգրկվել էին Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) փաստաթղթերում: Կիրառվել էին երկու տարբեր մեթոդներ, և հաշվարկների հիման վրա եզրակացվել էր, որ գետում բավար քանակի ջուր կա ջրամբարը սնուցելու համար, որպեսզի այն կարողանա ապահովել Գողթի և այժմ պոմպակայաններով սպասարկվող շահառու համայնքներից յուրաքանչյուրի տարեկան հաշվարկված 2.2 միլիոն մ^3 ոռոգման ջրի պահանջարկը (տես Հավելված 3):

xii. ***Ղեկավարությունը համոզված է նաև, որ հաշվարկները, որոնք կիրառվել են որոշելու համար, որ Ազատ գետի ջուրը բավարար է թե՛ շահառու համայնքների ոռոգման պահանջարկները, թե՛ բնապահպանական հոսքերի պահանջը բավարարելու համար, իրատեսական են և պահպանողական:*** Ինչպես արդեն բացատրվել է, հաշվարկները հիմնված են երկարաժամկետ և որակի գծով վերահսկվող պաշտոնական տվյալների վրա և ներկայացված են եղել ՇՄՍԱԳ-ի փաստաթղթերում:

Քննարկումները

xiii. Ծրագրի համար մշակվել էր Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ, որը հրապարակվել էր երկրում և հրապարակայնորեն քննարկվել հիմնական շահառուների հետ (Երևանում, 2013թ. փետրվարի 25-ին) նախքան Տնօրենների խորհրդին ներկայացվելը: Ծրագրի առանձին ներդրումները որոշելուն պես մշակվեցին առանձին օբյեկտների ՇՄՍԱԳ-ները, այդ թվում՝ ստուգման պահանջի առարկա հանդիսացող երկու համակարգերի ՇՄՍԱԳ-ները, որոնք հրապարակվեցին և քննարկվեցին տեղերում:

xiv. ***Երկու ոռոգման համակարգերի նախագծերը և դրանց բնապահպանական և սոցիալական կողմերը քննարկվել են ազդակիր համայնքների հետ 2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. սեպտեմբերը տեղի ունեցած մի քանի փաստագրված խորհրդակցական հանդիպումների ժամանակ:*** Դրանց թվում են ՇՄՍԱԳ-ի գործընթացով պահանջվող հանրային քննարկումները, ինչպես նաև Հայաստանի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենսդրությամբ պահանջվող լրացուցիչ լսումները և Բանկի օժանդակությամբ իրականացվող միջոցառումները (օրինակ, ֆոկուս խմբային քննարկումները և քաղաքացիական հասարակության հետ հանդիպումները): Ղեկավարությունը նաև նշում է Գառնիի համայնքում քննարկումների անցկացման հետ կապված խնդիրները, որտեղ ակտիվիստները փորձել էին փակել ճանապարհը՝ քննարկումների իրականացումը կանգնեցնելու նպատակով: Հանդիպումները և

պլանավորված հանդիպումների մասին հանրությանը տեղեկացնելու ապացույցներն արձանագրված են:

Ազդեցությունը ՅՈՒՆԵՍԿՈ-ի օբյեկտների և զբոսաշրջության վրա

xv. ***Ծրագիրը չի ազդում ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության որևէ օբյեկտի կամ բնության որևէ բացահայտված հուշարձանի վրա:*** ՅՈՒՆԵՍԿՈ-ի օբյեկտը գտնվում է Ազատ գետի վրա կառուցվելիք ջրառի գլխամասային հանգույցից մոտ 10 կմ հեռավորության վրա: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները չեն ազդելու Ազատ կիրճում տեղակայված բնության չորս հուշարձանների վրա, քանի որ այդ հուշարձանները Ծրագրի անմիջական տարածքում չեն գտնվում: Հաշվի առնելով, որ խողովակաշարը լինելու է ստորերկրյա, իսկ ջրառի գլխամասային հանգույցի բարձրությունը՝ ընդամենը 2 մ, Ազատի կիրճի վրա որևէ զգալի վիզուալ ազդեցություն չի լինելու: Դրանից բացի, զբոսաշրջությունը ոռոգման համակարգի մոտակայքում կենտրոնացված է մի տարածքում, որը հեռու է նախատեսված գլխամասային հանգույցից, իսկ շինարարական աշխատանքներն իրականացվելու են ոչ զբոսաշրջային սեզոնում:

Այլընտրանքային տարբերակների դիտարկումները

xvi. ***Ղեկավարությունը մանրազննին ուսումնասիրել է Ծրագրի այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև նախատեսված գլխամասային հանգույցի և խողովակաշարերի այլընտրանքային դիրքերը: Հաշվի առնելով այն, որ ինքնահոս համակարգի համար պահանջվում է հատուկ տեղագրություն, ծրագրի բաղադրիչների տեղափոխելն առանց խտրականության հնարավոր չէ:*** Բանկի թիմը հանդիպել է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (այդ թվում՝ Գառնիի դիմում-պահանջ ներկայացնողների)՝ նրանց առաջարկները քննարկելու նպատակով: Սակայն ծրագրի իրականացման նրանց գաղափարները չէին կարող դիտարկվել՝ դրանց հետ կապված ծախսերի և էլեկտրաէներգիայի օգտագործման անհրաժեշտության պատճառով, ինչը բացատրվեց ներկաներին: Ղեկավարությունը, սակայն, օգնել է կառավարությանը ստանալ Եվրասիական (ԵԶԲ) զարգացման բանկի ֆինանսավորումը որոշակի վերականգնման աշխատանքների իրականացման համար, որոնք առաջարկվել էին համայնքների կողմից, բայց այս Ծրագրի շրջանակներից դուրս էին:

Եզրակացությունը

xvii. ***Ղեկավարությունն ընդունում է ջրի առկայության և մատակարարման հետ կապված զանազան մտահոգությունները և շարունակում է գործադրել ջանքեր, որպեսզի օգնի կառավարությանը ստեղծել կապեր շահառուների և ազդակիր համայնքների հետ՝ այս բարդ հարցերն ավելի լավ բացատրելու և շահառուների կարծիքները լսելու նպատակով:*** Ղեկավարությունը տեղյակ էր երկու դիմում-պահանջում ներկայացված մտահոգությունների մասին նախքան դրանք ներկայացնելը և անցած երկու տարվա ընթացքում ինտենսիվ քննարկումներ է ծավալել ծրագրի շահառուների հետ այդ հարցերի շուրջ: Բանկի թիմը էական ջանքեր է

գործադրել, որպեսզի փարատի շահառուների մտահոգությունները, օգտագործելով հրապարակայնորեն մատչելի տեղեկատվությունը, այդ թվում՝ ՇՄՍԱԳ-ի քննարկումների և լրացուցիչ հանդիպումների ընթացքում, ինչպես նաև համայնքի անդամների հետ համատեղ մոնիտորինգի այցերի ժամանակ:

xviii. ***Ղեկավարությունը նշում է, որ դիմում-պահանջներում արտահայտված մտահոգություններից շատերը հիմնված են ոչ ճշգրիտ տեղեկատվության և ոչ ճիշտ ենթադրությունների վրա: Ղեկավարությունը նաև նշում է, որ Ծրագրի տարածքում ոռոգման ջրի բաշխման և մատակարարման կառավարման կառուցվածքը գտնվում է ոչ պաշտոնական մեխանիզմների լուրջ ազդեցության տակ, որոնք չեն համապատասխանում կարգավորող օրենքներին:*** Ղեկավարությունն ընդունում է, որ այդ մեխանիզմները կարող են լինել ոչ թափանցիկ և կարող են որոշ շահառուներին հնարավորություն տալ օգտվել մյուսների հաշվին և, որպես այդպիսիք, կարող են նպաստել նրան, որ որոշ շահառուներ տրամադրվեն Ծրագրի դեմ: Ղեկավարությունը նաև նշում է, որ Ծրագրի առանցքային նպատակն է նպաստել ջրօգտագործման թափանցիկության և համայնքի կողմից այն մշտադիտարկելու բարելավմանը, և դա, հավանաբար, չի ողջունվում որոշ շահառուների կողմից:

xix. 2016թ. մայիսի վերջին բնակիչների ցույցերից հետո կառավարությունը հայտարարեց, որ կրկին կուսումնասիրի Քաղցրաշենի առաջարկված սխեման՝ հնարավոր փոխզիջումային լուծումներ դիտարկելու նպատակով: Ղեկավարությունն այժմ սպասում է, որ կառավարությունը պաշտոնապես հայտնի տվյալ համակարգի հետ կապված անելիքների մասին, իսկ մինչ այդ առնչություն ունեցող բոլոր աշխատանքները դադարեցվել են: Ղեկավարությունը նշում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները հայտարարել են, որ Գեղարդալճի համակարգի աշխատանքները նույնպես դադարեցված են՝ ի պատասխան հունիսի սկզբին Գողթի համայնքի բնակիչների բողոքներին: Սակայն Գողթի վերաբերյալ Հայաստանի կառավարությունը դեռ չի տեղեկացրել Բանկին: Ղեկավարությունը շարունակում է հավատարիմ մնալ իր հանձնառությանը՝ աշխատել Հայաստանի կառավարության հետ Ծրագրի իրականացման միջոցով ոռոգման ենթակառուցվածքի բարելավման ուղղությամբ՝ հիմնվելով նշված երկու համակարգերի վերաբերյալ կառավարության վերջնական որոշման վրա: Ղեկավարությունը նշում է, որ թեև երկու համակարգի փոխզիջումային լուծումները կարող են տեխնիկապես իրագործելի լինել, նրանք էապես կզիջեին գոյություն ունեցող նախագծին և զգալիորեն կնվազեցնեին էլեկտրաէներգիայի հնարավոր խնայողությունները:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2016թ. ապրիլի 26-ին Ստուգող խորհուրդը գրանցել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից (Բանկ) ֆինանսավորվող Հայաստանի Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիրը (P127759) ստուգելու դիմում-պահանջ (ՏԽ Հայց RQ16/01): Երկրորդ դիմում-պահանջը նույն ծրագրի վերաբերյալ գրանցվել է 2016թ. մայիսի 24-ին և կուսումնասիրվի առաջինի հետ միասին (այսուհետ՝ "դիմում-պահանջներ"):

2. ***Տեքստի կառուցվածքը:*** Փաստաթուղթը բաղկացած է հետևյալ բաժիններից. Դիմում-պահանջի նկարագրություն; Ծրագրի նախադրյալներ; գոյություն ունեցող և առաջարկվող մեխանիկական ոռոգման համակարգերի նկարագրություն և Ղեկավարության պատասխան: 1-ին և 2-րդ Հավելվածներում աղյուսակի ձևով ներկայացված են դիմումների հեղինակների պահանջները Ղեկավարության մանրամասն պատասխաններով: 3-րդ Հավելվածը ներառում է Ծրագրի համար պատրաստված ջրի բալանսի աղյուսակները, իսկ 4-րդ Հավելվածում մանրամասն ներկայացված են Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) ձեռնարկած գործողությունները շահառուներին հուզող հարցադրումների լուծման ուղղությամբ:

II. ԴԻՄՈՒՄ-ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. ***Ստուգման առաջին պահանջը*** ներկայացրել էին Հայաստանի Կոտայքի մարզի Գողթ համայնքի անդամները՝ խնդրելով գաղտնի պահել իրենց ինքնությունը: Դիմում-պահանջը վերաբերում է Գեղարդալճի ոռոգման համակարգին, որը ֆինանսավորվում է Ծրագրի Բաղադրիչ 1-ի շրջանակներում: Դիմում-պահանջում պնդում են, որ (ա) Ծրագրի իրականացման արդյունքում ոռոգման ջուրը կարող է պակասել և չբավարարել Գողթ համայնքի ջրապահանջարկը, (բ) քննարկումները Գողթ համայնքի հետ բավարար չափով չեն անցկացվել, և (գ) Կարմիր գետի պրոքսի հոսքերի հաշվարկման համար կիրառված մեթոդաբանությունը թերի է: Դիմում-պահանջի մեջ նաև առաջարկվում է ծրագրի շրջանակից դուրս վերանորոգել և կառուցել համայնքի համար նոր ենթակառուցվածք: Այդ պահանջը հիմնավորող որևէ լրացուցիչ նյութ Ղեկավարությունը չի ստացել:

4. ***Ստուգման երկրորդ դիմում-պահանջը*** ներկայացրել է Կոտայքի մարզի Գառնի գյուղի մի բնակիչ՝ իր և նույն գյուղի մնացած 520 բնակչի անունից: Այն վերաբերում է Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգին, որը նույնպես ֆինանսավորվում է Ծրագրի Բաղադրիչ 1-ի շրջանակներում: Այս պահանջը պնդում է, որ (ա) համակարգն ապահովելու համար բավար քանակի ջուր չկա, (բ) Ծրագիրը կունենա բացասական ազդեցություն ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգություն հանդիսացող օբյեկտների և զբոսաշրջության վրա, (գ) քննարկումները խախտումներով են անցկացվել, և (դ) այլընտրանքային տարբերակների դիտարկումները թափանցիկ չեն եղել:

5. Դիմում-պահանջներին կանդրադառնանք առանձին բաժիններում, հաշվի առնելով, որ նրանց բնույթը պայմանավորված է կոնկրետ օբյեկտով:

III. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

6. ***Երկրի համատեքստը:*** Նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո վերջին երկու տասնամյակի ընթացքում Հայաստանի արդյունաբերության ցուցանիշները տատանվել են՝ սկսած իրական ՀՆԱ-ի 42 տոկոս անկումից մինչև տարեկան կայուն աճ, որը 2001-2008 թթ. ընթացքում միշտ գերազանցել է 10 տոկոսը: 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը՝ դրամական փոխանցումների կրճատման և մետաղական հանածոների հանդեպ արտաքին պահանջարկի կրճատման հետ մեկտեղ, 2009 թ. հանգեցրեց տնտեսության 14 տոկոս անկմանը: Երկիրը խիստ տուժել է 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից: Մի քանի տարվա ընթացքում վերականգնվելուց հետո՝ տնտեսությունը 2013թ. վերադարձավ իր նախաճգնաժամային մակարդակներին:

7. ***Ոլորտի համատեքստը:*** Հայաստանի հեռանկարային զարգացման տեսլականն արտացոլված է Հայաստանի Հանրապետության 2014-2025թ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որը հենվում է չորս ուղղությունների վրա. աշխատատեղերի ստեղծում, մարդկային կապիտալի զարգացում, սոցիալական պաշտպանության համակարգի հզորացում և պետական վարչարարության և կառավարման արդիականացում: Գյուղատնտեսությունն ու գյուղի զարգացումը (ԳԳԶ) կարևոր դեր են խաղում տնտեսական դիվերսիֆիկացիայի ապահովման, աշխատատեղերի ստեղծման և աղքատության հաղթահարման գործում: Ոռոգվող գյուղատնտեսությունը կարևոր է գյուղատնտեսական ոլորտի ցուցանիշների համար, քանի որ այն կազմում է ՀՆԱ-ում գյուղատնտեսության հատվածի մասնակցության մոտ 80 տոկոսը: Ոռոգվող հողերի մակերեսն այժմ կազմում է մոտ 140.000 հա: Ջրի մատակարարման հուսալիության և առաքման ժամանակայնության բարձրացումը՝ ջրօգտագործողների ընկերությունների ստեղծման շնորհիվ մասամբ, հնարավորություն տվեցին փոխել մշակաբույսերի կազմը ավելի բարձր ավելացված արժեք ունեցող մշակաբույսերով և ի վերջո նպաստեցին գյուղատնտեսության ՀՆԱ-ի աճին:

8. ***2002թ. ընդունված Ջրային օրենսգիրքը սահմանում է իրավական դրույթներ ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի համար (բոլոր օգտագործողների համար, օրինակ, ոռոգում, համայնքային ջրամատակարարում, հիդրոէներգետիկա, գյուղի ջրամատակարարում, արդյունաբերություն) և կարգավորում է անմիջապես գետերից իրականացվող ջրառը: Այլ եղանակներով սպասարկվող օգտագործողների դեպքում (այսինքն, նրանց, ովքեր ուղիղ ջրառ չեն իրականացնում) թույլտվություն չի պահանջվում[1]:*** Թույլտվությունների տրամադրման

[1] Այդ պատճառով է, որ Գողթ համայնքը, որի ջուրը տեղափոխվում է խողովակաշարով, ստանում է այդ ջուրը ***պայմանագրային*** ծավալների հիման վրա: Գառնի ՋՕԸ-ն, որը ջրառն իրականացնում է անմիջապես գետից, ունի համապատասխան ***թույլտվություն:***

գործընթացը կարգավորման հիմնական գործիքն է, որը կառավարությունն օտագործում է ջուրը տարբեր օգտագործողներին հատկացնելու համար: Հայտի ներկայացման գործընթացը ներառում է, մասնավորապես, ավազանի բոլոր այլ ընթացիկ ջրօգտագործման ուսումնասիրությունը (էկոհամակարգերը և պահպանվող տարածքները ներառյալ) և ընդհանուր ջրային ռեսուրսների առակայության գնահատումը: Թույլտվությունների տրամադրման գործընթացի մանրամասն ուսումնասիրությունը կատարել է Համաշխարհային բանկը իր՝ "*Դեպի ջրային ռեսուրսների համալիր կառավարում Հայաստանում*" հաշվետվության մեջ:

9. ***Ծրագրի կարգավիճակը:*** Ծրագիրը հաստատվել է 2013թ. մայիսի 22-ին, որի շրջանակներում տրամադրվել է ՎԶՄԲ-ի 30 միլիոն ԱՄՆ դոլարի փոխառություն: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 37,5 միլիոն ԱՄՆ դոլար; գումարի ֆինանսավորման մնացած մասն ապահովում է Փոխառուն: Մինչ օրս մասհանվել է 21,5 միլիոն ԱՄՆ դոլարի գումար, իրականացումն ընթանում է ըստ ժամանակացույցի: Ծրագիրն իրականացնող գործակալությունը Ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայության տակ գործող ԾԻԳ-ն է: Ծրագրի պլանավորված փակման ժամկետը 2017թ. հունիսն է:

10. ***Ծրագրի նպատակները:*** Հայաստանի Ծրագրի նպատակներն են. (ա) ընտրված ոռոգման համակարգերում նվազեցնել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի փոխադրման արդյունավետությունը, և (բ) բարելավել ոլորտի կարևոր տվյալների և տեղեկատվության առկայությունն ու հուսալիությունը որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: ***Այսպիսով, Ծրագրի նպատակն է դադարեցնել էլեկրաէներգիայի սպառումը անարդյունավետ մեխանիկական ջրամատակարարման համակարգերում՝ փոխարինելով դրանք ինքնահոս եղանակով աշխատող խողովակաշարերով; Ծրագիրը չի փոխում կամ ազդում ներկայիս ոռոգման ջրի հատկացումների, թույլտվությունների կամ համայնքի համար ջրի հասանելիության վրա:***

11. Զարգացման նպատակի իրականացումն ապահովվելու է հետևյալ միջոցառումներով. (ա) մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով; (բ) ընտրված հեռացնող ջրանցքների վերականգնում, որոնք բարձր ինքնարժեք ունեցող ջուր են ստանում այն պոմպակայաններից, որոնք չեն կարող փոխարկվել ինքնահոսի և որոնք արդեն վերականգնվել էին ավելի վաղ իրականացված Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի (ՀՄԿ) ծրագրի շրջանակներում, և (գ) ոռոգման ջրի կառավարման համար կարևոր՝ նորացված և հուսալի տվյալների տրամադրում, ինչպես օրինակ՝ համակարգի ՇԵՊ և արտակարգ իրավիճակներում կառավարման համակարգերի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին, ջրի մատակարարման ոլորտում աշխատող հաստատությունների աշխատանքի արդյունավետությունը գնահատող ցուցանիշների մասին, մշտադիտարկման սարքերի տեղադրման մասին, որոնք իրական ժամանակի ռեժիմով չափում են համակարգ մտնող և ՋՕԸ-ներին առաքվող ջրի ծավալները:

12. ***Ծրագրի բաղադրիչները:*** Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից. Ծրագրի առաջին բաղադրիչի (33,1 միլիոն ԱՄՆ դոլար) շրջանակներում իրականացվում է

ոռոգման համակարգի բարելավում: Այս բաղադրիչն ուղղված է ընտրված ոռոգման համակարգերում ջրի տեղափոխման հատվածի ՇԵՊ կարիքների կրճատմանը: Բաղադրիչն ունի երկու ենթաբաղադրիչ. մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգով, և ոռոգման մեխանիկական ջուրը տեղափոխող հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում: Ծրագրի երկրորդ բաղադրիչը (1,7 միլիոն ԱՄՆ դոլար) վերաբերում է կառավարման տեղեկատվությանը: Այս բաղադրիչը բաղկացած է երկու ենթաբաղադրիչից. տեխնիկական հետազոտություններ, և կարգավարական (դիսպետչերական) հսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրում: Ծրագրի երրորդ բաղադրիչով (2,7 միլիոն ԱՄՆ դոլար) իրականացվում է Ծրագրի կառավարումը և ՋՕԸ-ների օժանդակության տրամադրումը:

IV. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳԵՂԱՐԴԱԼՃԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՄՈՒՄ-ՊԱՀԱՆՋԻՆ

13. ***Գեղարդալճի գործող մեխանիկական ոռոգման համակարգը*** (տես Պատկեր 1) շահագործվում է պոմպերով, որոնք ջուր են վերցնում Ազատ գետից և Ազատի ջրամբարից և մղում են այն Գեղադիր, Հացավան և Ողջաբերդ համայնքներին[2]: Այդ պոմպերը անհուսալի են, իսկ դրանց շահագործումը՝ թանկ: Այժմ այդ պոմպերի տարեկան էլեկտրաէներգիայի սպառումը կազմում է շուրջ 7,8 միլիոն կՎտ/ժ, ինչի արդյունքում տարեկան շահագործման և պահպանման ծախսերը մոտենում են 0,9 միլիոն ԱՄՆ դոլարի: Պոմպակայանները գտնվում են ֆիզիկապես վատթար վիճակում և հաճախակի լինում են էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումներ: Պոմպակայանների հետ կապված խողովակաշարերն անցնում են անկայուն ռելիեֆով, ինչի արդյունքում հաճախակի լինում են վթարներ և ջրի արտահոսք: Ոռոգման ծառայությունների նման անհուսալիությունը հանգեցնում է նաև գյուղատնտեսության արտադրության և բերքատվության ոչ օպտիմալ արդյունքների:



Պատկեր 1. Գեղարդալճի ոռոգման համակարգի քարտեզ ***(կարմիր գույնով նշվածը գոյություն ունեցող մեխանիկական գծերն են, իսկ դեղինով՝ առաջարկվող ինքնահոս խողովակաշարը)***

[2] Ինչպես նաև մատակարարում Ջրվեժի Ազգային պարկին (188,3 հա)[2] և Ջրվեժ-Ձորաղբյուր այգեգործների ընկերությանը (260 հա):

14. ***Ծրագրում առաջարկվող Գեղարդալճի <u>ինքնահոս</u> ոռոգման համակարգը ապահովելու է նույն համայնքները նույն քանակությամբ ոռոգման ջրով, որն այժմ նրանց մատակարարվում է պոմպերով:*** Այս համակարգը փոխարինելու է ոռոգման ջրի մատակարարման եղանակը՝ հրաժարվելով պոմպերից և փոխարինելով դրանք ինքնահոս եղանակով աշխատող խողովակաշարով: Այդ նպատակին հասնելու համար պահանջվում է մեծացնել Գեղարդալճի ջրամբարի տարողությունը (2,4 միլիոն մ^3-ից մինչև 3,4 միլիոն մ^3)՝ 23,6 կմ երկարություն ունեցող ինքնահոս խողովակաշարը ջրով ապահովելու համար, միևնույն ժամանակ շարունակելով ոռոգման ջրի ընթացիկ մատակարարումը Գողթ համայնքին: Մեծացրած Գեղարդալճի ջրամբարը ի վիճակի կլինի սպասարկել ընդհանուր առմամբ 1.448 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր. 705 հա Գողթ համայնքում և 743 հա՝ Գեղադիր, Հացավան և Ողջաբերդ համայնքներում[3]: Հարկ է նշել, որ այն լրացուցիչ ջուրը, որը կուտակվելու է ջրամբարի տարողության մեծացման արդյունքում, այժմ հոսում է ներքև, որտեղից համայնքները պոմպերով են մղում այն: Ջրամբարի լցման հաշվարկված ազդեցությունը ստորին բյեֆում կլինի չնչին: Այս պահի դրությամբ շինարարական աշխատանքների պայմանագրերը շնորհված են և աշխատանքները դեռ նոր սկսվել են:



Պատկեր 2. Գոյություն ունեցող Գեղարդալիճ-Գողթ խողովակաշարի և ՀԷԿ-ի շահագործման քարտեզ

[3] Ինչպես նաև սպասարկել Ջրվեժի Ազգային պարկին (188,3 հա) [3] և Ջրվեժ-Զորաղբյուր այգեգործների ընկերությանը (260 հա):

15. ***Գեղարդալճի ջրամբարն*** այժմ ոռոգման ջուրը մատակարարում է Գողթ համայնքին [4] 7 կմ երկարությամբ խողովակաշարով (Գեղարդալիճ – Գողթ խողովակաշար): Այս ջրամբարը շահագործում է *Սևան-Հրազդանյան Ջրառը:* Ջրամբարը սնվում է Կարմիր գետից ջուր վերցնող ջրանցքից: Ջրառն ունի թույլտվություն (Բնապահպանության նախարարության կողմից տրված)՝ ջրամբարի շահագործման համար տարեկան Կարմիր գետից վերցնել մինչև 4,4 միլիոն մ^3 ջուր: Դրանից հետո Ջրառը ջուր է մատակարարում Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ին (որտեղ մտնում է Գողթ համայնքը)՝ ըստ ամեն տարի բանակցվող ջրի ծավալների: Արտակարգ իրավիճակներում՝ Գեղարդալճի ջրամբարը գերլցվելու դեպքում, հավելյալ ջուրը վթարային ջրաթափով լցվում է Ուչգետ, որն ի վերջո միանում է մասնավոր ՀԷԿ-ի վերին բյեֆում գտնվող Գողթ գետին: Ջրամատակարարման իրավունքների կառուցվածքը ներկայացված է 3-րդ Պատկերում:



Պատկեր 3. Ջրային իրավունքների կառուցվածքը

16. ***Ոռոգման ջուրը մատակարարվում է Գողթ համայնքին՝ անցնելով մասնավոր ՀԷԿ-ի տարածքով, որի ջրառի տվյալները թափանցիկ չեն:*** ՀԷԿ-ը ունի երկու տուրբին (ՀԷԿ1 և ՀԷԿ2)՝ շուրջ 4,3 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Շահագործողն ունի Գողթ գետից ջուր վերցնելու թույլտվություն ՀԷԿ1-ի համար (տարեկան առավելագույնը մինչև 8,95 միլիոն մ^3), որը սահմանափակվում է ապրիլ-հուլիս ամիսներով: ՀԷԿ-ի շահագործողն ունի երկրորդ թույլտվությունը՝ ՀԷԿ2-ի համար ջուր վերցնել ոռոգման խողովակաշարից (առավելագույնը մինչև 6,84 միլիոն մ^3), որը նույնպես ուժի մեջ է միայն ապրիլ-հուլիս ժամանակահատվածում: Քանի որ բաժանարար կետը գտնվում է ՀԷԿ-ը շահագործողի տարածքում, խողովակաշարից վերցրած ջրի բաշխման բոլոր երեք ուղղությունները ամբողջությամբ գտնվում են նրա հսկողության տակ. (ա) դեպի Գողթ համայնքի ոռոգման համակարգը, (բ) դեպի ՀԷԿ-ը շահագործողի սեփական

[4] Բնակչությունը 2014թ.՝ 2.055; 2014թ. դրությամբ Գողթ համայնքի տարածքն ընդգրկում էր 650-700 հա ոռոգելի հող: Համայնքն ընդգրկված է Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ում:

կոմերցիոն ջերմոցները, և (գ) դեպի ՀԷԿ-ի երկրորդ տուրբինը (ՀԷԿ2), որտեղից ջուրը վերադառնում է Գողթ գետ: Ջրի բաշխումն այդ երեք ուղղություններով այժմ հիմնվում է մասնավոր ՀԷԿ-ի շահագործողի և Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ի միջև ոչ ֆորմալ քննարկումների վրա: Չնայած որ գործող թույլտվությունների համաձայն շահագործողը պարտավոր է տեղադրել ջրառի կետում ջրաչափման սարքեր, ոչ մի նման սարք մինչ օրս չի տեղադրվել, ինչը, դե ֆակտո, հնարավորություն չի տալիս ՋՕԸ-ին ստուգել իրեն տրված ջրի ծավալը: Ծրագրի օժանդակությամբ ջրաչափը տեղադրվել է ջրի առաքման կետում, ինչը 2015թ. սկսած հնարավորություն է տվել ՋՕԸ-ին հաշվառել իրեն տրված ջրի ծավալը:

Նկար 1. Մասնավոր ՀԷԿ-ի շահագործողը բաժանարարի մոտ (3 ուղղություն)

17. ***Պատվարի անվտանգության հետ կապված մտահոգություն:*** Հարկ է նշել նաև, որ Գողթ գետի վրա մասնավոր հիդրոէներգետիկ համակարգի կառուցումից հետո (2010թ.) Գեղարդալճի ջրամբարն ամբողջությամբ լցվել և արտահոսել է 2010թ, 2011թ, 2012թ. և 2014թ.: Ջուրն արտահոսել է ջրամբարի ջրաթափով և Ուչգետով հասել ՀԷԿ-երին: Պատվարի անվտանգության տեսանկյունից նման գործելակերպը չափազանց ռիսկային է և պետք է արգելվի, քանի որ պատվարը նախագծվել է ապահովելու համար ջրամբարի կայունությունը մինչև ջրի՝ նորմալ դիմհարային մակարդակին/հորիզոնին հասնելը, ոչ թե ջրաթափը տնական ժամանակ շահագործելու համար: Նման պրակտիկան խախտում է թե՛ պատվարների շահագործման գործող նորմերը, թե՛ ազգային օրենսդրության պահանջները: Նման տնական շահագործումը ջրի ավելի բարձր մակարդակների պարագայում կարող է վտանգել պատվարի անվտանգությունը: Քանի որ Գեղարդալճի ջրամբարի մեծացումը Ծրագրի մի մաս է կազմում, այս հարցը բարձրացվել է կառավարությունում[5], և Ղեկավարությունը՝ ԾԻԳ-

[5] Ջրամբարն արտահոսելու և ջրաթափն անպատշաճորեն օգտագործելու խնդիրն առաջին անգամ գրանցվել է Պատվարների անվտանգության անկախ հանձնաժողովի 2015թ. հունվարի 8-ի զեկույցում: Այնուհետև դրա մասին 2015թ. դեկտեմբերի 14-ի նամակով (գրանցված է) տեղեկացրել են անմիջապես փոխվարչապետին (2015թ. հոկտեմբերի վերահսկման առաքելությունից հետո):

ի և կառավարության հետ, դիտարկում են իրավիճակի շտկելուն ուղղված միջոցառումներ, որոնք կապահովեն շահագործողի կողմից Շահագործման և պահպանման պլանի պահանջների կատարումը՝ Բանկի քաղաքականությանը համապատասխան [6] : Ավելին, Պատվարների անվտանգության հանձնաժողովի նախագահը այցելելու է օբյեկտը՝ այդ քննարկումները շարունակելու և լուծումներ գտնելու նպատակով:

18. ***Ավելի վաղ ներկայացված բողոք-նամակները:*** Նախկինում Բանկին ներկայացվել էին երկու բողոք-նամակ՝ կապված այս համակարգի հետ: Նամակներում արտացոլված մտահոգությունները նույնն էին: Առաջին նամակը ստացվել է 2015թ. նոյեմբերի 24-ին; այն բերել է Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ մասնավոր ՀԷԿ-ը շահագործողը: Պատասխանը տրամադրել են ԾԻԳ-ը և Բանկի թիմը: Հարցերից շատերը բարձրացվել են նաև Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) քննարկումների ժամանակ և ստացել են իրենց պատասխանները: Երկրորդ բողոքը՝ ստորագրված մեկ այլ անհատի կողմից և նույն մտահոգություններով, ներկայացվել է 2016թ. մայիսի 5-ին Վաշինգտոնում Համաշխարհային բանկի Արտաքին և կորպորատիվ կապերի գրասենյակ:

19. Ղեկավարությունը նշում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները հայտնում են, որ Գեղարդալճի համակարգի աշխատանքները դադարեցված են՝ ի պատասխան քաղաքացիների բողոքի ցույցերին, որոնք տեղի են ունեցել Գողթում հունիսի սկզբին: Սակայն Հայաստանի կառավարության կողմից Բանկն այդ հայտարարության հաստատումը չի ստացել:

20. ***Ղեկավարությունը ստորև պատասխանում է առաջին դիմում-պահանջում արտահայտված մեղադրանքներին: Դիմողների գանգատները՝ Ղեկավարության մանրամասն պատասխաններով, ներկայացված են Հավելված 1-ում:***

(a) Գողթին անբավարար ջրամատակարարման ենթադրյալ ռիսկը

21. *Դիմում-պահանջը պնդում է, որ Գողթ համայնքի տարեկան ջրի պահանջարկը կազմում է 4,4 միլիոն մ³ և որ այն չի կարող մատակարարվել առաջարկվող ինքնահոս համակարգով, որը ջրամբարից ջուր է մատակարարելու նաև լրացուցիչ համայնքներին:*

22. ***Ղեկավարությունը գտնում է, որ այդ պնդումը ճիշտ չէ: Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի ծրագրով նախատեսվում է ավելացնել Գեղարդալճի ջրամբարի տարողությունը 2,4 միլիոն մ³-ից մինչև 3,4 միլիոն մ³, որպեսզի հնարավոր լինի ոռոգել ընդհանուր 1448 հա գյուղատնտեսական նշանակության հողերը բոլոր թիրախային համայնքներում:*** Այս տարածքը ներառում է Գողթ համայնքի 705 հա ոռոգելի հողերը, ընդ որում՝ ընդամենը 550 հեկտարն է այժմ ոռոգվում Գեղարդալիճ-Գողթ խողովակաշարից, իսկ Գեղադիր, Հացավան և Ողջաբերդ համայնքների

[6] Օրինակ, մարտկոցով սնվող պյեզոմետրերի տեղադրում, Կարմիր գետի բաժանարարի բարելավում, Կարմիր գետի հեռացնող ջրանցքի վրա ավտոմատացված մշտադիտարկման սարքի տեղադրում և այլն:

գյուղատնտեսական նշանակության 743 հա հողերի ոռոգումը կապահովվի 26 կմ երկարությամբ նոր խողովակաշարի կառուցմամբ: Հարկ է նշել, որ նույն ջուրը, որն այժմ հոսում է ներքև դեպի այն կետը, որտեղից պոմպերով մղվում է թիարախային համայնքներին, կկուտակվի մեծացրած ջրամբարում, իսկ հետո ինքնահոս եղանակով կտեղափոխվի դեպի նույն համայնքները: Ծրագիրը չի ավելացնում ոռոգվող տարածքը, թիրախային համայնքներին մատակարարվող ոռոգման ջրի ծավալը նույնպես չի փոխվում:

23. ***Դիմում-պահանջում ներկայացված պնդումը, որ ջրամբարի մեծացրած ծավալը բավարար չէ Գողթին և լրացուցիչ համայնքին ջուր մատակարարելու համար, հիմնված է ջրի գերագնահատված պահանջարկի վրա, որը չի համապատասխանում ոչ Գողթի ոռոգվող տարածքի ջրապահանջարկին, ոչ էլ ջրօգտագործման պատմական տվյալներին: Բացի դրանից, Գողթ համայնքը չունի տարեկան 4,4 միլիոն մ³ ջուր ստանալու թույլտվություն կամ իրավունք:*** Կարմիր գետից 4,4 միլիոն մ³ ջուր վերցնելու իրավունք ունի Գեղարդալճի ջրամբարը շահագործող Ջրառը (տրված Բնապահպանության նախարարության կողմից): Ըստ հաշվարկների[7], որոնք հիմնվում են 705 հա ոռոգելի հողերի և բնորոշ մշակաբույսերի (բանջարեղենի և մրգերի) ջրապահանջարկի վրա, համայնքի ջրի պահանջարկը կազմում է շուրջ 2,2 միլիոն մ³: Ավելին, պատմական չափումները (և Ջրառի ու ՋՕԸ-ի միջև բանակցված պայմանագրերը) ցույց են տալիս, որ ջրամբարից Գեղարդալիճ-Գողթ խողովակաշար մտնում է միջինը 2,2 միլիոն մ³ ջուր: 2015թ. Գողթի ոռոգման տարածք մտնող կետում տեղադրվել է նոր ջրաչափ սարք, որը ցույց է տվել, որ այդ տարի մատակարարվել է 1, 28 միլիոն մ³ ջուր: 0, 9 միլիոն մ³ տարբերությունը պայմանավորված է համակարգի կորուստներով և ՀԷԿ-ը շահագործողի կողմից կատարվող ջրառով: Վերջապես, մատակարարված ջրի (Գողթ համայնքի գյուղացիներին) դիմաց փաստացի հաշիվը նույնպես ավելի ցածր էր, քան երկու չափումների տվյալները (0,3 միլիոն մ³): Ամփոփելով ասենք, որ 4,4 միլիոն մ³ պահանջարկը չունի ֆիզիկական, պատմական կամ գյուղատնտեսական հիմնավորում: Տես ստորև բերված Աղյուսակ 1-ը և վերևում բերված Պատկեր 3-ը:

Աղյուսակ 1. Գողթ համայնքի ջրի պահանջարկը և մատակարարումը

Ջրի պահանջարկի/մատակարարման տվյալները	**Ջրի տարեկան ծավալները**
<u>Հաշվարկված</u> ոռոգման պահանջը ՝հիմնված 705 հա-ի վրա (1/3 բանջարեղեն, 2/3 այգիներ՝ ըստ ՋՕԸ-ի տվյալների)	Շուրջ 2,2 մլն. մ³
Յուրաքանչյուր տարի Ջրառի և ՋՕԸ-ի միջև ոռոգման ջրի առաքման վերաբերյալ	Պատմական միջին ծավալը՝ շուրջ 2,2 մլն. մ³

[7] Հաշվարկները կատարվել են ԾԻԳ-ի կողմից և արժանացել են Բանկի թիմի հավանությանը:

բանակցված ***պայմանագիր*** ՝հիմնված ՋՕԸ-ի հաշվարկային սպառման վրա:	
Փաստացի չափված ջրի առաքում 2015թ. (2015 թ. տեղադրվել է ջրաչափման նոր սարք՝ ՋՕԸ-ին տրվող ջրի փաստացի ծավալները չափելու համար):	1,28 մլն. մ^3
Փաստացի ներկայացված հաշիվը ՋՕԸ-ի անդամներին՝ ոռոգման ջրի ***ընդհանուր առաքման դիմաց*** (2015թ. ոռոգման շրջանի համար)	0,3 մլն. մ^3

24. ***Գողթ համայնքին տրվող ոռոգման ջրի ծավալը (Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ի միջոցով) ամեն տարի բանակցվում և համաձայնեցվում է Ջրառի հետ պայմանագրային հիմքով, որը ներառում է ամսական ոռոգման ջրամատակարարման ժամանակացույցը տվյալ ժամանակաշրջանի համար:*** Այս տարեկան պայմանագրերը գրանցվում են և վերաբերում են տվյալ տարվա ոռոգման ժամանակաշրջանին: Չկա ոչ մի ապացույց, որ համայնքը երբևէ խնդրել է պատմական մատակարարված ծավալներից ավել ջուր: Բնակչության զգալի աճի և/կամ ոռոգվող տարածքի ընդլայնման բացակայության պարագայում հնարավոր չէ պատկերացնել, որ ապագա ջրի պահանջարկը պետք է լինի պատմական ծավալի կրկնակին:

25. ***Չնայած, որ Գողթի համայնքի կողմից լրացուցիչ ջրի պահանջարկի ոչ մի տեխնիկական հիմնավորում չկա, Ղեկավարությունը նշում է, որ ՀԷԿ-ը կշահի իր համակարգով անցնող ջրի հոսքի ավելացումից:*** ՇՄՍԱԳ-ի քննարկումների ընթացքում ՀԷԿ-ը շահագործողը հատուկ խնդրել էր, որ նոր խողովակի ուղին անցնի ՀԷԿ-ի տարածքով: Բանկի թիմը և ԾԻԳ-ը ուսումնասիրեցին այդ տարբերակը (“հարավային ուղի”) և համարեցին, որ այն զիջում է գոյություն ունեցող պլանին, հաշվի առնելով հողի ձեռքբերման և անվտանգության հետ կապված հնարավոր խնդիրները[8]:

26. ***Դիմում-պահանջում շփոթում են նաև փոփոխված ջրամբարի տարողությունը ջրի տարեկան առկա ծավալի հետ, որն այդ փոփոխված ջրամբարը կարող է մատակարարել:*** Ըստ երևույթին, սա է հանդիսանում պահանջում արտահայտված այն հայտարարության հիմքը, որ ջրամբարի փոփոխված տարողությունը բավարար չի լինի երկու համայնքին սպասարկելու համար: Կարևոր է հասկանալ, որ ջուրը մշտապես մտնում և դուրս է գալիս ջրամբարից: Ուստի ջրամբարից տարվա ընթացքում մատակարարվող ընդհանուր ծավալը (այսինքն, արտահոսքերը) պարտադիր չէ, որ հավասար լինի այն ընդհանուր ծավալին, որը կարող է կուտակված լինել ջրամբարում որևէ պահին: 3-րդ Հավելվածը ցույց է տալիս ջրամբարի ամբողջ ջրի բալանսը և նրա ներհոսքերն ու արտահոսքերը: Նշենք, որ արտահոսքերն այնպիսին են, որ երկու համայնքի ոռոգման պահանջարկն էլ կարող են բավարարել:

[8] Սա այնուհետև քննարկվել է Փոխվարչապետի գլխավորած նիստի ժամանակ (տես ստորև բաժին (գ) հանրային քննարկումների վերաբերյալ): Այս առաջարկն արտացոլված է նաև 2015թ. մարտի վերահսկման առաքելության Հուշագրում:

27. Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում նորոգվելու է գոյություն ունեցող Գեղարդալիճ-Գողթ խողովակաշարի 1 կմ հատվածը: Այս աշխատանքները հիմնված են համայնքի ներկայացրած առաջարկների վրա: Սա խողովակաշարի այն հատվածն է, որը նորոգման առավել մեծ կարիք ունի, քանի որ կորուստներն այստեղ հասնում են շուրջ 40 տոկոսի և որի նորոգման արդյունքում, հավանաբար, կլինեն ջրի զգալի խնայողություններ: Ղեկավարության կարծիքով, այդ խնայողությունների շնորհիվ էլ ավելի կկրճատվի ջրամբարից պահանջվող արտահոսքը: ***Ինչևէ, ինքնահոս համակարգի կենսունակությունը կախված չէ այդ հնարավոր ջրի խնայողությունից, այն հաշվարկվում է ընթացիկ իրավիճակի հիման վրա:***

(b) Կարմիր գետում ջրի առկայության հաշվարկման մեթոդաբանությունը

28. *Պահանջը պնդում է, որ Կարմիր գետի համար հաշվարկած հիդրոլոգիական տվյալները իրատեսական չեն, և ջրամբարին անհրաժեշտ ջրի ծավալը մատակարարելու համար Կարմիր գետում բավարար քանակի ջուր չկա:*

29. ***Ղեկավարությունը համարում է, որ այդ պնդումը ճիշտ չէ: Հիմնվելով պահպանողական և հուսալի մոտեցման վրա, եզրակացությունը (կառավարության՝ Բանկի թիմի օժանդակությամբ) այն է, որ Կարմիր գետում բավարար քանակի ջուր կա՝ Գողթ համայնքի և մյուս թիրախային համայնքների ամբողջ ոռոգման պահանջարկը բավարարելու համար:*** Գեղարդալճի տեխնիկատնտեսական հիմնավորումը գնահատելու համար կատարվեց Կարմիր գետի պրոքսի հոսքերի մոդելավորում, քանի որ այս գետի համար չկան գրանցված երկարաժամկետ պատմական տվյալներ: Այս աշխատանքը կատարեցին Գեղարդալճի նախագծի հեղինակը՝ Հայջրնախագիծ ինստիտուտ ՓԲԸ-ը, իսկ մինչ այդ ՀՄԿ-ի ծրագրի շրջանակներում՝ Հայգյուշիննախագիծ ինստիտուտ ՓԲԸ-ը: Երկու դեպքում էլ կիրառվեց անալոգ մեթոդ, որն ընդունված մեթոդ է հիդրոլոգիայի ոլորտում[9]: Հայջրնախագիծը օգտագործել է պաշտոնական Ազատ-Գառնի հիդրոլոգիական դիտակայանը՝ վերցնելով վերջին 60 տարվա դիտարկումների շարքերը, իսկ մյուս խումբն օգտագործել է պաշտոնական Գեղարոտ-Արագած հիդրոլոգիական դիտակայանը: Առաջին մեթոդի համաձայն, Կարմիր գետի տարեկան հաշվարկված հոսքը 75 տոկոս ջրատվության դեպքում (այսինքն, տվյալ ժամանակահատվածի 25 տոկոսի ժամանակ ծավալը կլինի ավելի փոքր) կազմել է 13,57 միլիոն մ^3, իսկ ըստ երկրորդ մեթոդի՝ այն կազմել է 20,5 միլիոն մ^3: Գոյություն ունեցող նախագծի հաշվարկները և Գեղարդալճի համակարգի ընդհանուր կենսունակությունը որոշելու համար օգտագործված հաշվարկները հիմնված են եղել ավելի պահպանողական (ավելի փոքր) մեծության վրա՝ 13,57 միլիոն մ^3:

30. ***Այս նախագծերն ու վերլուծությունը հիմնված են 75 տոկոս ջրապահովվածության տարիների վրա (ի տարբերություն "միջին***

[9] Տես ՇՄՍԱԳ փաստաթուղթը- էջեր 18-23 անգլերեն տարբերակում; լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է նաև մանրամասն/աշխատանքային նախագծային փաստաթղթերի հիդրոլոգիայի բաժնում:

ջրապահովվածության տարվա” հաշվարկների):[10] Սա ընդունված մոտեցում է հիդրոլոգիայի և նախագծման բնագավառում: Սա նշանակում է, որ դիտարկելով ջրի հոսքերի բնական տատանումները, նախագծողները նախագծել են մի համակարգ, որը պահպանողական է յուրաքանչյուր ամիս և յուրաքանչյուր տարի ենթադրվող հասանելի ջրի տեսանկյունից: Եզրակացությունն այն է, որ նույնիսկ ավելի պահպանողական, փոքր ծավալի օգտագործման դեպքում Կարմիր գետի ջուրը բավարար է ոչ միայն Գողթ համայնքի, այլ նաև մյուս թիրախային համայնքների ամբողջ ոռոգման պահանջարկը բավարարելու համար:

(c) Հանրային քննարկումներ

31. *Դիմում-պահանջները պնդում են, որ Գողթ համայնքի հետ ծրագրի վերաբերյալ քննարկումներ և “լսումներ” չեն եղել:*

32. ***Այս ծրագրի համար մշակվել է Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ (ԲՍԿՇ), որը հրապարակվել է երկրում; հանրային քննարկումների հանդիպումը հիմնական շահառուների[11] հետ տեղի է ունեցել Երևանում, 2013թ. փետրվարի 25-ին:*** Ծրագրի առանձին ներդրումները որոշելուն պես, մշակվեցին, հրապարակվեցին և քննարկվեցին նաև ՇՄՍԱԳ-ներ առանձին օբյեկտների համար, այդ թվում՝ Գեղարդալճի ոռոգման համակարգի ՇՄՍԱԳ-ը:

33. ***Գեղարդալճի ոռոգման համակարգը և նրա բնապահպանական և սոցիալական կողմերը լայնորեն քննարկվել են ազդակիր համայնքների հետ հինգ փաստագրված խորհրդակցական հանդիպումների ժամանակ:*** Առաջին հանդիպումը տեղի է ունեցել ***2014թ. նոյեմբերի 19-ին*** Գողթում՝ մասնակիցների հետ համակարգի նախնական նախագիծը քննարկելու նպատակով: Գողթ համայնքի ներկայացուցիչները չհամաձայնվեցին խողովակաշարի առաջարկված ուղեգծի հետ և խնդրեցին փոխել ուղին այնպես, որ խողովակաշարն անցնի մշակվող հողամասերին ավելի մոտ, ինչը թույլ կտա մարդկանց ոռոգման համար օգտագործել սելավաջրեր այն ժամանակ, երբ ջուրը ջրամբարից չի մատակարարվում: Հետագայում երևաց, որ սա լավագույն տարբերակը չէ:[12]

34. Երկրորդ հանդիպումը տեղի է ունեցել ***2015թ. հունվարի 27-ին***, որի նպատակն էր քննարկել շահառուների հետ ծրագրի նախագծի բնապահպանական և սոցիալական կողմերը՝ ազգային ընթացակարգերի համաձայն, որոնք պահանջվում են շրջակա միջավայրի գնահատման և առաջարկվող ներդրումների փորձագիտության համար: Այս հանդիպմանը մասնակցեցին Գողթի գյուղապետը և համայնքի

---

[10] Յոթանասուն հինգ տոկոս հավանականություն ունեցող տարիներ՝ նշանակում է այն հիդրոլոգիական տարիները, որոնք տեղի են ունենում չորս տարին մեկ անգամ: Սա ավելի պահպանողական մոտեցում է, քան երկու տարին մեկ տեղի ունեցող հիդրոլոգիական տարիներ օգտագործելը:

[11] Այդ թվում՝ կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, գիտնականները, ՀԿ-ները և ՋՕԸ-երը:

[12] Տես 2015թ. մարտի Հուշագիրը:

ներկայացուցիչները: Հարցեր հնչեցին ոռոգվող տարածքի և հետագա ոռոգման ջրապահանջարկի վերաբերյալ:

35. Գեղարդալճի համակարգի նախագծի վերջնական սևագիր տարբերակը քննարկվեց Երևանում՝ ***2015թ. փետրվարի 25-ին*** տեղի ունեցած երրորդ հանդիպման ժամանակ: Մասնակիցներն ընդունեցին նախագիծը, թեև հարցեր հնչեցին միջտնտեսային և ներտնտեսային ենթակառուցվածքի վերաբերյալ, որը Ծրագրի շրջանակում ընդգրված չէ: Նշվեց, որ մեկ այլ առաջիկա ծրագիր՝ Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիրը, հավանաբար, կանդրադառնա այդ մտահոգություններին: Համայնքը տեղեկացվեց դրա մասին:

36. Չորրորդ հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ Երևանում ***2015թ. ապրիլի 16-ին,*** Ծրագրի բնապահպանական փորձագիտությունն իրականացնող պետական մարմնի (Բնապահպանության նախարարության ենթակայության տակ) ներկայացուցիչը տեղեկացրեց մասնակիցներին կառավարության կողմից ծրագրի փաստաթղթերի ուսումնասիրության գործընթացի, ստացած հանրային կարծիքի և առաջարկվող դրական եզրակացության մասին: Մասնակիցները, այդ թվում՝ Գողթ համայնքի ղեկավարը, համաձայնվեցին փորձագիտական քննության երկրորդ փուլի որոշումների հետ, որոնք ներառում էին շինարարությունը շարունակելու թույլտվությունը և մի շարք սահմանված կանխարգելիչ/մեղմացնող գործողություններ:

37. Օբյեկտի վերջնական նախագծի ՇՄՄԱԳ-ը իրականացվել է Բանկի OP/BP 4.01 քաղաքականության պահանջներին համապատասխան: Հինգերորդ հանդիպումն այնուհետև տեղի է ունեցել ***2015 թ. սեպտեմբերի 9-ին*** Հացավանում, որը կազմակերպել է ԾԻԳ-ը ՇՄՄԱԳ-ի հաշվետվության նախագիծը քննարկելու նպատակով: Գողթ համայնքի ղեկավարը խոսեց համայնքին հուզող հարցերի մասին, որոնք վերաբերում էին Ծրագրի նախագծին, սակայն հաստատեց, որ նախագծման խորհրդատուն տրամադրել է հավաստիացումներ, որ համակարգի առաջարկվող վերակառուցման արդյունքում Գողթ համայնքի համար հասանելի ջուրը չի պակասելու: Համայնքի ղեկավարը հաստատել է Գողթ համայնքի օժանդակությունը առաջարկվող նախագծին:

38. Կառավարության հետ 2015թ. դեկտեմբերին տեղի ունեցած քննարկումներից հետո փոխվարչապետը գումարել է ժողով Ջրտնտպետկոմի նախագահի, ԾԻԳ-ի տնօրենի, ԾԻԳ-ի ճարտարագետի և Շրջակա միջավայրի մասնագետների, ինչպես նաև նախագծողի (Հայջրնախագիծ ինստիտուտի տնօրենի) և Գողթ համայնքը ներկայացնող երկու հոգու, այդ թվում՝ ՀԷԿ-ի շահագործողի մասնակցությամբ: Այդ հանդիպման ընթացքում նախագծողը բացատրեց այլընտրանքային՝ հարավային ուղու հետ կապված խնդիրները, այդ թվում՝ բազմաթիվ մասնավոր հողակտորներով անցնելը, ինչն առաջացնում է տարաբնակեցման և փոխհատուցման խնդիրներ, գծի երկայնքով ջրի գողության հնարավորությունը և այլն: Ըստ Ղեկավարության տվյալների, ժողովի մասնակիցները եկել էին փոխհամաձայնության:

39. 2015թ. փետրվարի 25-ին և 2015թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած հանրային քննարկումների արձանագրությունները ներառված են ՇՄՄԱԳ-ի հաշվետվության

մեջ[13]: Գողթ համայնքում տեղի ունեցած մյուս քննարկումների արձանագրությունները նույնպես կցված են գործին:

(d) Ջրի հատկացման կառավարում

40. ***Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը[14] կարևոր գործիք է և իրավական հիմք՝ երկրում տարբեր օգտագործողների միջև ջրային ռեսուրսների բաշխման համար:*** Թույլտվությունների տրամադրման համակարգի գնահատումը, ինչպես նաև համակարգի հզորացմանն ուղղված առաջարկությունները ներկայացված են "*Դեպի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարումը Հայաստանում*" (Համաշխարհային բանկ, 2015թ.) զեկույցի մեջ: Թույլտվության պահանջների կատարումն ապահովելու հիմնական միջոցը մշտադիտարկման սարքերի տեղադրումն է, որը ֆինանսավորվում է Ծրագրի շրջանակներում: Սա կարևոր է նաև ջրօգտագործողների փաստացի գնված ջրի ծավալները հաստատելու համար: Ավելին, մոնիտորինգի թափանցիկ համակարգը կարող է օգնել, որ ջրի սակավության դեպքում բոլոր համայնքները ստանան հավասար քանակի ջուր:

41. ***Ծրագիրը չի ազդում ջրի ընդհանուր առկայության վրա և չի փոխում համայնքներին հատկացվող ջրի ծավալները:*** Ծրագիրը փոխում է նույն գետից իրականացվող նույն ծավալի ջրառի մեթոդն ու տեղը միայն: Երաշտային իրավիճակ կարող է ստեղծվել ինչպես ծրագրի իրականացման դեպքում, այնպես էլ առանց ծրագրի: "Առանց ծրագրի" իրավիճակում համայնքը կարող է կանգնել ջրի սակավության խնդրի առջև: Սակավաջրի կամ երաշտի պայմաններում կառավարությունը կարող է սահմանափակումներ կիրառել ցանկացած և բոլոր ջրօգտագործողների նկատմամբ, որպեսզի ապահովի նվազագույն ջրամատակարարումը գետի երկայնքով բոլոր համայնքների կամ բնապահպանական հոսքի համար[15]:

42. ***Ավելին, երբ հարցը վերաբերում է պետական ենթակառուցվածքի շահագործմանը, ոչ մի համայնք նախապատվություն չունի մյուսի նկատմամբ:*** Գողթ համայնքը գոյություն ունի ավելի մեծ ավազանի համատեքստում (ավազանում գտնվող այլ օգտագործողների հետ միասին) և այդ համայնքի ստացած ջուրը (հիմա թե ապագայում, Ծրագրով թե առանց Ծրագրի) ոչ միայն այս ջրամբարով է որոշվում: Գեղարդալճի ջրամբարը ավտոնոմ ջրամբար է, և որպես այդպիսին, կառավարությունը՝ ըստ Ջրային օրենսգրքի, կարող է (Ծրագրով կամ առանց Ծրագրի) պակասեցնել համայնքի հատկացումները՝ համակարգի մյուս օգտագործողների հետ հավասարակշռությունը ապահովելու մտադրությամբ:

[13] Հաշվետվությունը հասանելի է հետևյալ կայքում՝ http://piu.am/attachfiles/3525348_241075_3.pdf
[14] Ներդրվել է Ջրային օրենսգրքով՝ 2002թ:
[15] Իրավական հիմքը ներկայացված է Ջրային օրենսգրքի Հոդված 92-ում (2002):

V. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՄՈՒՄ- ՊԱՀԱՆՋԻՆ

43. ***Քաղցրաշենի գործող ոռոգման համակարգը*** (տես Պատկեր 4) սպասարկում է պոմպերով 1,232 հա ոռոգվող հող: Պոմպերը ջուրը վերցնում են ջրանցքից, որը սնվում է գոյություն ունեցող Ազատի ջրամբարից: Ջրի կորուստներն այս մոտեցնող ջրանցքում բավականին բարձր են (40-50 տոկոս), իսկ պոմպերը գտնվում են նույն վատ վիճակում, ինչպես և Գեղարդալճի համակարգի պոմպերը, ինչը նույնպես հանգեցնում է գյուղատնտեսական արտադրության ու բերքատվության ոչ օպտիմալ արդյունքների : Այդ պոմպերն օգտագործում են շուրջ 10 միլիոն կՎտ/ժ հոսանք, ինչը շահագործման և պահպանման ծախսերի հետ միասին տարեկան կազմում է շուրջ 1 միլիոն ԱՄՆ դոլար:



Պատկեր 4. Քաղցրաշենի ոռոգման համակարգի քարտեզ
(կարմիրը՝ առաջարկվող ինքնահոս խողովակաշարը)

44. Ծրագրի շրջանակներում ***առաջարկված Քաղցրաշենի <u>ինքնահոս</u> ոռոգման համակարգը*** 27.5 կմ երկարությամբ ինքնահոս խողովակաշարով առաքելու է նույն ծավալի ոռոգման ջուր այն նույն տարածքներին, որոնք այժմ սպասարկվում են Քաղցրաշենի պոմպակայանով: Այս ծրագիրը հնարավորություն կտա դադարեցնել

պոմպերի շահագործումը: Նպատակին հասնելու համար Ազատ գետի վրա՝ Գառնիի մոտ, որտեղ լանդշաֆտը թույլ է տալիս ոռոգել ինքնահոս եղանակով, կառուցվելու է ջրընդունիչ կառուցվածք (գլխամասային հանգույց մոտ 2 մ բարձրությամբ և առավելագույնը՝ 20 մ լայնությամբ): Պոմպակայանն այնուհետև կարելի է շահագործումից հանել: Խողովակաշարը (տրամագիծը՝ 0,8 - 1 մ) կլինի հիմնականում ստորերկրյա[16] և հենց այդ պատճառով շինարարության ավարտից հետո վիզուալ շատ չնչին ազդեցություն է ակնկալվում: Ըստ պայմանագրի պարտավորությունների, շինարարության տարածքն ամբողջությամբ վերականգնվելու է: Այս պահի դրությամբ այդ աշխատանքների համար շնորհվել է երեք պայմանագիր, և շինարարությունը նոր է սկսվել:

45. ***Նախքին բողոք-նամակը:*** Նախկինում Բանկին ներկայացվել էր բողոք-նամակ՝ կապված այս համակարգի հետ: Այն նամակի հիմնական հեղինակը նույն անձն է, որը ներկայացրել է սույն ստուգման պահանջը: Բողոք-նամակում և այս դիմում-պահանջում ներկայացված մտահոգությունները նույնն են: Նամակը ստացվել է 2016թ. փետրվարի 3-ին, իսկ Բանկի թիմի պատրաստած պատասխանը ուղարկվել է 2016թ. փետրվարի 19-ին: Դրանից բացի, 2016թ. մարտի 10-ին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակում նամակը ստորագրած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ կազմակերպվեց կլոր սեղան-քննարկում: Այս հանդիպումը նկարվել և արձանագրվել է:

46. 2016թ. մայիսի սկզբին կազմակերպած ցույցերից հետո կառավարությունը հայտարարել է, որ կրկին անգամ կուսումնասիրի առաջարկվող համակարգերը՝ հնարավոր փոխզիջումային լուծումներ դիտարկելու նպատակով: Ղեկավարությունը նշում է, որ թեև երկու համակարգի փոխզիջումային լուծումներն էլ կարող են տեխնիկապես իրագործելի լինել, դրանք էապես կզիջեն գոյություն ունեցող նախագծին և զգալիորեն կնվազեցնեն էլեկտրաէներգիայի հնարավոր խնայողությունները: Ղեկավարությունն այժմ սպասում է կառավարությունից պաշտոնական տեղեկություն այդ երկու համակարգին առնչվող պլանների վերաբերյալ: Մինչ այդ համապատասխան աշխատանքները դադարեցվել են:

47. ***Ստորև բերված են Ղեկավարության պատասխանները երկրորդ դիմում-պահանջում ներկայացված պնդումներին: Դիմողների հայտարարությունները, որոնք ուղեկցվում են Ղեկավարության մանրամասն պատասխաններով, ներկայացված են 2-րդ Հավելվածում:***

(a) Բնապահպանական մտահոգությունները

48. *Դիմում-պահանջը պնդում է, որ Ազատ գետում բավարար քանակի ջուր չկա՝ առաջարկված համակարգի պարագայում բնապահպանական թողքն ապահովելու համար, ինչի արդյունքում գետը "կցամաքի":*

[16] 27 կմ երկարությամբ խողովակաշարի ընդամենը 370 մետրն է լինելու բաց:

49. ***Հիդրոլոգիական ուսումնասիրություններով հաստատվել է, որ ջուրը բավարար է թե՛ ոռոգման պահանջարկները, թե՛ բնապահպանական պահանջները բավարարելու համար*** [17] **:** Քաղցրաշենի համակարգի նախագիծը հիմնված է Հայաստանի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության պաշտոնական տվյալների վրա: Առաջարկվող գլխամասային հանգույցի վերին հոսանքում գտնվում է պաշտոնական դիտակայան ավելի քան 60 տարվա տվյալներով: Ելնելով այս տվյալներից, կարելի է որոշել, որ կա բավարար քանակի ջուր պահանջարկը բավարարելու համար: Այս վերլուծությունը ներկայացված է 3-րդ Հավելվածում (ինչպես միջին ջրատվության, այնպես էլ 75 % ջրապահովվածության տարվա համար) և ՇՄՍԱԳ-ի փաստաթղթերում:

50. ***Գլխամասային հանգույցը չի սահմանափակելու բնապահպանական թողքը:*** Դիմում-պահանջում ներկայացված պնդմանը հակառակ՝ առաջարկվող գլխամասային հանգույցը չի սահմանափակելու 850լ/վարկ. պահանջվող բնապահպանական թողքը: Ըստ գլխամասային հանգույցի նախագծի, բնապահպանական թողքի ելքը գտնվում է ոռոգման ջրառի կետերից ներքև, ուստի ֆիզիկապես հնարավոր չէ ջրառ իրականացնել, մինչև ապահովված չլինի բնապահպանական թողքը: Այս նախագիծն արտացոլում է Հայաստանի օրենսդրությունը, որը ջրօգտագործման բոլոր մնացած նպատակներից, այդ թվում՝ ոռոգման պահանջարկից, առավել կարևոր է համարում բնապահպանական թողքի ապահովումը: Գլխամասային հանգույցի մոտ տեղադրվելու է ջրաչափական սարք՝ այդ պահանջի կատարումն ապահովելու նպատակով, և Ղեկավարությունը խորհուրդ է տալիս ապահովել ջրաչափի հասանելիությունը համայնքի հսկողության համար:

(b) Ջրամատակարարումը Գառնիում

51. *Դիմում-պահանջը պնդում է, որ բնապահպանական թողքը և ոռոգման ջրապահանջարկը բավարարելու համար բավարար քանակի ջուր չկա:*

52. ***Ծրագիրը չի ազդում Գառնիի համայնքի ոռոգման ջրառի վրա:*** Թե՛ շահառու համայնքները սպասարկող ոռոգման պոմպակայանը, թե՛ առաջարկվող գլխամասային հանգույցը գտնվում են Գառնիի համայնքի ոռոգման ջրառի կետի ստորին հոսանքում (տես Քարտեզ 3 և Պատկեր 4):

53. ***Ղեկավարությունը հասկանում է, որ Գառնի ՋՕԸ-ը խիստ մտահոգված է նրանով, որ Ծրագրի շրջանակներում ջրի մոնիտորինգի ներդրումը կհանգեցնի նրան, որ ջրառի՝ գործող թույլտվություններին համապատասխան, իրականացման պահանջը կկիրարկվի ավելի արդյունավետ կերպով:*** Խոսքը գնում է նրա մասին, որ ՋՕԸ-ի ջրառը հիմա բավականին գերազանցում է թույլտվությամբ սահմանված քանակը: Համաձայն 2013թ. նոյեմբերի 16-ին տրված թույլտվության, ՋՕԸ-ը Գառնի համայնքին ոռոգման ջուր մատակարարելու համար կարող է վերցնել Ազատ գետից ***310 լ/վարկ*** ջուր: 2015թ. օգոստոսի 21-ի ուսումնասիրությունը (և նախորդ չափումների տվյալները) ցույց

[17] Վերլուծությունը ներկայացված է նախագծային փաստաթղթերում և ՇՄՍԱԳ-ի հաշվետվություններում:

տվեցին, որ Գառնի ՋՕԸ-ի ջրառը կազմել է իրականում ***600լ/վարկ,*** այսինքն՝ թույլատրված քանակի գրեթե կրկնակին: Այս բացահայտումը վախեցրել է համայնքի որոշ անդամներին, որ Ջրտնտպետկոմը կկրճատի ջրառը, որպեսզի այն համապատասխանի տրված թույլտվությանը: Սա հաստատվեց ավելի ուշ՝ 2015թ. նոյեմբերի վերահսկման առաքելության ժամանակ և ավագանու անդամների հետ քննարկումների ընթացքում (նկարագրված է 2015թ. նոյեմբերի Հուշագրում): Հարկ է նշել, որ թույլատրված ծավալները հաշվի են առել բնապահպանական հոսքի պահանջները:

54. ***Գառնիի ոռոգման ջրի առկայության հետ կապված մտավախությունները քննարկվել են Բանկի թիմի հետ, չնայած նրան, որ այդ մտավախությունը կապված չէ Ծրագրի հետ, քանի որ ջրառն իրականացվում է առաջարկվող հանգույցի վերին հոսանքում գտնվող կետում:*** Այնուամենայնիվ, Գառնու գյուղապետի, ավագանու և ՋՕԸ-ի ղեկավարի հետ քննարկումներից հետո, Բանկի թիմը՝ փորձելով օգնել, միջնորդեց լրացուցիչ միջոցներ ստանալու համար, նպատակ ունենալով օժանդակել Գառնիի ոռոգվող տարածքները սպասարկող Գառնիի ջրանցքի վերականգնմանը: Այս ջրանցքն այժմ շահագործվում է շատ ցածր արդյունավետությամբ, և վերականգնման արդյունքում էապես կավելանա Գառնիի համայնքի համար հասանելի ջրի ընդհանուր քանակը: Համապատասխան ներդրումները նախատեսված են Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Ոռոգման համակարգի արդիականացման ծրագրում:

(c) Զբոսաշրջության հետ կապված մտավախությունները

55. *Դիմում-պահանջը պնդում է, որ Ազատի կիրճը եղել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտը և որ Ծրագրի աշխատանքները "կոչնչացնեն" կիրճը:*

56. ***Ազատի կիրճը "Վերին Ազատի հարթավայրի" մաս չէ, որը նշված է որպես ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության պոտենցիալ օբյեկտ:*** ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության միակ օբյեկտը, որը գտնվում է աշխատանքների հարևանությամբ, դա Եղվարդի վանքն է [18]: Վանքը գտնվում է առաջարկված գլխամասային հանգույցից ավելի քան 10 կմ հեռու: Խառնաշփոթությունը կարող է մասամբ պայմանավորված լինել նրանով, որ ՅՈՒՆԵՍԿՈ-ի օբյեկտը կոչվում է "Գեղարդի վանքը և Վերին Ազատի հարթավայրը": ՅՈՒՆԵՍԿՈ -ի փաստաթղթերում նշված չէ, որ ամբողջ վերին Ազատի հարթավայրը նախատեսվում է պաշտպանել և համարել ժառանգության օբյեկտ: Բուֆերային գոտին (ինչպես նշում է ՅՈՒՆԵՍԿՈ-ն), որն առանձնացնում է վանքի շուրջ գտնվող տարածքը, 40 հեկտար է կազմում: Ավելին, այս վանքը գտնվում է Չորսելավ գետի մոտ, որը, ըստ էության, Ազատ գետին չի միանում (որտեղ գտնվում է Ծրագիրը) մինչև Ազատի ջրամբարը, այսինքն այն չի գտնվում Ազատի կիրճի անմիջական մոտակայքում, որտեղ առաջարկվում է կատարել աշխատանքները:

[18] http://whc.unesco.org/en/list/960

57. ***Ղեկավարությունը համաձայն չէ, որ Ազատի կիրճը կարող է ենթարկվել էական վիզուալ ազդեցության, ինչպես պնդում է դիմում-պահանջը:*** Ինքը խողովակաշարը լինելու է փակ (ստորգետնյա) և ոչ մի վիզուալ ազդեցություն չի ունենալու, քանի որ տարածքը վերականգնվելու է շինարարական աշխատանքների ավարտից հետո: Առաջարկվող գլխամասային հանգույցը՝ ունենալով բավականին ցածր բարձրություն (առավելագույնը՝ 2 մ), կունենա փոքր տեսողական ազդեցություն:

58. ***Քաղցրաշենի համակարգի աշխատանքները չեն ազդելու Ազատի կիրճում[19] գտնվող բնության չորս հուշարձանների վրա:*** Ազատի կիրճի բնության չորս հուշարձանի վրա հնարավոր ազդեցությունը գնահատել է տեղանքագետների և շրջակա միջավայրի մասնագետների թիմը 2016թ. փետրվարի 21-ին՝ Հայաստանի Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի Ինժեներական գեոդեզիայի բաժնի օժանդակությամբ: Բազալտե երգեհոնը (Քարերի սիմֆոնիան) գտնվում է Քաղցրաշենի գլխամասային հանգույցի վերին հոսանքում՝ 1,3 կմ հեռավորության վրա, և չի ենթարկվելու աշխատանքների ազդեցությանը: Մյուս երեք առաջարկվող հուշարձանները գտնվում են Գառնիի բնակիչներին պատկանող այգիներում և ցանկատարածություններում՝ կիրճի աջ լանջին, Քաղցրաշենի համակարգի նախատեսվող խողովակաշարից շուրջ 150-200 մ հեռավորության վրա: ***Որպես այդպիսին, բնության այդ հուշարձաններից ոչ մեկը չի ենթարկվելու աշխատանքների ազդեցությանը (տես Քարտեզ 4):***

59. ***Զբոսաշրջային գործունեությունը մոտակայքում վերաբերում է հիմնականում Գառնիի առաջին դարի հեթանոսական տաճարին, որը գտնվում է ավելի բարձր մակարդակի վրա՝ գյուղում, ոչ թե կիրճում:*** Զբոսաշրջությունը կիրճում ինքնին բավականին սահմանափակ է: Սակայն, որպես լրացուցիչ նախազգուշական միջոց, գլխամասային հանգույցի կառուցումը չի իրականացվելու հիմնական զբոսաշրջային ժամանակահատվածում՝ հունիսից մինչև օգոստոս:

60. ***Ղեկավարությունը համաձայն է, որ կարող են լինել հնարավորություններ մարզի զբոսաշրջության ներուժը զարգացնելու համար:*** Վերջերս Բանկը բանակցել է Հայաստանի կառավարության հետ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիրը, որը, ի թիվս այլ միջոցառումների, օժանդակելու է այդ տարածքում զբոսաշրջության զարգացմանը:

(d) Հանրային քննարկումներին առնչվող մտավախություններ

61. *Դիմում-պահանջը պնդում է, որ ծրագրի իրականացման պատասխանատուները չեն հետևել Բանկի սահմանած պահանջներին, որոնք նախատեսված են հանրային քննարկումների համար:*

62. Ծրագրի համար մշակվել էր ՇՄՍԿՇ, որը հրապարակվել էր երկրում, իսկ 2013թ. փետրվարի 25-ին[20] Երևանում տեղի էին ունեցել հանրային քննարկումներ հիմնական

[19] Ինչպես նշված է Հայաստանի Բնապահպանության նախարարության 2015թ. նոյեմբերի 15-ի նամակում:
[20] Տես ծանոթագրություն 11:

շահառուների հետ: Ծրագրի անհատական ներդրումները որոշելուց հետո, մշակվեցին, հրապարակվեցին և քննարկվեցին -ներ առանձին օբյեկտների համար, այդ թվում՝ Քաղցրաշենի ոռոգման համակարգի ՇՄՍԱԳ-ը:

63. ***Ծրագրի և ՇՄՍԱԳ-ի վերաբերյալ հանրային քննարկումները կազմակերպվել էին Գառնի համայնքի համար 2014թ. նոյեմբերի 5-ին և 2015թ. փետրվարի 18-ին:*** Այս վերջին քննարկումը չկայացավ, քանի որ ցուցարարները փակել էին Գառնի տանող ճանապարհը: ՇՄՍԱԳ-ի շուրջ վերջնական քննարկումները ավարտվեցին 2016թ. հունվարի 22-ին: Փորձելով ապահովել, որ ցուցարարները չխանգարեն համայնքի անդամներին մասնակցել քննարկումներին, քննարկումներն իրականացվեցին երկու փուլով՝ հնարավորություն տալով արտահայտվել բոլոր ցանկացողներին: Քաղցրաշենի համակարգի ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունը տեղադրված է ԾԻԳ-ի կայքում. http://piu.am/safeguards.asp; տպագրված օրինակները տրամադրվել էին բոլոր ազդակիր համայնքների տեղական կառավարման մարմիններին 2015թ. նոյեմբերին և 2015թ. դեկտեմբերին: Բացի հանրային քննարկումներից, Ծրագրի մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվել էր Գառնի համայնքի հասարակական տարածքներում՝ պաստառների, բրոշյուրների և հաճախ տրվող հարցերը պարունակող բուկլետների/գրքույկների միջոցով: Բոլոր այս նյութերում նկարագրված են Ծրագրի վերաբերյալ բողոքների լուծման/վիճելի հարցերի քննության մեխանիզմների մանրամասները: Մանրամասները ներկայացված են 2016թ. մարտի Հուշագրում:

64. ***Ղեկավարությունը նշում է, որ անհատների մի փոքր խումբ չափազանց ակտիվ էր: Ղեկավարությունը նաև նշում է, որ այդ անհատներն իրր գործում էին մի շարք տարբեր թվով ստորագրողների անունից, սակայն այդ ստորագրություններով նամակները չտրամադրվեցին:*** Գառնի համայնքի տեսակետներն ավելի լավ հասկանալու համար 2015թ. կազմակերպվեցին վեց ֆոկուս խմբերի մի շարք քննարկումներ (ՖԽՔ) և երեք խորացված հարցազրույցներ Գառնի համայնքի տարբեր անդամների հետ: ՖԽՔ-ներում ներառվեցին հեռանկարային շինարարության հարևանությամբ կիրճում գտնվող հողակտորների բոլոր սեփականատերերը, պատահական կարգով ընտրված Գառնի ՋՕԸ-ի ֆերմերները և նույնպես պատահական կարգով ընտրված գառնեցիները (ոչ ֆերմերներ): Այդ քննարկումների նպատակն էր. (ա) տալ լրացուցիչ հնարավորություն գառնեցիների բազմազան շրջանակին բարձրաձայնել Ծրագրի հետ կապված իրենց հուզող բոլոր հարցերը; և (բ) ամբողջականացնել Ծրագրի բնապահպանական և սոցիալական պարտավորվածությունների վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված ջանքերը: ՖԽՔ-ների ընթացքում մասնակիցների հարցերին և մտահոգություններին հնարավոր էր արձագանքել անմիջականորեն և ամբողջականորեն, ավելի հանգիստ և կառուցողական միջավայրում, քան հանրային քննարկումների ժամանակ (չնայած նրան, որ ՖԽՔ-ները չէին փոխարինում հանրային քննարկումները): ՖԽՔ-ները ցուցադրեցին, որ համայնքի որոշ անդամների դեմ լինելը ծրագրին համայնքի ավելի լայն հանրության տեսակետը չէ: Մասնակիցների մեծամասնության վերաբերմունքը՝ պարզաբանումներ տալուց հետո (այդ թվում՝ շինարարության տարածքում բնակիչների հողին վնաս հասցնելու դեպքում փոխհատուցում նախատեսող պայմանագրային պահանջի վերաբերյալ), դարձավ ավելի դրական:

65. ***2016թ. մարտին Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակում կազմակերպվեց հանդիպում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և Գառնիի բնակիչների հետ:*** Այս հանդիպումը կազմակերպվել էր ի պատասխան Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի տնօրենին 2016թ. փետրվարին ներկայացրած բողոք-նամակին, որին ուղարկվել էր նաև գրավոր պատասխան: Այդ հանդիպման ընթացքում Բանկի թիմն օգտվեց ընձեռած հնարավորությունից և քննարկեց երկու կոնկրետ հարց, որոնք հուզում էին համայնքին և ՔՀԿ-ներին. (ա) հարց, թե Համաշխարհային բանկը որ հանրային քննարկումն է համարելու պաշտոնական Քաղցրաշենի համակարգի ՇՄՍԱԳ-ի նպատակի համար (պատասխանն այն էր, որ Համաշխարհային բանկը հաշվի է առնում բոլոր հանրային քննարկումները; բոլոր հանրային քննարկումների արձանագրությունները կցված են եղել առցանց հրապարակված ՇՄՍԱԳ-ի փաստաթղթերին); և (բ) Քաղցրաշենի ինքնահոս համակարգի երեք այլընտրանքային ծրագրերի առաջարկները (արեգակնային էներգիայի կայան, պոմպերի փոխարինում և արդիականացում և տարածքում նոր ջրամբարների կառուցում): Այս այլընտրանքային առաջարկներից յուրաքանչյուրի տեխնիկական կենսունակությունը և արժեքը քննարկվեցին այդ հանդիպման ժամանակ: Բանկի թիմը բացատրեց, թե ինչն է պատճառը, որ այդ առաջարկները չեն համարվել ավելի գերադասելի, քան գոյություն ունեցող ծրագիրը: Մանրամասն արձանագրությունը և տեսագրությունը կցված են գործին:

66. ***Քաղցրաշենի ինքնահոս համակարգի վերաբերյալ հանրային տեղեկատվության բարելավմանը և ՔՀԿ-ների մտավախություններին արձագանքելուն ուղղված ջանքերի ամբողջ ցանկը ներառված է 4-րդ Հավելվածում:***

67. Ղեկավարությունը տեղեկացել է Պահանջի գրանցման ծանուցումից, որ դիմողները պնդում են, որ *"համայնքի անդամներին ահաբեկում էին, ստիպում էին մասնակցել Ծրագրի քննարկումներին և ասում, որ չբողոքեն", չնայած նրան,* որ այս մտահոգությունը ստուգման դիմում-պահանջում չի արծարծվել: Սրանք լուրջ մեղադրանքներ են, որոնց վրա Բանկի ուշադրությունը երբեք չէր հրավիրվել, և Բանկի խորհրդատուները, որոնք դիտորդի կարգավիճակով մասնակցել են հանրային քննարկումներից մի քանիսին, ահաբեկման կամ քննարկումներին մասնակցելու պարտադրանքի միջադեպերի ականատես չեն եղել: Ղեկավարությունը նշում է, որ առնվազն մեկ տեսագրված դեպքում դիմում-պահանջի հեղինակները ղեկավարում էին մի խումբ մարդկանց, ովքեր փակում էին դեպի հանրային քննարկումների անցկացման վայրը տանող ճանապարհը, որպեսզի համայնքի անդամները չմասնակցեն կազմակերպվող հանրային քննարկումներին:

(e) Կառավարման հետ կապված մտահոգությունները

68. *Դիմում-պահանջը պնդում է նաև, որ Ծրագրի շարժառիթը եղել է վարչապետին պատկանող հողերի ոռոգման ջրով ապահովելը:*

69. Ղեկավարությունը նշում է, որ Ծրագիրը պատրաստվել էր 2012-2013թթ.՝ նախորդ կառավարության օրոք, երբ գործող վարչապետը իշխանության չէր եկել: Երկրորդը, ինչպես արդեն ասվել է, Ծրագիրը փոխելու է նույն քանակությամբ ջրառի

իրականացման եղանակը միայն: Ծրագրի շնորհիվ առաջացող խնայողություններից օգտվելու են ոչ թե որոշ անհատներ, այլ ամբողջ երկիրը:

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

70. ***Ղեկավարությունը ուշադիր ուսումնասիրել է երկու դիմում-պահանջում բարձրացրած խնդիրները և եզրակացրել, որ դիմողների իրավունքները կամ շահերը չեն ենթարկվել կամ, ամենայն հավանականությամբ, չեն ենթարկվելու Ծրագրի բացասական ազդեցությանը: Ղեկավարությունը համաձայն չէ, որ Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագիրը կունենա դիմում-պահանջներում նշված հնարավոր բացասական ազդեցությունները:***

71. ***Ղեկավարության կարծիքով, ստուգման պահանջները հիմնված են Ծրագրի և նրա շարժառիթների վերաբերյալ մի շարք սխալ պնդումների վրա:*** Սա հիմնականում վերաբերում է Ազատ և Կարմիր գետերում առկա ջրի ծավալներին, երկու համայնքի համար ոռոգման ջրի առկայությանը և Ծրագրի շինարարական աշխատանքների ակնկալվող ազդեցությանը: Կա նաև ընդհանուր անվստահություն իրավական մեխանիզմների նկատմամբ, որոնք կառավարությունը կիրառում է ջրի բաշխման գործընթացի համար:

72. ***Ղեկավարությունն ընդունում է, որ կարող են լինել զանազան հուզող հարցեր՝ կապված ջրի առկայության և մատակարարման հետ, և շարունակում է ջանքեր գործադրել, որպեսզի օգնի կառավարությանը ստեղծել կապեր շահագրգիռ կողմերի և ազդակիր համայնքների հետ՝ այս բարդ հարցերն ավելի լավ բացատրելու և նրանց կարծիքը իմանալու նպատակով: Սակայն, դիմում-պահանջներում նշված խնդիրները մանրամասն ուսումնասիրելուց հետո, Ղեկավարությունը համաձայն չէ այն կարծիքի հետ, որ նշված դեպքերում ակնկալվող վնասը Բանկի քաղաքականությանը չհետևելու արդյունք է:***

73. ***Ղեկավարությունը պնդում է, որ երկու առաջարկվող համակարգերն էլ պատրաստվել են մանրամասն մտածված կերպով և համահունչ են Բանկի քաղաքականության պահանջներին, իսկ առկա տվյալները բավականաչափ հիմնավոր են, որպեսզի բացառեն այդ համակարգերի բացասական ազդեցությունը համայնքների ջրի հասանելիության վրա:***

74. ***Ղեկավարությունը տեղյակ է եղել երկու դիմում-պահանջում արտահայտված խնդիրների մասին դեռ մինչև դրանք ներկայացնելը և անցած երկու տարվա ընթացքում ներառված է եղել այդ խնդիրների շուրջ ինտենսիվ քննարկումների մեջ Ծրագրի շահառուների հետ:*** Բանկի թիմը գործադրել է զգալի ջանքեր՝ շահառուներին հուզող հարցերին անդրադառնալու համար, օգտագործելով հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, այդ թվում՝ ՇՄՍԱԳ-ի քննարկումների և լրացուցիչ հանդիպումների ժամանակ, ինչպես նաև կատարելով համատեղ ջրաչափական այցեր շահագրգիռ համայնքների անդամների հետ: Ղեկավարությունը կշարունակի այդ ջանքերը: Բանկի թիմը գործադրել է զգալի ջանքեր, որպեսզի լսի շահառուներին հուզող

հարցադրումները և լուծի դրանք: Բոլոր շահագրգիռ կողմերի համար Ծրագրի վերաբերյալ առկա տեղեկատվության հասանելիության ապահովումը եղել է Բանկի ուշադրության կենտրոնում՝ լայնածավալ քննարկումներ (այդ թվում ՇՄՍԱԳ-ի ընթացքում) և լրացուցիչ հանդիպումներ կազմակերպելու հետ մեկտեղ:

75. Ինչպես արդեն նշվել է, Ղեկավարությունը շեշտում է, որ Ծրագրի նպատակն է կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը անարդյունավետ մեխանիկական ոռոգման համակարգերում՝ փոխարինելով դրանք ինքնահոս խողովակաշարերով: Ծրագիրը չի փոխում կամ չի ազդում ջրի բաշխման գործող մեխանիզմների, ջրօգտագործման թույլտվությունների կամ համայնքների ոռոգման ջրի հասանելիության վրա: Ոռոգման երկու համակարգն էլ՝ աշխատելով ինքնահոս եղանակով, կատարելու են նույն ծավալի ջրառ նույն ջրուղիներից, ինչպես որ դա կատարվում է հիմա մեխանիկական ոռոգման համակարգերով: Որոշ շահառուների հակադրվելը Ծրագրին, ինչի պատճառը ընդամենը ջրառի կետի տեղափոխումն է, ցուցադրում է գետի երկայնքում գտնվող ջրօգտագործողների միջև վստահության բացակայությունը և, հատկապես, գործող համակարգի շրջանակներում ջրօգտագործման թույլտվության մեխանիզմի կիրարկման թերությունները: Ծրագիրը նպատակ ունի բարելավել ջրի հոսքերին և ջրի բաշխման գործող մեխանիզմներին առնչվող տեղեկատվության հասանելիությունը:

76. ***Ղեկավարությունը նշում է նաև, որ Ծրագրի տարածքում ոռոգման ջրի բաշխման և մատակարարման կառավարման կառուցվածքը գտնվում է ոչ ֆորմալ մեխանիզմների և ապօրինի գործելակերպի մեծ ազդեցության տակ:*** Ղեկավարության կարծիքով, այդ մեխանիզմները կարող են հնարավորություն տալ որոշ շահառուներին օգտվել մյուսների հաշվին և՝ Ղեկավարության կարծիքով, կարող են նպաստել նրան, որ Ծրագրի որոշ շահառուներ Ծրագրի իրականացմանը դեմ արտահայտվեն: Ղեկավարությունը մասնավորապես նշում է, որ Ծրագիրը ցանում է ապահովել ջրի օգտագործման թափանցիկությունը և նպաստել համայնքի կողմից ջրօգտագործման մոնիտորինգի բարձրացմանը, ինչը, կարծես, չի ողջունվում որոշ շահառուների կողմից: Նման ոչ ֆորմալ մեխանիզմներից ոմանք նկարագրված են ստորև.

> ***Գողթ:*** Ղեկավարությունը նշում է, որ ոռոգման ջրի մատակարարման խողովակը ամբողջությամբ գտնվում է ՀԷԿ-ը շահագործողի հսկողության տակ: Այս պատճառով չկա որևէ թափանցիկություն ջրի բաշխման և դրա՝ ոռոգման կամ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակներով օգտագործման (մրցակցող ու իրարամերժ պահանջարկների) վերաբերյալ: Ուստի համայնքը չունի ոչ մի միջոց, որպեսզի ստուգի, թե ջրամբարի չափված արտահոսքից ինչքանն է փաստացի մատակարարվում ՋՕԸ-ին ոռոգման նպատակների համար, և ինչքան ջուր է վերցնում ՀԷԿ-ը շահագործողն իր ջերմոցների սպասարկման կամ երկրորդ ՀԷԿ-ի տուրբինի շահագործման համար, ընդ որում երկուսն էլ պատկանում են այդ շահագործողին: Հավասարապես կարևոր է նշել, թե որքան ռիսկային է ջրամբարի գերլցման գործելակերպը, որը նպատակ է հետապնդում ջրաթափի օգտագործման միջոցով ավելացնել Գողթ գետ լցվող ջրի քանակը, ինչը օգուտ է բերել բացառապես ՀԷԿ-ի աշխատանքին:

- ***Գառնի.*** Ոչ բոլոր համայնքներն են ողջունել Ծրագրի ջանքերն՝ ուղղված ջրի բաշխման և մատակարարման թափանցիկության խթանմանը (օր., ջրի մոնիտորինգի սարքերի տեղադրում): Գառնիում դա, հավանաբար, կապված է ՋՕԸ-ի ջրառի հետ, որը գերազանցում է ջրի թույլտվությամբ սահմանված ծավալը: Ղեկավարությունը նշում է, որ Գառնիի համայնքի մոտ գտնվող սարքը, որը մշտադիտարկում և չափում է ՋՕԸ-ի ջրառը, գողացել են: Ծրագրի շրջանակներում համայնքի անդամների մասնակցությամբ կատարվեց ջրաչափման համատեղ միջոցառում, որի նպատակն էր արձագանքել համայնքին հուզող հարցերին և տրամադրել այդ մտավախություններին տրվող պատասխանների ապացույցը: ***2015թ. օգոստոսի 15-ին համայնքի հետ համատեղ վերջին չափման ժամանակ այդ գործողությունը ընդհատվեց Գառնի համայնքի մի քանի անդամների կողմից, և այլևս չէր կարող իրականացվել մասնակիցներին ուղղված ֆիզիկական և բանավոր սպառնալիքների պատճառով (այդ թվում՝ ԾԻԳ-ի թիմի նկատմամբ):***

77. ***Գործողություններ: Ղեկավարությունը ուշադիր ուսումնասիրել է երկու դիմում-պահանջում բարձրացված խնդիրները և չի կարողացել հայտնաբերել քաղաքականության չկատարման դեպքեր:*** *Ուստի ստորև առաջարկված գործողությունները նախատեսված չեն քաղաքականության պահանջների կատարումն ապահովելու համար, այլ ավելի շուտ* լրացուցիչ ջանքեր են շահառուներին հուզող հարցերին արձագանքելու և Ծրագրի իրականացումը բարելավելու ուղղությամբ:

- Հաշվի առնելով ընդհանուր անվստահությունը ջրի հոսքի տվյալների նկատմամբ, հատկապես հսկողության կարևոր կետերում (օր., գլխամասային հանգույցում, Կարմիր գետի հեռացնող ջրանցքում), Բանկի թիմը խնդրում է ԾԻԳ-ին տեղադրել այդ կետերում իրական ժամանակի ռեժիմով աշխատող լրացուցիչ ջրաչափական սարքեր (ինչը կհամալրի Ծրագրի սարքավորումների ծրագիրը):

- Հարկավոր է շարունակել ավելի ակտիվ տեղեկատվության փոխանակման արշավը, որպեսզի այդ տեղեկատվությունը դառնա էլ ավելի մատչելի հանրության համար, և ապահովել համայնքների ավելի սերտ ներգրավվածությունը իրենց ջրի հոսքերի մոնիտորինգի աշխատանքներում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԴԻՄՈՒՄ-ՊԱՀԱՆՋ ԳՈՂԹԻՑ. ԳԱՆԳԱՏՆԵՐ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

No.	Գանգատ	Պատասխան
1.	Ուզում ենք տեղեկացնել ձեզ, որ Գողթ համայնքը այն շահառու համայնքն է, որը ոռոգման համար օգտագործում է Գեղարդալճի ջրամբարի ջուրը՝ սկսած ջրամբարի շահագործման սկզբից մինչ այժմ: Գողթ համայնքի ընդհանուր ոռոգելի տարածքը շուրջ 705 հեկտար է, որից այժմ ոռոգվում է մոտ 550 հեկտար: Հիմա Գեղարդալճի ջրամբարը սպասարկում է ոռոգման ջրով միայն Գողթ համայնքին և **միջին տարեկան ջրամատակարարումը ջրամբարից կազմում է 2,25 մլն. մ³ (հուլիս-սեպտեմբեր), ինչը ջրապահանջարկը բավարարելու համար բավական չէ:** Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մայիս-հունիսի ջրապահանջը համայնքի հողերը ոռոգելու համար լրացվում է Կարմիր գետի ջրերով, որոնք առաջանում են գարնանային ձնհալի արդյունքում: Գողթի փաստացի տարեկան ջրապահանջը կազմում է շուրջ 4,4* մլն. մ³, մինչդեռ ծրագրում այն ներկայացված է որպես 2,25 մլն. մ³	***Ղեկավարությունը ի սկզբանե նշել է, որ Ծրագիրը չի փոխելու ջրի գոյություն ունեցող հատկացումները, ոչ էլ ազդելու է դրանց վրա:*** ***Ղեկավարության կարծիքով, նշված ջրապահանջը չի կարող հիմնավորվել մշակաբույսերի ջրապահանջի վրա հիմնված ոռոգման պահանջարկով, ոչ էլ սպառման պատմական տվյալներով:*** ՇՄՍԱԳ-ում օգտագործված ոռոգման տարեկան պահանջը հիմնված է 705 հա կազմող ոռոգելի տարածքի վրա: Այս մակերեսը հաստատվել է արբանյակային պատկերների վրա հիմնված վերլուծությամբ, որը ցույց է տալիս, որ դա ոռոգման ենթակա առավելագույն հնարավոր մակերեսն է: Մշակաբույսերի այժմյան կազմի համաձայն, շուրջ 3.190 մ³ ջուր/ 1 հա հաշվարկով բավարար է: Այսինքն, ընդհանուր տարեկան ոռոգման պահանջը կազմում է 2,2 մլն. մ³: Այս ծավալը համարվել է Գողթ համայնքի համար համարժեք ոռոգման պահանջ երկու լրացուցիչ պատճառներով. **Առաջին հերթին**, ըստ ՋՕԸ-ի եկամուտների և Գողթ համայնքում ջրօգտագործողների վճարած հաշիվների, Գողթ համայնքի ջրօգտագործողներն իրականում օգտագործել են շատ ավելի քիչ ջուր, քան 2, 25 մլն. մ³: Ստորև ներկայացված են տվյալներ, որոնք ցույց են տալիս Գողթի կողմից գնված ջրի փաստացի ծավալները. Տարի: 2011, 2012, 2013, 2014, 2015 Ջրի մատակարարում (մլն. մ³): 0.440, 0.330, 0.397, 0.405, 0.299 Ավելին, ոռոգման ջրառի կետում (փոքր ՀԷԿ-ի մոտ, 1-ին տուրբինի հեռացնող ջրանցքի վրա)՝ ըստ վերջերս տեղադրված ջրաչափական սարքի, փաստացի չափված և ՋՕԸ-ին տրված ոռոգման ջուրը 2015թ. կազմում էր 1,28 մլն. մ³: **Երկրորդ,** համաձայն Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ի և Սևան-Հրազդանյան Ջրառի (Գեղարդալճի պատվարի շահագործողը) միջև ոռոգման ջրի վերաբերյալ կնքված համաձայնագրերի (կցված են գործին), համայնքը

No.	Գանգատ	Պատասխան
		երբեք չի նշել, որ իրեն անհրաժեշտ է 4,4 մլն. մ³: Դրա վկայությունն են ՋՕԸ-ի պահանջված ոռոգման ջրի ծավալների և համաձայնեցված համաձայնագրերի պատճենները (կցված են գործին):
2.	Ուզում ենք տեղեկացնել ձեզ, որ **վերջին վեց տարվա ընթացքում ջրամբարը ամբողջությամբ լցվել է ընդամենը երկու անգամ:** *Հավելված 3, հավելված 4.*	Դիմում-պահանջը նշում է, որ ջրամբարը համարժեքորեն լցնելու համար բավարար քանակի ջուր չկա: Սակայն, ըստ Սևան-Հրազդանյան Ջրառի, ջրամբարն ամբողջովին լցվել է (և նույնիսկ արտահոսել է) 2010, 2011, 2012 և 2014թթ: ***Ավելին, հարկ է նշել, որ միայն այն հանգամանքը, որ ջրամբարն ամբողջությամբ չի լցվում, դեռ չի նշանակում, որ ջուր չկա:*** Օրինակ, ոռոգման ջրի պահանջարկի բացակայության դեպքում, գուցե, պետք չէ լրացուցիչ ջուր ուղղել ջրամբար:
3.	Դրանից բացի, Գողթի բնակչության հետ Ծրագրի **լսումներ և** քննարկումներ **չեն իրականացվել:**	Ծրագրի համար մշակվել էր ԲՍԿԾ, որը հրապարակվել էր երկրում, իսկ 2013թ. փետրվարի 25-ին Երևանում տեղի է ունեցել հանդիպում հիմնական շահառուների հետ՝ նվիրված հանրային քննարկումներին: Ծրագրի առանձին ներդրումները որոշելուն պես մշակվեցին, հրապարակվեցին և քննարկվեցին ՇՄՍԱԳ-ներ առանձին օբյեկտների համար, այդ թվում՝ Գեղարդալճի ոռոգման համակարգի համար: ***Գեղարդալճի ոռոգման համակարգի նախագիծը և բնապահպանական և սոցիալական ասպեկտները ինտենսիվորեն քննարկվեցին ազդակիր համայնքների հետ հինգ խորհրդատվական հանդիպումների ընթացքում:*** Առաջին հանդիպումը տեղի է ունեցել ***2014թ. նոյեմբերի 19-ին*** Գողթում՝ մասնակիցներին համակարգի նախնական նախագծի հետ ծանոթացնելու նպատակով: Գողթ համայնքի ներկայացուցիչները չհամաձայնվեցին խողովակաշարի առաջարկված ուղեգծի հետ և խնդրեցին փոխել ուղին այնպես, որ խողովակաշարն անցնի մշակվող հողամասերին ավելի մոտ, ինչը թույլ կտա մարդկանց ոռոգման համար օգտագործել սելավաջրերն այն ժամանակ, երբ ջուրը ջրամբարից չի մատակարարվում: Հետագայում երևաց, որ այս տարբերակը գերադասելի այլընտրանք չէր (տես 2015թ. Հուշագիրը): Երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ ***2015թ. հունվարի 27-ին,*** որի նպատակն էր քննարկել շահառուների հետ ծրագրի նախագծի բնապահպանական և սոցիալական կողմերը՝ համաձայն Շրջակա միջավայրի գնահատման

No.	Գանգատ	Պատասխան
		և առաջարկվող ներդրումների փորձագիտության համար պահանջվող ազգային ընթացակարգերի: Գեղարդալճի համակարգի նախագծի վերջնական նախագծային տարբերակը քննարկվեց Երևանում՝ ***2015թ. փետրվարի 25-ին*** տեղի ունեցած երրորդ հանդիպման ժամանակ: Նախագիծն ընդունվեց հանդիպման մասնակիցների կողմից, թեև մտավախություններ արտահայտվեցին՝ կապված միջտնտեսային և ներտնտեսային ենթակառուցվածքի հետ, որոնք Ծրագրի շրջանակում ընդգրկված չեն: Նշվեց, որ մեկ այլ առաջիկա ծրագիր՝ Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Ռոռգման համակարգերի արդիականացման ծրագիրը, հավանաբար, կանդրադառնա այդ մտահոգություններին: Համայնքը տեղեկացվեց դրա մասին: Չորրորդ հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ Երևանում ***2015թ. ապրիլի 16-ին,*** Ծրագրի բնապահպանական փորձագիտությունն իրականացնող պետական մարմնի (Բնապահպանության նախարարության ենթակայության տակ) ներկայացուցիչը տեղեկացրեց մասնակիցներին կառավարության կողմից ծրագրի փաստաթղթերի ուսումնասիրության գործընթացի, ստացած հանրային կարծիքի և առաջարկվող դրական եզրակացության մասին: Մասնակիցները, այդ թվում՝ Գողթ համայնքի ղեկավարը, համաձայնվեցին փորձագիտական քննության երկրորդ փուլի որոշումների հետ, որոնք ներառում էին շինարարությունը շարունակելու թույլտվությունը և մի շարք սահմանված կանխարգելիչ/մեղմացնող գործողություններ: Վերջնական նախագծի ՇՄՍԱԳ-ը իրականացվել է Բանկի OP/BP 4.01 քաղաքականության պահանջներին համապատասխան: Այնուհետև Հացավանում ***2015 թ. սեպտեմբերի 9-ին*** ԾԻԳ-ը կազմակերպեց հինգերորդ հանդիպումը՝ ՇՄՍԱԳ-ի հաշվետվության նախագիծը քննարկելու նպատակով: Գողթ համայնքի ղեկավարը նորից խոսեց համայնքին հուզող հարցերի մասին, որոնք վերաբերում էին Ծրագրի նախագծին, սակայն հաստատեց, որ նախագծման խորհրդատուն տրամադրել է հավաստիացումներ, որ համակարգի

No.	Գանգատ	Պատասխան
		առաջարկվող վերակառուցման հետևանքով Գողթ համայնքի ջուրը չի պակասելու: Համայնքի ղեկավարը հաստատել է առաջարկվող նախագծին Գողթ համայնքի օժանդակությունը: Կառավարության հետ 2015թ. դեկտեմբերին տեղի ունեցած քննարկումներից հետո փոխվարչապետը գումարել է ժողով Ջրտնտպետկոմի նախագահի, ԾԻԳ-ի տնօրենի, ԾԻԳ-ի ճարտարագետի և Շրջակա միջավայրի մասնագետների, ինչպես նաև նախագծողի (Հայջրնախագիծ ինստիտուտի տնօրենի) և Գողթ համայնքը ներկայացնող երկու հոգու, այդ թվում՝ ՀԷԿ-ը շահագործողի մասնակցությամբ: Այդ հանդիպման ընթացքում նախագծողը բացատրեց այլընտրանքային հարավային ուղու հետ կապված խնդիրները, այդ թվում՝ բազմաթիվ մասնավոր հողակտորներով անցնելը, ինչն առաջացնում է տարաբնակեցման և փոխհատուցման խնդիրներ, գծի երկայնքով ջրի գողության հնարավորություն և այլն: Որքան ղեկավարությունը հասկանում է՝ այդ ժողովի մասնակիցները փոխհամաձայնության էին եկել: 2015թ. փետրվարի 25-ին և 2015թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած հանրային քննարկումների արձանագրությունները ներառված են ՇՄՍԱԳ-ի հաշվետվության մեջ և հասանելի են http://piu.am/attachfiles/3525348_241075_3.pdf. կայքէջում: Գողթ համայնքում տեղի ունեցած մյուս քննարկումների արձանագրությունները նույնպես կցված են գործին:
4.	Ծրագրի պլանում Կարմիր գետի հիդրոլոգիական տվյալները, որոնք հաշվարկելի տվյալներ են և ձեռք են բերվել Ազատ-Գառնի դիտակետի տվյալներից (մակերեսի հարաբերակցության անցումային գործակցով), չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես որովհետև հունիսի վերջից մինչև մյուս տարվա մայիսի երկրորդ տասնօրյակը գետն ամբողջովին ցամաքում է, իսկ Ծրագրում այս ժամանակահատվածի համար ներկայացված է բավականին մեծ ելք՝ միջինը 358 լ/վարկ: ***Կարմիր գետում***	***Դիմում-պահանջում ներկայացված աղյուսակը ճիշտ չէ:*** Վերջին սյունակի թվերը ներկայացնում են ոռոգման ջրի պահանջարկը 1448 հա-ի համար (որը ներառում է ոռոգման պահանջարկը Գողթ համայնքի 705 հեկտարի համար): Համապատասխան աղյուսակները ներկայացված են ՇՄՍԱԳ-ի փաստաթղթում (անգլերեն տարբերակի 49 և 50 էջերը): Կարմիր գետում օգտագործման համար հասանելի ջուրը (հուլիս-օգոստոս) պետք է հաշվի առնվի **ի հավելումն** այն ծավալներին, որոնք կուտակվել են նախորդ ամիսներին (ապրիլ-հունիս): “Ջրամբարից ելքի” թվերը առանձնապես հետաքրքիր են (**տես աղյուսակը 2-րդ Հավելվածում):** Այս աղյուսակներից հստակ երևում է,

<table>
<tr><th>No.</th><th>Գանգատ</th><th>Պատասխան</th></tr>
<tr><td></td><td>բավարար քանակի ջրային ռեսուրս չկա, ինչը Ծրագրում հաշվարկվել է շուրջ 358 լ/վարկ. հուլիս-մայիսի համար; և նույնիսկ այդ դեպքում օգտագործման համար հաշվարկված Կարմիր գետում առկա ջուրը չի համապատասխանում ջրամբարի ներհոսքի հաշվարկված մեծություններին (ծրագրի էջ 84):
<table>
<tr><td>Ամիս</td><td>Օգտագործման համար հասանելի ջուրը Կարմիր գետում (միլիոն մ3)</td><td>Ջրի ներհոսքը ջրամբար (միլիոն մ3)</td></tr>
<tr><td>Հուլիս</td><td>0.222</td><td>1.563</td></tr>
<tr><td>Օգոստոս</td><td>0.072</td><td>1.190</td></tr>
<tr><td>Սեպտեմբեր</td><td>0.172</td><td>0.354</td></tr>
</table></td><td>որ ջուրը կբավականացնի տարեկան ընդհանուր ոռոգման պահանջարկը բավարարելու համար:

Ավելին, 2015թ. Կարմիր գետում կատարվեցին փաստացի ջրի չափումներ (հրավիրվել էին նաև Գողթ համայնքի ներկայացուցիչները), և 2015թ. հունիսի 5-ին գրանցվեց 2.650 լ/վարկ ջուր (ինչը հակասում է դիմում-պահանջին, որտեղ նշվում է, որ Կարմիր գետը ամբողջովին չոր է լինում մինչև մայիսի կեսը):</td></tr>
<tr><td>5.</td><td>Կարմիր գետի ջրի պաշարների իրական պատկերը կազմելու համար մենք առաջարկում ենք տարվա տարբեր եղանակներին 2-3 տարվա ընթացքում կատարել միաժամանակյա հիդրոլոգիական չափումներ Գեղարդալճի մոտեցնող ջրանցքի ջրառի կետում և Ազատ-Գառնի հիդրոլոգիական դիտակետում, ստանալ նոր անցումային գործակից, որի հիման վրա էլ հաշվարկել Կարմիր գետի հոսքը:</td><td>Ղեկավարությունը ողջունում է լրացուցիչ հիդրոլոգիական չափումներ նախաձեռնելու գաղափարը: Բանկի թիմը և ԾԻԳ-ը ուսումնասիրում են Կարմիր գետի վրա իրական ժամանակով աշխատող ջրաչափ սարք տեղադրելու հնարավորությունները:

Գեղարդալճի տեխնիկատնտեսական հիմնավորման նպատակով կատարվեց Կարմիր գետի պրոքսի հոսքերի մոդելավորում, քանի որ այս գետի համար չկան գրանցված երկարաժամկետ պատմական տվյալներ: Այս աշխատանքը կատարել էին Գեղարդալճի նախագծի հեղինակը՝ Հայջրնախագիծ ինստիտուտ ՓԲԸ-ը, իսկ մինչ այդ՝ ՀՄԿ-ի ծրագրի շրջանակներում՝ Հայգյուշիննախագիծ ինստիտուտ ՓԲԸ-ը: Երկու դեպքում էլ կիրառվել է անալոգ մեթոդ, որն ընդունված մեթոդ է հիդրոլոգիայի ոլորտում (տես ՇՄՍԱԳ փաստաթուղթը՝ էջեր 18-23 անգլերեն տարբերակում): Հայջրնախագիծը օգտագործել է պաշտոնական Ազատ-Գառնի հիդրոլոգիական դիտակետը՝ վերցնելով վերջին 60 տարվա դիտարկումների շարքերը, իսկ մյուս խումբն օգտագործել է Գեղարոտ-Արագած պաշտոնական հիդրոլոգիական դիտակետը: Առաջին մեթոդի համաձայն, Կարմիր գետի տարեկան հաշվարկված հոսքը 75 տոկոս ջրատվության պարագայում (այսինքն, ժամանակի 25 տոկոսի ընթացքում ջրի քանակը կլինի</td></tr>
</table>

No.	Գանգատ	Պատասխան
		ավելի փոքր) կազմել է 13,57 միլիոն մ^3, իսկ ըստ երկրորդ մեթոդի՝ այն կազմել է 20,5 միլիոն մ^3: Գոյություն ունեցող նախագծի հաշվարկները և Գեղարդալճի համակարգի ընդհանուր կենսունակությունը որոշելու համար օգտագործված հաշվարկները հիմնված են եղել ավելի պահպանողական (ավելի փոքր) մեծության վրա՝ 13,57 միլիոն մ^3: Այս նախագծերն ու վերլուծությունը հիմնված են 75 տոկոս ջրատվության տարվա վրա (ի տարբերություն "միջին ջրատվության տարի" օգտագործմանը):[21] Սա ընդունված մոտեցում է հիդրոլոգիայի և նախագծման բնագավառում: Սա նշանակում է, որ դիտարկելով ջրի հոսքերի բնական տատանումները, նախագծողները նախագծել են մի համակարգ, որը պահպանողական է՝ յուրաքանչյուր ամիս և յուրաքանչյուր տարի ակնկալվող ջրի առկայության տեսանկյունից: Եզրակացությունն այն է, որ նույնիսկ ավելի պահպանողական փոքր քանակի օգտագործման դեպքում Կարմիր գետի ջուրը կբավականացնի ոչ միայն Գողթ համայնքի, այլ նաև մյուս երեք թիրախային համայնքների ամբողջ ոռոգման պահանջարկը բավարարելու համար (այդ թվում՝ Այգեպանների միության և Ազգային պարկի):
6.	Մենք հայտարարում ենք, որ Կարմիր գետում **չկա ջրի այն քանակը, որը ներկայացված է ծրագրում, ուստի բնական է, որ նախագծային 4, 4 մլն. մ^3 ծավալը չի կարող ապահովվել,** և բնական է, որ ինքնահոս ոռոգման համակարգի ծրագիրը չի կարող իրականացվել շրջակա համայնքների հողերի ոռոգման համար:	Տես կետ 5-ի պարզաբանումները:
7.	Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, Գողթ համայնքի ընդհանուր ոռոգելի տարածքը շուրջ 705 հեկտար է, որից մոտ 550 հեկտարն այժմ փաստացի ոռոգվում է; այդ թիվը, բնականաբար,մի տարուց հետո	***Ծրագրի նախագիծը ամբողջությամբ հաշվի է առնում պատմական ոռոգման ջրապահանջը և հիմնվում է 705 հեկտար կազմող ոռոգելի տարածքի վրա:*** Դիմողը հաստատում է, որ հիմա ոռոգվում է ընդամենը 550 հեկտար:

[21] Յոթանասուն հինգ տոկոս ջրապահովվածության տարի՝ նշանակում է այն հիդրոլոգիական տարիները, որոնք տեղի են ունենում չորս տարին մեկ անգամ: Սա ավելի պահպանողական մոտեցում է, քան օգտագործել հիդրոլոգիական տարիները, որ տեղի են ունենում երկու տարին մեկ անգամ:

No.	Գանգատ	Պատասխան
	կավելանա, իսկ Գողթ համայնքին հատկացված ջրի քանակը նախատեսված ծրագրի իրականացումից հետո կմնա նույնը: Այդ դեպքում՝ ծրագրի իրականացումից հետո, շահառու Գողթ համայնքի ոռոգման ջրի մատակարարման վիճակը կվատանա:	Ջրամբարի տարողության ավելացումը՝ ընդհանուր ջրային ռեսուրսների կառավարման տեսանկյունից, նպաստում է ճկունության բարձրացմանը: Այդուհանդերձ, ծայրահեղ երաշտի տարիներին երկրի բոլոր համայնքները, հավանաբար, կունենան ջրի սակավության խնդիր, ինչը Ծրագրի հետ կապ չունի: Սակայն համեմատության համար ասենք, որ նրանք, ում ջուրը մատակարարվում է ջրամբարներից, կարող են ավելի պաշտպանված լինել:
8.	Հաշվի առնելով այս ամենը, խնդրում ենք, **դադարեցրեք/կասեցրեք ծրագրի իրականացման գործընթացը,** մինչև չտրամադրեք մեր բոլոր հարցադրումների հստակ բացատրությունները և հիմնավորումները:	Այս հարցերից շատերը քննարկվել էին ՇՄՍԱԳ-ի հանրային քննարկումների ժամանակ և ստացել էին իրենց համարժեք պատասխանները: Նշենք նաև, որ եթե Ծրագրի իրականացման ընթացքում առաջանա որևէ մտահոգություն, ապա Ծրագրի շրջանակներում գործում է բողոքների լուծման մեխանիզմը:
9.	Վերը նշվածը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Գեղարդալճի ջրամբարի մոտեցնող ջրանցքի առավելագույն ջրթողունակությունը կազմում է 1500 լ/վարկ, իսկ ձնհալից (15-20 օր) առաջացող վարարումների ժամանակ՝ 20 * 86.4 * 1500 լ/վարկ. = 2,59 միլիոն մ³:	***Սա ճիշտ չէ:*** Ձնհալի շրջանը սովորաբար ապրիլ-հունիսն է և տևում է ավելի երկար, քան 20 օր (տեղեկատվության աղբյուրը՝ Հայհիդրոմետի վարչությունը և նախկին Սովետական Միության ժամանակ 1973թ. կատարված Կարմիր գետի ուսումնասիրությունը): Ավելին, Կարմիր գետը սնվում է ոչ միայն ձնհալից, այլ նաև գրունտային ջրերից: Հիմնվելով Կարմիր գետի պրոքսի հոսքերի վրա, ինչպես նաև ներառելով վերին բյեֆում գտնվողների պահանջարկը և բնապահպանական թողքի պահանջները, հաշվարկվել է, որ ընդհանուր առկա հոսքը Կարմիր գետում այս ժամանակահատվածի ընթացքում (ապրիլ-հունիս)՝ ջրամբարը լցվելու ժամանակ, կլինի 4,74- 5,35 մլն. մ³ (կախված նրանից, թե ինչպես է կիրառվում 75% ջրապահովվածությունը՝ տարեկան թե ամսական կտրվածքով, ինչպես նկարագրված է Կետ 5-ում): Այսպիսով, ջրի քանակը բավարար է:
10.	4. ***Երբ Գեղարդալճի ջրամբարի պատվարը բարձրացվի շուրջ երկու մետրով, ջրամբարի տարողությունը կկազմի 3,4 մլն. մ³,*** *մինչդեռ ծրագրում ջրամբարի ծավալը ներկայացված է 4,4 մլն. մ³ (էջ 46; 84):*	***Ջրամբարի փոփոխված տարողության (3,4 մլն. մ³) համեմատելը ջրի տարեկան առկա ծավալի հետ, որը նման փոփոխված ջրամբարը կարող է մատակարարել, ճիշտ չէ: Ջրամբարի շահագործումը դինամիկ է:*** Որպես այդպիսին, ջրամբարի ամբողջ տարողությունը պարտադիր չէ, որ հավասար լինի ամբողջ պահանջարկին: Ջուրը մշտապես մտնում և դուրս է գալիս ջրամբարից, և արդյունքում ջրամբարից տարվա ընթացքում մատակարարվող ընդհանուր ծավալը

No.	Գանգատ	Պատասխան
		(այսինքն, արտահոսքերը) պարտադիր չէ, որ համարժեք լինի այն ընդհանուր ծավալին, որը կարող է կուտակվել ջրամբարում որևէ պահի: Խնդրում ենք նայել ՇՄՍԱԳ-ի փաստաթղթում ներկայացված աղյուսակները (էջեր 49 և 50 անգլերեն տարբերակում): Այս աղյուսակները ցույց են տալիս, թե ինչպես են ներհոսքերը, կուտակված պաշարը և արտահոքերն ապահովում 4,4 մլն. մ³ կազմող ընդհանուր ոռոգման ջրապահանջարկը 75 տոկոս ջրատվության տարվա դեպքում: Տեսեք նաև 3-րդ Հավելվածը: ներհոսք → ջրամբար → արտահոսք Ներհոսք-արտահոսք = փոփոխություն ջրամբարում
11.	Եթե ջրամբարից 370 լ/ վարկ. ջուր մատակարարվի հարևան համայնքներին՝ միևնույն ժամանակ մատակարարելով 300 լ/վարկ. Գողթ համայնքին, ապա ջրամբարը կդատարկվի 40 օրվա ընթացքում: Եթե ենթադրենք, որ ջրամբարը կլցվի 3,4 մլն.մ³ ջրով, ինչն իրականում անհնարին է ապահովել միայն Կարմիր գետի ջրով, ջրամբարը կդատարկվի 59 օրվա ընթացքում, այսինքն այդ դեպքում Գողթ համայնքը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ոռոգման ջուր չի ունենա:	***Ճիշտ չէ, որ ոռոգման ջրի մատակարարումները սկսելուց հետո ջրամբարը կդատարկվի 40 օրվա ընթացքում:*** Հարկավոր է ուսումնասիրել համապատասխան աղյուսակները ՇՄՍԱԳ-ի փաստաթղթում (էջեր 49 և 50 անգլերեն տարբերակում): Ջրամբարի ծավալը կիջնի մինչև իր մեռյալ մակարդակը ոռոգման շրջանի վերջին՝ սեպտեմբերի վերջին: **Տես 3-րդ Հավելվածի աղյուսակը:** Իսկ ինչ վերաբերում է Կարմիր գետի ջրի պաշարների բավարար լինելուն, խնդրում ենք նայել կետ 5-ը:
12.	***Առաջարկություններ*** **Առաջնահերթությունը տվեք ջրամբարի շինարարությանը** և լցրեք ջրամբարը Գիլանլարի ջրանցքը կառուցելուց հետո (շուրջ 2 կմ), դրանից հետո՝ հիմնվելով ջրամբարի փաստացի լցված լինելու վերաբերյալ վիճակագրական տվյալների վրա, եզրակացություն արեք ջրի	Սա կարելի է ուսումնասիրել կառավարության հետ: ԾԻԳ-ը պլանավորել է հանդիպել Գողթ համայնքի անդամների հետ և շարունակել քննարկել այս տարբերակը: Նախնական տեխնիկական վերլուծությունը ցույց է տալիս, որ դա կարող է լինել հնարավոր փոխլրացնող ներդրում:

No.	Գանգատ	Պատասխան
	խողովակաշարի կառուցման և հարակից համայնքներին ջուր տալու մասին:	
13.	Երբ Գեղարդալճի ջրամբարը լցվի մինչև 3,4 մլն. մ^3 և երբ միևնույն ժամանակ ապահովվի Գողթ համայնքի տարեկան ջրի պահանջարկը, որը կազմում է 4, 4 մլն. մ^3, միայն այն ժամանակ հնարավոր կլինի Գեղարդալճի ջրամբարից ջուր մատակարարել հարևան համայնքներին, ընդ որում 129 լ/վարկ-ից ոչ ավել:	Տես կետ 1-ը: ***Նշված Գողթ համայնքի 4,4 մլն. մ^3 ջրի պահանջարկը հիմնված չէ որևէ պատմական տվյալների կամ ոռոգվող տարածքին համապատասխանող կարիքների վրա:*** Սա կարծես թե վերցրած է Ջրառին տրված թույլտվությունից, որը թույլ է տալիս Ջրառին իրականացնել տարեկան 4,4 մլն. մ^3 ջրառ Գեղարդալճի ջրամբարի համար: Չկա որևէ իրավական հիմք պնդելու, որ Ջրառն այդ իրավունքը փոխանցել է իր կողմից սպասարկվող մեկ համայնքին՝ բացառելով մյուսները:
14.	Գողթ համայնքում կնքել պայմանագիր 7-8 կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ցանցի համար (ծրագրում սահմանված 1 կմ-ի փոխարեն), արդյունքում ջրի կորուստները կնվազեն և ջրի խնայողության հաշվին հնարավոր կլինի ավելացնել Գողթ համայնքի ոռոգման ջրով ապահովումը մինչև 80%:	***Գողթի խողովակաշարի վերականգնումը նախատեսված է ԵԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում (Ոռոգման համակարգի արդիականացման ծրագիր):*** Այդ ծրագրի շրջանակներում վերականգնվելու համար առաջարկվել են հրատապ միջամտություն պահանջող որոշ առաջնահերթ հատվածներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 1 կմ: Առավել քայքայված հատվածները ներկայացրել է Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ը: Գողթի խողովակաշարը գտնվում է այդ ՋՕԸ-ի սպասարկման տարածքում: Ստորև ներկայացված են մի քանի լուսանկարներ: Մյուս հատվածները չեն գնահատվել որպես վերականգնման կարիք ունեցող հատվածներ:

No.	Գանգատ	Պատասխան
		   The image part with relationship ID rId8 was not found in the file.

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԴԻՄՈՒՄ-ՊԱՀԱՆՋ ԳԱՌՆԻԻՑ. ԳԱՆԳԱՏՆԵՐ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

No.	Գանգատ	Պատասխան
1.	Անցած երկու տարվա ընթացում Գառնի համայնքի բնակիչները և շրջակա միջավայրի պահպանման ակտիվիստները ապացուցել են, որ Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում ֆինանսավորվող ծրագիրը հանգեցրել է հակաբնապահպանական և հակասոցիալական հետևանքների, և որ այդ ծրագիրը տնտեսապես արդյունավետ չէ: Համաձայն “Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի”, ինչպես որ այն ներկայացնում է Հայաստանի կառավարությունը, Ազատ գետի վրա նախատեսվում է կառուցել ջրառ կառուցվածք և խողովակաշար՝ Քաղցրաշենի պոմպակայանին շուրջ 980 լիտր/րոպե ջուր մատակարարելու նպատակով: Հանրային լսումների ժամանակ Գառնիի բնակիչները նշել են, որ ջրի մակարդակը Ազատ գետում մշտապես իջնում է այնքան, որ ինքնահոս ոռոգումն այլևս հնարավոր չէ: Կառավարությանն առաջակվել է կատարել գետում ջրի մակարդակի ամսական չափումներ: Գառնիի դիտակայանի տվյալների հավաքագրումը սկսվել է 2015թ. մարտի 22-ին և շարունակվել է մինչև օգոստոսի 16-ը: Ջրի մակարդակները կտրուկ նվազել էին հուլիս և օգոստոս ամիսներին, որովհետև Ազատի սնուցող վտակները չորացել էին: Ապացուցվել էր, որ նշված 850լ/րոպե բնապահպանական թողքի ապահովման դեպքում 0,98 լ/րոպե ջրի մակարդակն այդ ամիսներին բավարար չէ Արարատի մարզի 12 գյուղերին ինքնահոս ջուր մատակարարելու համար: Այսպիսով, եթե կառավարությունը չհրաժարվի այդ ծրագրից, այն կիրականացվի Ազատ գետի չորացման հաշվին: Ջրի մակարդակի չափումներ իրականացնող մասնագետները վերջնականապես համոզվեցին, որ 850 լ/րոպե բնապահպանական թողքն ապահովելուց հետո գետում մնում է ընդամենը 450 լ/րոպե ջուր: Այսպիսի իրավիճակում Քաղցրաշենի ոռոգման համակարգի ծրագիրը ռիսկային է և անկայուն:	***Ղեկավարությունը տեղյակ չէ Դիմողների կողմից ներկայացված որևէ նյութի մասին, որը փաստերի վրա հիմնված ապացույցներով կարող է հիմնավորել Ծրագրի իրագործելիության, տնտեսական կենսունակության կամ ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցության վերաբերյալ պնդումները:*** 2015թ. մարտի և 2015թ. նոյեմբերի Հուշագրերում (կցված են գործին) մանրամասն ներկայացված է մի փոքր խումբ ակտիվիստների հետ աշխատանքը վերջին երկու տարվա ընթացքում: ԾԻԳ-ը՝ Բանկի սերտ օժանդակությամբ, ակտիվ արձագանքել է մի քանի եղանակներով (տես 4-րդ Հավելվածը): Ի ամփոփում՝ ԾԻԳ-ը և Բանկի թիմը հանդես են եկել համատեղ ջանքերով, որպեսզի համայնքի առանձին անդամներին բացատրեն տեխնիկական ասպեկտները և շտկեն հնարավոր ապատեղեկատվությունը: ***Կարևոր է հիշել, որ Գառնի համայնքն իրականացնում է իր ոռոգման ջրառը առաջարկվող գլխամասային հանգույցի <u>վերին հոսանքում</u> գտնվող կետում:*** ***Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի տեխնիկատնտեսական հիմնավորումը կախված է ոչ թե Ազատի ջրամբարում ջրի մակարդակներից, այլ հողի տեղագրությունից:*** 2015թ. գարնանը հնչեցին հարցեր այդ համակարգի իրագործելիության և այլընտրանքային դիրքի որոշման վերաբերյալ (մասնավորապես, արդյոք հնարավոր է մի քանի հարյուր մետրով գլխամասային հանգույցը տեղափոխել գետի հունով ներքև): ԾԻԳ-ը (և Բանկի թիմը) ուսումնասիրեցին այդ հարցը և որոշեցին, որ տեխնիկական տեսանկյունից դա հնարավոր չէ: Մակարդակների տարբերությունները ցուցադրելու և ինքնահոս եղանակով ջրի փոխադրման հնարավորությունը հաստատելու նպատակով 2015թ. ապրիլի 21-ին Գառնիի բնակիչները հրավիրվեցին նախագծող խորհրդատուների գրասենյակ տեղագրական քարտեզներն ուսումասիրելու համար: Բացի այդ, 2015թ. հունիսի 3-ին կազմակերպվեց դաշտային այց՝ խողովակաշարի ամբողջ առաջարկվող ուղիով անցնելու և տեղում GPS

No.	Գանգատ	Պատասխան
		սարքավորումներով բարձրությունները չափելու համար, նպատակ ունենալով ցուցադրել, որ գլխամասային հանգույցը գետի հունով էլ ավելի ներքև տեղափոխելը հնարավոր չէ: ***Ելնելով հիդրոլոգիական ուսումնասիրություններից, որոշվել է, որ ջուրը բավարար է թե՛ ոռոգման պահանջնարկները, թե՛ բնապահպանական պահանջները բավարարելու համար : Քաղցրաշենի համակարգի նախագիծը հիմնված է Հայաստանի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության (www.meteo.am) պաշտոնական տվյալների վրա: Առաջարկվող գլխամասային հանգույցի վերին բյեֆում գտնվում է պաշտոնական դիտակետ ավելի քան 60 տարվա տվյալներով:*** Այդ տվյալներն անցնում են որակի հավաստիացման պաշտոնական գործընթացով տվյալների ճշգրտությունն ապահովելու համար: Այդ տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ պահանջարկը բավարարելու համար բավականաչափ ջուր կա: Այդ վերլուծությունը ներկայացված է 3-րդ Հավելվածում և ՇՄՍԱԳ-ի փաստաթղթերում: Բանկի թիմը նշում է, որ 2015թ. մարտին մի քանի գառնեցիներ կասկածի տակ դրեցին այդ տվյալների վավերականությունը և ճշգրտությունը: Գառնիի որոշ բնակիչներ տեղյակ չէին, որ Ազատի կիրճում կա պաշտոնական հիդրոլոգիական դիտակետ, և ենթադրում էին, որ ջրի բալանսը պատրաստվել է տեսական հաշվարկների հիման վրա: Ի պատասխան այդ մտավախություններին, ինչպես նաև կառավարության պաշտոնական հիդրոլոգիական տվյալների նկատմամբ վստահություն ձևավորելու համար ԾԻԳ-ը կազմակերպեց ջրի մակարդակի և հոսքի ցուցադրական չափումներ Գառնի համայնքի այդ բնակիչների մասնակցությամբ: Հոսքի չափումների տվյալները տեղադրվել էին ԾԻԳ-ի կայքէջում: 2015թ. մարտից մինչև օգոստոսը կատարվեցին ավելի քան տասնյակ ցուցադրական չափումներ Ազատ-Գառնի հիդրոլոգիական դիտակետում: Չափումների գլխավոր նպատակն էր ցույց տալ Գառնի համայնքի ներկայացուցիչներին, ինչպես և ինչպիսի հաճախականությամբ են իրականացվում հիդրոլոգիական չափումները և որքան հուսալի են Ազատ-Գառնի հիդրոլոգիական դիտակետում

No.	Գանգատ	Պատասխան
		գրանցված տվյալները: Այդ տվյալները հանդիսանում են Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի համար կատարված հաշվարկների հիմքը: Ստորև բերված աղյուսակն ամփոփում է ցուցադրական չափումների իրականացման օրերն ու ստացած թվերը:

Չափումներ	Ամսաթիվ	Չափված ելք, մ³/վարկ
1	Մարտի 22, 2015	2.92
2	Ապրիլի 12, 2015	7.53
3	Ապրիլի 26, 2015	7.36
4	Մայիսի 4, 2015	5.70
5	Մայիսի 10, 2015	7.63
6	Մայիսի 24, 2015	14.3
7	Հունիսի 9, 2015	8.43
8	Հունիսի 20, 2015	2.55
9	Հուլիսի 5, 2015	2.05
10	Հուլիսի 23, 2015	1.54
11	Օգոստոսի 5, 2015	1.53
12	Օգոստոսի 16, 2015	1.30
13	Օգոստոսի 21, 2015	1.26

Հարկ է շեշտել, որ 2015թ. օգոստոսի 21-ի չափումների ժամանակ Գառնի համայնքի անդամները սպառնացել էին (ֆիզիկապես և բերանացի) մոնիտորինգի թիմի անդամներին (այդ թվում՝ ԾԻԳ-ի հիդրոլոգին) և այդ համատեղ աշխատանքը մնաց անավարտ: Առճակատումը մասամբ բորբոքվել էր վերին բյեֆում՝ Գառնի ՋՕԸ-ի ջրառի կետում, ԾԻԳ-ի կողմից իրականացվող զուգահեռ ջրաչափումներով, որոնց նպատակն էր ստուգել ՋՕԸ-ի կողմից Բնապահպանության նախարարության տրված ջրօգտագործման թույլտվության պայմանների կատարումը: 2013թ. նոյեմբերի 16-ին տրված Թույլտվությանը համաձայն, Գառնի համայնքին ոռոգման ջուր մատակարարելու համար ՋՕԸ-ը կարող է վերցնել Ազատ գետից 310 լ/վարկ ջուր: 2015թ. օգոստոսի 21-ի (և նախորդ չափումների) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Գառնի ՋՕԸ-ի ջրառը կազմել է իրականում 600լ/վարկ, ինչը գրեթե կրկնակի գերազանցել է թույլատրված քանակը: Ժամանակավորապես նախաձեռնվեց մի շտկող գործողություն գետի հունով ավելի շատ ջուր բաց թողնելու համար: Այս բացահայտումը վախեցրել էր

No.	Գանգատ	Պատասխան
		համայնքի որոշ անդամներին, որ Ջրտնտպետկոմը կկրճատի ջրառը, որպեսզի ապահովի տրված թույլտվության պահանջների կատարումը: Սա հաստատվեց ավելի ուշ՝ 2015թ. նոյեմբերի վերահսկման առաքելության և ավագանու անդամների հետ քննարկումների ժամանակ (նկարագրված է 2015թ. նոյեմբերի Հուշագրում): Հարկ է նշել, որ թույլատրված ծավալները հաշվի են առել բնապահպանական թողքի ապահովման պահանջները: Համայնքի որոշ անդամներ մեկնաբանեցին դա որպես կառավարության կողմից մի փորձ, ուղղված ստորին բյեֆում՝ Ազատ-Գառնի դիտակետի թվերի արհեստական ուռճեցմանը: Նշենք, որ չափումները շարունակում են իրականացվել, քանի որ դա Հայաստանի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի ծառայության բնականոն ծրագրի մաս է կազմում: Բանկի թիմը նաև նշում է, որ քննարկել է այս հարցը Գառնի ՋՕԸ-ի տնօրենի հետ: Բանկի թիմն առաջարկել է, որ եթե իսկապես ոռոգման ջրի պահանջարկն ավելի մեծ է, ապա, գուցե, թույլտվությունը կարելի է "կարգավորել": ***ՋՕԸ-ի տնօրենն արտահայտեց իր անհանգստությունը, որ ավելի շատ ջրի դիմաց ստիպված կլինեն ավելի շատ վճարել:*** ***Գլխամասային հանգույցը չի սահմանափակելու բնապահպանական թողքը:*** Դիմում-պահանջում ներկայացված պնդմանը հակառակ՝ առաջարկվող գլխամասային հանգույցը չի սահմանափակելու 850լ/վարկ. պահանջվող բնապահպանական թողքը: Ըստ գլխամասային հանգույցի նախագծի, բնապահպանական հոսքի ջրթողը գտնվում է ոռոգման ջրառներից ներքև, ինչը ֆիզիկապես անհնարին է դարձնում որևէ ջրառ իրականացնելը մինչև չապահովվի բնապահպանական թողքը: Այս նախագիծն արտացոլում է Հայաստանի օրենսդրությունը, որը ջրօգտագործման բոլոր մյուս նպատակների համեմատությամբ առաջնայինը համարում է բնապահպանական թողքի ապահովումը: Գլխամասային հանգույցի մոտ տեղադրվելու է ջրաչափական սարք՝ թույլտվության պահանջի կատարումն ապահովելու նպատակով, և

No.	Գանգատ	Պատասխան
		Ղեկավարությունը խորհուրդ է տալիս ապահովել ջրաչափի հասանելիությունը համայնքի համար: Մշտադիտարկման այս սարքը՝ տեղադրված լինելով գլխամասային հանգույցից ներքև, ցույց կտա, թե որքան ջուր է մնում գետում ցանկացած ժամանակ, և տվյալները հասանելի կլինեն առցանց: Սարքի տեղադրումը հնարավորություն կտա գառնեցիներին ցանկացած ժամանակ ստուգել գետում մնացող ջրի ծավալը՝ այսպիսով ստուգելով նաև բնապահպանական հոսքն ապահովելու պահանջի կատարումը:
2.	Գառնեցիների մյուս մտավախությունը կապված է Ազատի կիրճի ապագայի հետ, որը դիտվում է որպես ազգային տեսարժան վայր: Եթե ոռոգման ծրագիրն անցնի կիրճով, ապա Ազատի կիրճը (Վերին Ազատի հարթավայրի մի մասը, որը ՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում նշված է որպես "բացառիկ համընդգրկուն արժեք") կոչնչանա: Նրանք, ովքեր նախագծել էին Քաղցրաշենի ոռոգման համակարգը, անտեսել էին Գառնիի եզակի կարևորությունը Հայաստանի զբոսաշրջության զարգացման համատեքստում: Ազատի կիրճում գնտվում են բնության չորս տեսարժան վայրերը՝ ճանաչված Հայաստանի կառավարության N967 որոշմամբ (2008թ. օգոստոսի 14): Քարտեզի վրա դժվար է արտապատկերել յուրաքանչյուրի սահմանները, որովհետև դրանք պաշտոնապես չեն քարտեզագրվել կամ չափվել Հայաստանի Կադաստրի Կոմիտեի կողմից: Ծրագրի իրականացման գրասենյակը (ԾԻԳ) ասում է, որ կառավարությունը պլանավորում է կատարել նման գնահատում 2019-2021թթ: ԾԻԳ-ը հայտարարում է, որ Քաղցրաշենի ոռոգման համակարգը չի վնասի այդ չորս տեսարժան վայրերից և ոչ մեկը:	***Ազատի կիրճը չի կազմում "Վերին Ազատի հարթավայրի" մի մաս, որը նշված է որպես ՅՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության պոտենցիալ օբյեկտ:*** Աշխատանքների հարևանությամբ գտնվող ՈՒՆԵՍԿՈ-ի Համաշխարհային ժառանգության միակ օբյեկտը Գեղարդի վանքն է[22], որը գտնվում է առաջարկված գլխամասային հանգույցից ավելի քան 10 կմ հեռավորության վրա: Խառնաշփոթությունը մասամբ կարող է պայմանավորված լինել նրանով, որ ՈՒՆԵՍԿՈ-ի օբյեկտը կոչվում է "Գեղարդի վանքը և Վերին Ազատի հարթավայրը": ՈՒՆԵՍԿՈ-ի փաստաթղթերում նշված չէ, որ ամբողջ վերին Ազատի հարթավայրը նախատեսվում է պաշտպանել և նշանակել ժառանգության օբյեկտ: Բուֆերային գոտին (ինչպես նշում է ՈՒՆԵՍԿՈ-ն), որն առանձնացնում է վանքի շուրջ գտնվող տարածքը, 40 հեկտար է կազմում: Ավելին, այս վանքը գտնվում է Չորսելավ գետի մոտ, որը, ըստ էության, չի միանում Ազատ գետին (որտեղ գտնվում է Ծրագիրը) մինչև Ազատի ջրամբարը, այսինքն այն չի գտնվում Ազատի կիրճի անմիջական մոտակայքում, որտեղ առաջարկվում է կատարել աշխատանքները: Բնության չորս հուշարձաններին առնչվող Կառավարության որոշումը (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=61505) պարզապես հաստատում է բնության հուշարձանների երկար ցուցակը և հանձնարարում Ֆինանսների նախարարությանը գումարներ հատկացնել Բնապահպանության

[22] http://whc.unesco.org/en/list/960

<table>
<tr><th>No.</th><th>Գանգատ</th><th>Պատասխան</th></tr>
<tr><td></td><td></td><td>
նախարարությանը՝ բնության այդ հուշարձանների ստույգ սահմանները սահմանելու համար:

ԾԻԳ-ը ստացել է նամակ (կցված է գործին) Բնապահպանության նախարարությունից, որը հստակեցնում է, որ այդ չորս հուշարձանները երկրաբանական բնույթի են՝ հաստատված որպես Կառավարության No 967-N Որոշման հավելված: Այն նշում է ճշգրիտ սահմանները, տարածքների չափերը: Պահպանման գոտիները և պահպանման ռեժիմները դեռ սահմանված չեն և կսահմանվեն 2019-2021թթ: Նախարարությունը նշել է նաև, որ Քաղցրաշենի համակարգը պետք է բավարարի “Բնության հատուկ պահպանվող տարածքներին” առնչվող օրենսդրության պահանջները: Քանի որ բնության այդ չորս հուշարձանների կոորդինատները հայտնի են, դրանք կարող են արտապատկերվել քարտեզի վրա (Տես Քարտեզ 4):

<table>
<tr><th>No</th><th>Առաջարկվող բնության հուշարձանի անվանումը</th><th>Կոորդինատներ՝ ըստ ՀՀ Բնապահպանության նախարարության</th><th>Կոորդինատներ՝ ըստ Հայ-WGS84 համակարգի</th></tr>
<tr><td>1.</td><td>“Բազալտե երգեհոն” սյունաձև բազալտներ</td><td>X44,7433
Y40,1127</td><td>X 4442152.897
Y 478115.098</td></tr>
<tr><td>2.</td><td>Անանուն քարայր սյունաձև բազալտներում</td><td>X44,7230
Y40,1099</td><td>X 4441847.181
Y 476383.455</td></tr>
<tr><td>3.</td><td>Անանուն լանջի էրոզիա</td><td>X44,6819
Y40,1045</td><td>X 4441259.295
Y 472877.189</td></tr>
<tr><td>4.</td><td>Անանուն լավային ծալքեր</td><td>X44,7321
Y40,1109</td><td>X 4441955.843
Y 477159.641</td></tr>
</table>

Ազատի կիրճում գրանցված բնության չորս հուշարձանի վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով ԾԻԳ-ի տեղանքագետը և շրջակա միջավայրի մասնագետը Հայաստանի Ճարտարապետության և շինարարության ազգային
</td></tr>
</table>

No.	Գանգատ	Պատասխան
		համալսարանի Ինժեներական գեոդեզիայի բաժնի օժանդակությամբ (որը տրամադրել է մասնագիտական տեղագրական գործիքը) 2016թ. փետրվարի 21-ին կատարեցին դաշտային հետազոտություններ: Կիրճում գրանցված չորս բնական հուշարձաններից միայն Բազալտե երգեհոնն է (Քարերի սիմֆոնիա), որ փաստացի գտնվում է կիրճում (No.1): Սակայն, այն գտնվում է Քաղցրաշենի գլխամասային հանգույցից 1, 3 կմ վերև և աշխատանքների ազդեցությանը չի ենթարկվելու: Մյուս երեք հուշարձանները գտնվում են Գառնիի բնակիչներին պատկանող այգիներում և ցանկատարածություններում՝ կիրճի աջ լանջին, Քաղցրաշենի համակարգի նախատեսվող խողովակաշարից շուրջ 150-200 մ հեռու (No.3): Որպես այդպիսին, բնության այդ հուշարձաններից ոչ մեկը չի ենթարկվելու աշխատանքների ազդեցությանը:
3.	Վերջին քսան տարվա ընթացքում Գառնեցիների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը ուղղակիորեն կապված է եղել տեղական զբոսաշրջության զարգացման հետ: Ստեղծվեցին սզբոսաշրջության ոլորտը սպասարկող ծառայություններ և կազմակերպություններ, և Գառնիի բնակիչների կենցաղային պայմանները որոշակի չափով բարելավվեցին: ԾԻԳ-ը չի գնահատել, ինչպես պահանջվում է Համաշխարհային բանկի նորմատիվներով, ոռոգման ծրագրի բացասական սոցիալ-տնտեսական ազդեցության իրական շրջանակը:	Զբոսաշրջությունը մոտակայքում կենտրոնանում է հիմնականում Գառնու առաջին դարի հեթանոսական տաճարի շուրջ, որը գտնվում է գյուղում ավելի բարձր նիշի վրա, ոչ թե կիրճում: Կիրճում զբոսաշրջիկները կարող են տեսնել Բազալտե երգեհոնը (Քարերի սիմֆոնիա) և մոտակայքում գտնվող միջնադարյան կամուրջը: Սակայն, որպես լրացուցիչ նախազգուշական միջոց, գլխամասային հանգույցի կառուցման աշխատանքները զբոսաշրջային ժամանակահատվածում՝ հունիսից մինչև օգոստոս, չեն իրականացվելու: ***Ղեկավարությունը համաձայն է, որ կարող են լինել հնարավորություններ մարզի զբոսաշրջության ներուժը զարգացնելու համար:*** Վերջերս Բանկը բանակցել է Հայաստանի կառավարության հետ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիրը, որը, ի թիվս այլ միջոցառումների, օժանդակելու է այդ տարածքում զբոսաշրջության զարգացմանը:
4.	Վերոհիշյալ կորուստների/վնասների հիմնավորումները ներկայացվել են ծրագրին առնչվող բոլոր հանրային լսումների ժամանակ, և ծրագիրը վերահսկող ԾԻԳ-ը չի	2015թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցածը նկարագրված է կետ 1-ում: Չափումներն իրականացնելուց հետո ջրաչափը գողացել էին:

No.	Գանգատ	Պատասխան
	հերքել դրանցից ոչ մեկը: Համոզիչ հակառակ փաստարկներ բերելու փոխարեն, ծրագիր իրականացնողները դիմեցին ապօրինի միջոցների: Օգտվելով իրենց տրամադրության տակ գտնվող վարչական լծակներից, նրանք բռնի կերպով կեղծեցին ծրագրի ընդհանուր գործի մեջ ներառված փաստաթղթերը և օգտվեցին հանցագործների ծառայություններից, որպեսզի ահաբեկեն և ծաղրեն գառնեցիների առավել ակտիվ հատվածին: Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2015 թ. օգոստոսի 21-ի հրամանով հանձնաժողով է ձևավորվել, իրենց ասելով՝ «Ազատ գետում լրացուցիչ ջրաչափումներ իրականացնելու, ներառյալ՝ Ազատ գետից ջրառների և ելքերի ուսումնասիրություն կատարելու համար»: Գառնի գյուղը նույնպես վերցնում է ոռոգման ջուրը Ազատ գետից: Այդ օրն առավոտից գյուղի ոռոգման ջուրը դադարեցվել էր: Ջրաչափման ժամանակ պարզվել էր, որ ոռոգման ԾԻԳ-ին ենթակա **Ջրօգտագործողների ընկերության** աշխատակիցները գյուղի ոռոգման ջուրը փակել են ու լցրել Ազատ գետը, որպեսզի ջրաչափումներ իրականացնող հանձնաժողովականները կարողանան իրենց վերադասներին գոհացնող ջրաքանակ ցույց տալ: http://hetq.am/arm/news/62524/: Հասկանալով կատարված խարդավանքը և հանձնաժողովականների հետ վիճաբանելով կատարվածի շուրջ՝ նրանք կրկին բացել են գյուղի ոռոգման ջրի փականը, որից հետո չափումներ իրականացնողները գետում ավելի քիչ ջուր են գրանցել, քան 5 օր առաջ՝ 1260 լ/վրկ: Սա նշանակում է, որ բնապահպանական թողքից հետո գետում այդ օրը եղել է ընդամենը 410 լ/վրկ ջուր, իսկ օգոստոս ամսին պահանջված ջրաքանակն, ըստ «Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգ» ծրագրի՝ 980 լ/վրկ է:	
5.	Ծրագրի իրականացման ամբողջ գործընթացը լի է խախտումներով՝ ինչպես ակնհայտ, այնպես էլ թաքնված: Համաշխարհային բանկը երաշխավորում է, որ ծրագրի	Ծրագրի համար մշակվել էր ՇՄՍԿՇ, որը հրապարակվել էր երկրում և 2013թ. փետրվարի 25-ին Երևանում տեղի էին ունեցել հանրային քննարկումներ հիմնական շահառուների հետ:

No.	Գանգատ	Պատասխան
	ֆինանսավորումը պայմանավորված է բնապահպանական և սոցիալական ազդեցության ուսումնասիրությունների գնահատման արդյունքներով, և որ այդ արդյունքները պետք է քննարկվեն ներառված համայնքների հետ: Գառնի համայնքի բնակիչները և թիրախային խումբը հանրային լսումների ժամանակ հետևողականորեն նշված ծրագրին դեմ են արտահայտվել: Համայնքի համաձայնությունը ստանալու համար կառավարությունն ուժով դիմել է բազմաթիվ խաբեությունների: ԾԻԳ-ը չի հետևել Համաշխարհային բանկի կողմից ծրագրի իրականացման համար սահմանված ընթացակարգերին: ԾԻԳ-ը և ղեկավար մարմինները՝ քաջատեղյակ լինելով բնակիչների դիրքորոշման մասին, չեն տեղեկացրել հասարակությանը հանրային լսումների մասին, որպեսզի կողմնակիցների նեղ շրջանում կարողանան գրանցել կեղծ հանրային կարծիքները ծրագրի վերաբերյալ: 2015թ. հոկտեմբերի 23-ին՝ նախատեսվող հանրային լսումներից մեկ շաբաթ առաջ, տեղի ունեցան հանդիպումներ ծրագրի հակառակորդների և պաշտոնական ու ոչ պաշտոնական շրջանակների ներկայացուցիչների միջև, և փորձեր արվեցին՝ հրամաններով և ահաբեկելով, կանխել հակառակորդների մասնակցությունը այդ օրվա համար նախատեսված հանդիպմանը, ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանրային լսումներն ընթանան ինչպես պլանավորել են հակառակորդները և գրանցվի իրենց ցանկալի արդյունքը: Նման սցենար ստեղծելու համար Կոտայքի մարզի փոխմարզպետը և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը եկան Գառնի: Տեղացի բնակիչները բավականին զայրացած էին, և պաշտոնյաները չկարողացան գրանցել կեղծ փաստեր այդ ժողովի մասին: Կատարվածից բորբոքված՝ բնակիչները թույլ չտվեցին, որ հաջորդ հանրային լսումները կայանան Գառնիում: Նրանք փակեցին Գառնի-Երևան պետական ճանապարհը:	Ծրագրի անհատական ներդրումները որոշելուց հետո մշակվեցին, հրապարակվեցին և քննարկվեցին առանձին օբյեկտների ՇՄՍԱԳ-ները, այդ թվում՝ Քաղցրաշենի ոռոգման համակարգի համար: Ծրագրի և ՇՄՍԱԳ-ի հանրային քննարկումները կազմակերպվել էին Գառնի համայնքի համար 2014թ. նոյեմբերի 5-ին և 2015թ. փետրվարի 18-ին: Հայտարարվել էր 2015թ. դեկտեմբերին կայանալիք ՇՄՍԱԳ-ի նախագծի վերջնական քննարկումների մասին: Վերջին քննարկումը չկայացավ, քանի որ ցուցարարները փակել էին Գառնի տանող ճանապարհը: ՇՄՍԱԳ-ի վերջնական քննարկումները ավարտվեցին 2016թ. հունվարի 22-ին: Փորձելով ապահովել, որ ցուցարարները նորից չխանգարեն համայնքի անդամներին մասնակցել քննարկումներին, քննարկումներն իրականացվեցին երկու փուլով՝ հնարավորություն տալով արտահայտվել բոլոր ցանկացողներին: Քաղցրաշենի համակարգի ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունը տեղադրված է ԾԻԳ-ի կայքում. http://piu.am/safeguards.asp; տպագրված օրինակները տրամադրվել էին բոլոր ազդակիր համայնքների տեղական կառավարման մարմիններին 2015թ. նոյեմբերին և 2015թ. դեկտեմբերին: Հանրային քննարկումներից բացի, Ծրագրի մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվել էր Գառնի համայնքի հասարակական տարածքներում՝ պաստառների, բրոշյուրների և հաճախ տրվող հարցերի բուկլետների/գրքույկների միջոցով: Բոլոր այս նյութերը պարունակում են Ծրագրի վերաբերյալ բողոքների լուծման/վիճելի հարցերի քննության մեխանիզմների մանրամասները: Սա լայնորեն մանրամասնվում է նաև 2016թ. մարտի Հուշագրում: Ղեկավարությունը նշում է, որ անհատների մի խումբ չափազանց աղմկոտ էր այս հարցերի առնչությամբ: Գառնի համայնքի լայն հանրության տեսակետներն ավելի լավ հասկանալու համար 2015թ. կազմակերպվեցին վեց ֆոկուս խմբերի մի շարք քննարկումներ (ՖԽՔ) և երեք խորացված հարցազրույցներ Գառնի համայնքի տարբեր անդամների հետ: ՖԽՔ-ներում ներառվեցին հեռանկարային շինարարության հարևանությամբ կիրճում գտնվող հողակտորների բոլոր սեփականատերերը, պատահական կարգով

No.	Գանգատ	Պատասխան
	Հունվարի 22-ին “Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակ” Պետական հաստատությունը կազմակերպեց Քաղցրաշենի ոռոգման համակարգի Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության հաշվետվության քննարկումներ: *Հայաստանի Հանրապետություն* օրաթերթում հրապարակված հայտարարության համաձայն, քննարկումը պետք է սկսվեր ժամը 11:00-ին: Սակայն, Ջրային տնտեսության ԾԻԳ-ի աշխատակիցները քննարկումն սկսել էին ժամը 9:30-ին: Մասնակիցները Արարատի մարզի շահառու 12 համայնքների գյուղապետներն էին Գառնու գյուղապետի (թիրախային համայնք) և Ջրօգտագործոների ընկերության աշխատակիցների հետ միասին: Քննարկումներն ավարտվեցին ժամը 10:40-ին, այն նկարահանում էին Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը և Ջրային տնտեսության ԾԻԳ-ի հասարակայնության հետ կապերի բաժինը: Համաշխարհային բանկի փորձագետը նույնպես չէր տեղեկացվել դրա մասին: Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգով հետաքրքրվածները՝ Գառնի գյուղի բնակիչները, բնապահպան քաղաքացիները և լրագրողները ներկայացել էին հայտարարված ժամին՝ 11:00-ին: Նրանց պահանջով կազմակերպիչները հարկադրված եղան վերսկսել քննարկումը և լսել հարցադրումները: Դահլիճը լքածների մի մասը՝ այդ թվում շահառու համայնքների գյուղապետերը և նրանց հետ եկած մարդիկ, վերադարձան և մասնակցեցին քննարկմանը: Քննարկման մասնակիցները նորից հնչեցրեցին մտահոգիչ հարցադրումներ, որոնց պատասխանները կազմակերպիչները չկարողացան տրամադրել: Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի ծրագրի՝ հունվարի 22-ին տեղի ունեցած շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման վերաբերյալ առկա է երկու լրատվություն և երկու տեսագրություն:	ընտրված Գառնի ՋՕԸ-ի ֆերմերները և նույնպես պատահական կարգով ընտրված Գառնիի բնակիչները (ոչ ֆերմերները): Այդ քննարկումների նպատակն էր. (ա) գառնեցիների բազմազան շրջանակին տալ լրացուցիչ հնարավորություն բարձրաձայնել Ծրագրի հետ կապված ցանկացած տեսակի հարցադրումները; և (բ) ամբողջականացնել Ծրագրի բնապապանական և սոցիալական պարտավորվածությունների վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված ջանքերը: ՖԽՔ-ների ընթացքում մասնակիցների հարցերին և մտահոգություններին հնարավոր էր արձագանքել անմիջականորեն և ամբողջականորեն, ավելի հանգիստ և կառուցողական միջավայրում, քան հանրային քննարկումների ժամանակ (չնայած նրան, որ ՖԽՔ-ները չէին փոխարինում հանրային քննարկումները): ՖԽՔ-ները ցուցադրեցին, որ համայնքի որոշ անդամների հակադրվելը ծրագրին չի արտահայտում համայնքի ավելի լայն հանրության կարծիքը: Մասնակիցների մեծամասնության վերաբերմունքը՝ պարզաբանումներ ստանալուց հետո (այդ թվում՝ պայմանագրով նախատեսված փոխհատուցումը շինարարության տարածքում բնակիչների հողին վնաս հասցնելու դեպքում), դարձավ ավելի դրական: ***2016թ. մարտին Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակում կազմակերպվեց հանդիպում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և Գառնու բնակիչների հետ:*** Այս հանդիպումը կազմակերպվել էր ի պատասխան Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի տնօրենին 2016թ. փետրվարին ուղարկված բողոք-նամակին, որին ուղարկվել էր նաև գրավոր պատասխան: Այդ հանդիպման ընթացքում Բանկի թիմն օգտվեց հնարավորությունից, որպեսզի քննարկի համայնքի և ՔՀԿ-ների կողմից արտահայտված երկու կոնկրետ մտահոգությունները. (ա) հարցը, թե Քաղցրաշենի համակարգի ՇՄՍԱԳ-ի նպատակի համար Համաշխարհային բանկը ո՞ր հանրային քննարկումն է համարելու պաշտոնական (պատասխանն այն էր, որ Համաշխարհային բանկը հաշվի է առնում բոլոր հանրային քննարկումները; բոլոր հանրային քննարկումների արձանագրությունները կցված են եղել առցանց

No.	Գանգատ	Պատասխան
		հրապարակված ՇՄՍԱԳ-ի փաստաթղթերին); և (բ) Քաղցրաշենի ինքնահոս համակարգի երեք այլընտրանքային առաջարկները (արեգակնային էներգիայի կայան, պոմպերի փոխարինում և արդիականացում, և տարածքում նոր ջրամբարների կառուցում): Այս առաջարկված այլընտրանքային ծրագրերից յուրաքանչյուրի տեխնիկական կենսունակությունը և արժեքը քննարկվեցին այդ հանդիպման ժամանակ: Բանկի թիմը բացատրեց, թե ինչու այդ առաջարկները չեն կարող համարվել ավելի գերադասելի, քան գոյություն ունեցող ծրագիրը: Մանրամասն արձանագրությունը և տեսագրությունը կցված են գործին: ***Քաղցրաշենի ինքնահոս համակարգի վերաբերյալ հանրային տեղեկատվության բարելավմանը և ՔՀԿ-ների մտավախություններին արձագանքելուն ուղղված ջանքերի ամբողջ ցանկը ներառված է 4-րդ Հավելվածում:*** Դիմում-պահանջի գրանցման ծանուցումից Ղեկավարությունը տեղեկացել է, որ դիմողները պնդում են, որ *“համայնքի անդամներին ահաբեկում էին, ստիպում էին մասնակցել Ծրագրի քննարկումներին և ասում, որ չբողոքեն:”* Սրանք լուրջ մեղադրանքներ են, որոնց վրա Բանկի ուշադրությունը երբեք չէր հրավիրվել, և Բանկի խորհրդատուները, որոնք դիտորդի կարգավիճակով մասնակցել են հանրային քննարկումներից մի քանիսին, ահաբեկման կամ քննարկումներին մասնակցելու հարկադրանքի միջադեպերի ականատես չեն եղել: Ղեկավարությունը նշում է, որ առնվազն մեկ տեսագրված դեպքում դիմողները ղեկավարում էին մի խումբ մարդկանց, ովքեր փակում էին դեպի հանրային քննարկումների անցկացման վայրը տանող ճանապարհը, որպեսզի համայնքի անդամները չմասնակցեն քննարկումներին:
6.	Ծրագրի ծախսերին առնչվող ընթացակարգերը նույնպես հեռու են եղել թափանցիկ լինելուց: “<u>Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի</u>” կայքէջում կապալառուի հետ կնքված պայմանագրի արժեքը հրապարակված չի եղել և հրապարակվել է միայն մեր պաշտոնական	Դա արդեն շտկվել է, և պայմանագիրն այժմ հրապարակված է:

No.	Գանգատ	Պատասխան
	հարցումից հետո: Այդ ժամանակ կապալառուն արդեն սկսած է եղել աշխատանքները կիրճում:	
7.	Ծրագրի փաստաթղթերը լրիվ չեն: Չկա Ազատ գետի ջրի օգտագործման թույլտվությունը: Այս փաստաթուղթը պետք է տրամադրած լիներ Բնապահպանության նախարարությունը: Ծրագրի աշխատանքներն սկսվել են առանց այդ թույլտվության:	Բնապահպանության նախարարությունը տրամադրելու է այդ թույլտվությունը առաջիկա շաբաթների ընթացքում: Այս թույլտվության տրամադրումը պահանջվում է նախքան ինքնահոս համակարգի ***շահագործումն սկսելը:***
8.	**Բողոքների լուծմանն ուղղված նախորդ ջանքերը** A) 2015թ. մարտի 18-ին Գառնիի բնակչությունը (շուրջ 2000 բնակիչ) հրապարակել են բաց նամակ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանին, որը հրապարակվել է Հետք ինտերնետային լրատվության կայքում: B) 2015թ. փետրվարի 5-ին Գառնիի բնակիչները և վեց ՀԿ-ների ղեկավարներ բողոք են ուղղել Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի տնօրեն Լորա Բեյլիին և Համաշխարհային բանկի ջրային ռեսուրսների փորձագետ Վինստոն Յուին: Նրանք պահանջել են կազմակերպել նոր քննարկումներ նշված խնդրի շուրջ՝ ջրային ոլորտի մասնագետների, ֆիզիկոսների և աշխարհագրագետների մասնակցությամբ, որպեսզի վերջապես տրամադրվեն ավելի քան մեկ տարվա ընթացքում ժողովների ժամանակ հնչեցրած առաջարկությունների հիմնավորումները: 2016թ. մարտի 11-ին համաշխարհային բանկի երևանյան գրասենյակում կազմակերպվեց քննարկում ՀԲ Ջրային ռեսուրսների ավագ մասնագետ Վինստոն Յուի և այլ փորձագետների մասնակցությամբ: Քննարկումը կենտրոնացել էր Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի արդյունավետության և Ազատ գետից ջրառի իրականացման այլընտրանքների վրա: Գառնեցիները և բնապահպանները հիմնավորում էին իրենց պահանջները	***Ղեկավարությունը չի կարողացել ձեռք բերել Նախագահին ուղղված նամակը, որն իբր ստորագրված է 2000 բնակիչների կողմից: Չնայած Դիմողները հաճախ են հիշատակում այդ նամակը, այն այդպես էլ չտրամադրվեց , և Ղեկավարությունը՝ չնայած հարցումների, չկարողացավ ձեռք բերել այն:*** Անցած երկու տարվա ընթացքում ԾԻԳ-ը մեծ ջանքեր գործադրեց՝ ուղղված բազմաթիվ հարցադրումների (որոնք մասնավորապես բարձրացրել էր դիմում-պահանջը ներկայացրած անձը) լուծմանը: Կոնկրետ գործողությունները թվարկված են 4-րդ Հավելվածում: Բանկի թիմը և ԾԻԳ-ը հանդիպեցին քաղաքացիական հասարակության մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ այդ թվում Դիմողի, “Հետք”-ի լրագրողի, Համահայկական բնապահպանական ճակատի համակարգողի, “Էկոլուր” ՀԿ-ի ղեկավարի և “Մարդու իրավունքների կենտրոն” ՀԿ-ի հետ: Ներկա էին նաև չորս անդամ Գառնի համայնքից: Զրույցի սկզբում ուշադրության կենտրոնում էր նամակի բովանդակությունը, այսինքն Բանկի տեսակետի բացատրությունը հունվարի 22-ին կայացած ՇՄՍԱԳ-ի քննարկումների և Քաղցրաշենի համակարգի առաջարկված երեք այլընտրանքային ծրագրերի (ջրամբար, նոր պոմպեր, արևային պոմպեր) վերաբերյալ: Բանկի թիմը բացատրեց, որ հանրային քննարկումների գլխավոր սկզբունքն է հնարավորություն տալ բոլորին արտահայտել անձնական կարծիքները ՇՄՍԱԳ-ի նախագծի վերաբերյալ: Այս տեսանկյունից Բանկի թիմը համարում է, որ տրվել է լայն հնարավորություն և լրացուցիչ հետադարձ կապը կարող է իրականացվել Ծրագրի բողոքների լուծման մեխանիզմի օգտագործման միջոցով: Ինչ վերաբերում է ՔՀԿ-ների կողմից ներկայացված այլընտրանքային առաջարկություններին, ապա Բանկի թիմը քննարկել է նրանցից յուրաքանչյուրը: Նոր ջրամբար կառուցելը

No.	Գանգատ	Պատասխան
	նրանով, որ գետում բավարար քանակի ջուր չկա, հատկապես ամռան ամիսներին, և որ դա խանգարում է ցանկացած ինքնահոս համակարգի շահագործմանը: Եթե ծրագրի իրականացմանն ընթացք տրվի, ապա Ազատ գետն ամբողջովին կցամաքի, իսկ ինքնին գեղատեսիլ կիրճը կամայանա: Ազատ գետը լցվում է Ազատի ջրամբար: Պոմպերի շահագործման հետ կապված ծախսերը կրճատելու համար առաջարկվել էր ուսումնասիրել էներգիայի այլընտրանքային աղբյուրները: Քննարկման ժամանակ Համաշխարհային բանկի աշխատակիցներն ասացին, որ կուսումնասիրեն այդ առաջարկությունները կառավարության հետ, բայց վերջնական որոշումը պետք է կայացնի կառավարությունը: Հայաստանի կառավարությունը դեռևս չի արձագանքել այդ քննարկման ժամանակ արված առաջարկություններին, իսկ 2016թ. ապրիլի 2-ին՝ ի զարմանս շատերի, աշխատանքը Ազատի կիրճում սկսվեց: Դրանից հետո գառնեցիները երկու անգամ փակեցին Երևան-Գառնի ճանապարհը: Երկրորդ անգամ բնակիչները փակեցին ճանապարհը ինը ժամով և ստիպեցին իշխանություններին հեռացնել կիրճից շինարարական մեխանիզմները: Աշխատանքը ժամանակավորապես դադարեցվել է, սակայն ոչ մի պաշտոնական որոշում այդ հարցի վերաբերյալ չկա:	շատ թանկ տարբերակ է (գործող գնահատումներով Եղվարդի ջրամբարի արժեքը կազմում է շուրջ 300 մլն. ԱՄՆ դոլար՝ 90 մլն. մ^3 տարողության ջրամբարի համար) և կարող է խնդրահարույց լինել բնապահպանական և սոցիալական տեսանկյունից: Նոր պոմպերի հետ կապված խնդիրները. (ա) 1200 հա պահանջարկը բավարարելու համար ավելի շատ էլեկտրաէներգիայի սպառման անհրաժեշտություն, քան հիմա, (բ) մատակարարման ընդհատումներ, և (գ) ջրի կորուստների խնդրի լուծման անկարողություն (ինչպես գոլորշիացման, այնպես էլ ենթակառուցվածքի վատ վիճակի պատճառով): Ավելին, պոմպերի փոխարինումը չի ապահովում կառավարության նպատակի իրականացումը, այն է. նվազեցնել գյուղատնտեսության ոլորտի կախվածությունը էներգիայից: Եվ վերջապես, արևային պոմպերի տարբերակը թանկ է, հաշվի առնելով, որ շուրջ 200 մ ճնշում ստանալու համար կպահանջվի ավելի քան 3 ՄՎտ: Քննարկումների ընթացքում շոշափվեցին մի քանի այլ թեմաներ (օրինակ, անվստահությունը տվյալների նկատմամբ, մտավախություններ, որ գործող վարչապետն ունի ոռոգվող հողեր շահառու համայնքում, հարցեր, թե ինչպես է կատարվել ներդրումների ընտրությունը), այդ թվում ջրին և կառավարմանն առնչվող ավելի լայն հարցադրումներ, որոնք այս Ծրագրի իրավասությունից դուրս են: Բանկի թիմն առաջարկեց նախաձեռնել/վերսկսել ջրին նվիրված ազգային “երկխոսություն”, որը կծառայի որպես ֆորում այս ավելի լայն հարցերը կառավարության, ՔՀԿ-ների և դոնորների մասնակցությամբ քննարկելու համար; առաջարկությունը լավ ընդունվեց: Հանդիպման արձանագրությունն առկա է (այդ թվում մտքերի փոխանակման ամբողջ տեսանյութը): Եվ վերջապես, հանդիպման ընթացքում Բանկի թիմը հստակ նշեց, որ սա կառավարության կողմից իրականացվող ծրագիր է և որպես այդպիսին, Բանկը տալիս է իր համաձայնությունը ծրագրի իրականացմանը, այն պայմանով, որ համապատասխան ընթացակարգերը պատշաճորեն կատարվել են և ընդունելի են Բանկի համար: Բանկի թիմը խմբին բացատրեց նաև, որ ներկայացված առաջարկությունները զարգացման սահմանված նպատակների տեսանկյունից ոչ տեխնիկապես, ոչ էլ տնտեսապես չեն գերազանցում Քաղցրաշենի

No.	Գանգատ	Պատասխան
		համակարգի առաջարկված տարբերակը: Ոչ մի պայմանավորվածություն չի եղել, որ Բանկը կշարունակի ուսումնասիրել այդ առաջարկությունները:
9.	Քանի որ Ազատ գետը լցվում է Ազատի ջրամբար, որտեղից ջուրը մատակարարվում է Արարատի մարզի գյուղերին, առաջարկվել էր հետևյալը. 1 – կառուցել արևային էներգիայի կայան կամ հողմային տուրբիններ և օգտագործել այդ էներգիան՝ ջուրը ջրամբարից դուրս մղելու համար: Սա կլիներ ավելի շահավետ և շրջակա միջավայրի համար բարենպաստ տարբերակ, քանի որ էներգիայի ավելցուկը՝ ոռոգման շրջանի ավարտից հետո, կարելի է վաճառել, ապահովելով լրացուցիչ օգուտներ ներառված ձեռներեցներին: 2 – փոխարինել 50 տարի շարունակ շահագործվող պոմպակայանները ժամանակակից էներգախնայող պոմպերով, որոնք նախագծված են այսօրվա ջրի մակարդակների համար: 3 – կառուցել տվյալ տարածքում նոր ջրամբարներ (սա փորձագետների առաջարկ է), որոնք կկուտակեն Ազատ գետը լցվող ջրերը և կօգտագործեն դրանք ոռոգման նպատակների համար: 4 – Հարկավոր է հինգ տարվա ընթացքում կատարել ջրաչափումներ Ազատ գետում՝ ջրի հոսքի վերաբերյալ հուսալի վիճակագրական տվյալներ ձեռք բերելու համար և միայն դրանից հետո քննարկել ծրագրի օգտակարությունը (վերջին տաս տարվա ընթացքում Ազատի ջրամբարը լցվել է ընդամենը երեք անգամ):	Տես 8-րդ կետը: Առաջարկներից յուրաքանչյուրը քննարկվել է:
10.	Ջրի չափազանց ցածր մակարդակը գետում բավարար չէ մեկ կամ երկու գյուղի հողերի ոռոգման համար: Բնակիչներն ու հասարակությունը կարծում են, որ ինքնահոս եղանակով ոռոգվելու են միայն Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանին պատկանող հողերը, որոնք գտնվում են Նարեկ և Քաղցրաշեն գյուղերում: Շատերը կարծում	Ղեկավարությունը նշում է, որ Ծրագիրը պատրաստվել է 2012-2013թթ.՝ նախկին կառավարության օրոք, երբ գործող վարչապետն իշխանության չէր եկել: Երկրորդը, ինչպես արդեն ասվել է, Ծրագիրը փոխելու է նույն քանակությամբ ջրառի իրականացման եղանակը միայն: Ծրագրի

No.	Գանգատ	Պատասխան
	են, որ ծրագիրը կազմվել է հենց այդ պատճառով: Վարչապետին պատկանում է 120 հա Նարեկ գյուղում և 80 հա՝ Քաղցրաշենում: Հովիկ Աբրահամյանի հողերը ոռոգվում են առանձին պոմպակայանով, և քանի որ ջուրը սակավ է, մտավախությունն այն է, որ ինքնահոս եղանակով Քաղցրաշենին մատակարարվող ջուրը պարզապես կփոխարինի նրա պոմպակայանը:	շնորհիվ առաջացող խնայողություններից օգտվելու են ոչ թե որոշ անհատներ, այլ ամբողջ երկիրը: 2016թ. մայիսի սկզբին տեղի ունեցած քաղաքացիների ցույցերից հետո կառավարությունը հայտարարեց, որ կրկին կուսումնասիրի առաջարկվող տարբերակները՝ հնարավոր փոխզիջումային լուծումները դիտարկելու նպատակով: Ղեկավարությունը նշում է, որ այլընտրանքային տարբերակներն ուսումնասիրվել են անցյալում և՝ թեև նման փոխզիջումային լուծումները կարող են տեխնիկապես իրագործելի և տնտեսապես կենսունակ լինել, դրանք զիջում են գոյություն ունեցող նախագծին և զգալիորեն կնվազեցնեին էլեկտրաէներգիայի հնարավոր խնայողությունները: Ղեկավարությունն այժմ սպասում է կառավարությունից պաշտոնական որոշում՝ կապված այդ երկու համակարգի հետ: Մինչ այդ համապատասխան աշխատանքները դադարեցվել են:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՋՐԻ ԲԱԼԱՆՍԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ Ա 3.1. Ջրի բալանսը Գեղարդալճի ծրագրի համար

Ծրագրի իրականացումից հետո

Ամիս	Կարմիր գետի հոսք	Ջրօգտագործում ջրանցքից վերև		Բնապահպանական հոսք	Հաշվարկված հոսք ջրանցքի դերիվացիայի կետում	Ներհոսք Գեղարդալճի ջրավազանի փոքր գետերից	(1) Կարմիր գետից օգտագործման համար հասանելի հոսք	(2) Ոռոգման ջրի պահանջարկ 1448 հա-ի համար	(3) Ներհոսքը ջրամբար	(4) Արտահոսք ջրամբարից	(5) Ջրամբարի ծավալը ամսվա վերջին
		Ոռոգում	Խմելու-կենցաղային նպատակներով								
Հունվար	0.80	0.00	0.158	0.15	0.492	0.00	0.492	0.000	0.00	0.00	0.06[23]
Փետրվար	0.70	0.00	0.158	0.15	0.392	0.00	0.392	0.000	0.00	0.00	0.06
Մարտ	0.86	0.00	0.158	0.15	0.552	0.01	0.562	0.000	0.01	0.00	0.07
Ապրիլ	1.42	0.00	0.158	0.15	1.112	0.08	1.192	0.000	1.19	0.00	1.262
Մայիս	2.68	0.30	0.158	0.15	2.072	0.15	2.222	0.119	2.22	0.12	3.365
Հունիս	1.94	0.40	0.158	0.15	1.232	0.10	1.332	1.208	0.88	1.21	3.037
Հուլիս	1.04	0.60	0.158	0.15	0.132	0.09	0.222	1.563	0.09	1.56	1.564
Օգոստոս	0.86	0.50	0.158	0.15	0.052	0.02	0.072	1.190	0.02	1.19	0.394
Սեպտեմբեր	0.83	0.37	0.158	0.15	0.152	0.02	0.172	0.354	0.02	0.35	0.060
Հոկտեմբեր	0.83	0.23	0.158	0.15	0.292	0.00	0.292	0.000	0.00	0.00	0.060
Նոյեմբեր	0.78	0.00	0.158	0.15	0.472	0.00	0.472	0.000	0.00	0.00	0.060
Դեկտեմբեր	0.83	0.00	0.158	0.15	0.522	0.00	0.522	0.000	0.00	0.00	0.060
Տարեկան	**13.57**	**2.40**	**1.896**	**1.80**	**7.474**	**0.47**	**7.944**	**4.434**	**4.434**	**4.434**	

(1) Սա Կարմիր գետում առկա հոսքն է՝ բնապահպանական թողքը և մյուս նպատակներով օգտագործումը հաշվառելուց հետո:

(2) Սա ներկայացնում է ընդհանուր պահանջարկը՝ ծածկելով 1448 հա և 4, 4 միլիոն մ^3 կազմող ոռոգման պահանջը:

(3) և (4) համապատասխանաբար ներկայացնում են ջրամբարի ներհոսքն ու արտահոսքը:

(5) Ջրի ամսվա ծավալը (t) = ջրի ամսվա ծավալը (t-1) + ներհոսքը ջրամբար (t) –արտահոսքը ջրամբարից (t)

Հիմնական միտքն այն է, որ ջրամբարի արտահոսքը (4) բավարար է ոռոգման պահանջարկը բավարարելու համար (2):

[23]) Ջրամբարի ոչ ակտիվ կամ “մեռյալ” ծավալ

Աղյուսակ Ա3.2 – Ջրի բալանսը Քաղցրաշենի համակարգի համար

(Ազատ գետի ենթաավազանի ջրատնտեսական բալանսը 50 տոկոս ջրատվության տարվա դեպքում, մլն. մ^3)

Ամիսներ	Հաշվարկված հոսք երկու գետի միախառնման կետում	Երևան Ջուր ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի ջրառ	Ոռոգում առանց թույլտվության 60 հա	Փաստացի հոսք գլխամասում	Ոռոգման այլ օգտագործողներ գլխամասային հանգույցի ստորին բիֆում	Բնապահպանական հոսք	Գեղարդալիճ-Հացավան պոմպակայանի ջրառը	Օգտագործման համար հասանելի	Քաղցրաշենի համակարգի ոռոգման ջրի պահանջարկ	Պահանջարկի բավարարում		Մնում է գետում՝ բնապահպանական հոսքը ներառյալ
										Գետից	Պակասորդ	
Հունվար	10.33	4.10	0.00	6.23	0.00	2.23	0.00	4.00	0.00	0.00	0.00	6.23
Փետրվար	10.30	4.10	0.00	6.20	0.00	2.23	0.00	3.97	0.00	0.00	0.00	6.20
Մարտ	10.43	4.10	0.00	6.33	0.00	2.23	0.00	4.09	0.00	0.00	0.00	6.33
Ապրիլ	26.50	4.10	0.00	22.40	0.00	2.23	0.03	20.14	1.10	1.10	0.00	21.27
Մայիս	29.05	4.10	0.00	24.95	0.00	2.23	0.03	22.69	1.66	1.66	0.00	23.26
Հունիս	28.21	4.10	0.08	24.03	0.02	2.23	0.03	21.74	2.26	2.26	0.00	21.72
Հուլիս	11.02	4.10	0.13	6.80	0.03	2.23	0.03	4.50	2.55	2.55	0.00	4.19
Օգոստոս	8.99	4.10	0.13	4.77	0.03	2.23	0.03	2.47	2.47	2.47	0.00	2.23
Սեպտեմբեր	9.27	4.10	0.06	5.11	0.02	2.23	0.03	2.83	1.34	1.34	0.00	3.72
Հոկտեմբեր	9.20	4.10	0.00	5.10	0.00	2.23	0.03	2.84	0.60	0.60	0.00	4.47
Նոյեմբեր	10.54	4.10	0.00	6.44	0.00	2.23	0.00	4.21	0.00	0.00	0.00	6.44
Դեկտեմբեր	9.73	4.10	0.00	5.63	0.00	2.23	0.00	3.40	0.00	0.00	0.00	5.63
Տարեկան	**173.58**	**49.20**	**0.40**	**123.99**	**0.10**	**26.81**	**0.21**	**96.87**	**11.98**	**11.98**	**0.00**	**111.70**

(Ազատ գետի ենթաավազային ջրատնտեսական բալանսը 75% ջրատվության տարվա դեպքում, մլն. մ³)

Ամիսներ	Հաշվարկված հոսք երկու գետի միախառնման կետում	Երևան Ջուր ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի ջրառ	Ոռոգում առանց թույլտվության 60 հա	Փաստացի հոսքը գլխամասում	Ոռոգման այլ օգտագործողներ գլխամասի ստորին բյեֆում	Բնապահպանական հոսք	Գեղարդալիճ-Հացավան պոմպակայանի ջրառը	Օգտագործման համար հասանելի	Քաղցրաշենի համակարգի ոռոգման ջրի պահանջարկ	Պահանջարկի բավարարում		Մնում է գետում՝ բնապահպանական հոսքը ներառյալ
										Գետից	Պակասորդ	
Հունվար	10.02	4.10	0.00	5.92	0.00	2.23	0.00	3.69	0.00	0.00	0.00	5.92
Փետրվար	10.36	4.10	0.00	6.26	0.00	2.23	0.00	4.03	0.00	0.00	0.00	6.26
Մարտ	10.13	4.10	0.00	6.03	0.00	2.23	0.00	3.80	0.00	0.00	0.00	6.03
Ապրիլ	12.90	4.10	0.00	8.80	0.00	2.23	0.03	6.54	1.10	1.10	0.00	7.67
Մայիս	33.46	4.10	0.00	29.36	0.00	2.23	0.03	27.10	1.66	1.66	0.00	27.68
Հունիս	25.54	4.10	0.08	21.36	0.02	2.23	0.03	19.07	2.26	2.26	0.00	19.04
Հուլիս	9.32	4.10	0.11	5.11	0.03	2.23	0.02	2.83	2.29	2.29	0.00	2.78
Օգոստոս	8.20	4.10	0.11	3.99	0.03	2.23	0.02	1.71	1.97	1.71	**0.26***	2.23
Սեպտեմբեր	7.79	4.10	0.06	3.63	0.02	2.23	0.03	1.35	1.34	1.34	0.00	2.24
Հոկտեմբեր	7.85	4.10	0.00	3.75	0.00	2.23	0.03	1.49	0.60	0.60	0.00	3.12
Նոյեմբեր	7.65	4.10	0.00	3.55	0.00	2.23	0.00	1.32	0.00	0.00	0.00	3.55
Դեկտեմբեր	9.24	4.10	0.00	5.14	0.00	2.23	0.00	2.91	0.00	0.00	0.00	5.14
Տարեկան	**152.46**	**49.20**	**0.36**	**102.91**	**0.09**	**26.81**	**0.19**	**75.82**	**11.22**	10.96	0.26	91.66

* 75 տոկոս ջրատվության տարվա դեպքում նախքան ոռոգվող տարածքի սպասարկումը սկզբից կբավարարվի բնապահպանական թողքի պահանջը

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԾԻԳ-Ի ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԳԱՌՆԻԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Համայնքի հարցադրումը	ԾԻԳ-ի ձեռնարկած միջոցառումը	Ժամկետ
Ջրի առկայության խնդիրը Գառնիում (օր., Գառնի ՋՕԸ-ից պահանջվում է վերցնել ավելի քիչ ոռոգման ջուր՝ իր թույլտվությանը համապատասխան՝ դեպի Քաղցրաշենի համակարգ հոսքերը պահպանելու համար)	Գառնիի ջրանցքի վերականգնումը նախատեսվում է ԵԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ոռոգման ծրագրի շրջանակներում: Դա կլավացնի ջրի առկայությունը Գառնիի համար, որը գտնվում է Քաղցրաշենի համակարգի վերին բյեֆում:	Ընթացքում է
Վստահության բացակայություն հիդրոլոգիական չափումների և հաշվարկների հանդեպ	Գառնեցիների մասնակցությամբ տասնյակից ավել ցուցադրական չափումներ Ազատ-Գառնի դիտակետում, որը գտնվում է գլխամասային հանգույցի վերին բյեֆում: Տվյալները հասանելի են ԾԻԳ-ի կայքէջում: *Գլխամասային հանգույցում ջրաչափ սարքը տեղադրելուց հետո նախատեսվում է ջրի մակարդակի չափումների տվյալները դարձնել հրապարակային:*	Մարտ-օգոստոս, 2015
Անվստահություն սահմանված բնապահպանական թողքի նկատմամբ և գիտելիքների բացակայություն բնապահպանական թողքի հաշվարկման /-մեթոդաբանության մասին	Դիմողին ներկայացվել է հարցազրույցը բնապահպանական թողքի հաշվարկման մեթոդաբանության հեղինակի հետ (մասնակցել են Գառնի համայնքից մի լրագրող և հիմնական ակտիվիստներից մեկը)	Ապրիլի 9, 2015
Ազատ գետի ջրի ոչ պատշաճ որակ ոռոգման նպատակների համար	Գառնեցիների մասնակցությամբ ջրի որակի նմուշառում գլխամասային հանգույցի մոտ և 63 պարամետրի վերլուծություն Հայաստանի Բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոնի կողմից	Հունիսի 9, 2015
Գլխամասային հանգույցի կառուցման համար ոչ ճիշտ տեղի ընտրություն և այն՝ գետի հունով ներքև	Հանդիպում Գառնի համայնքի բնակիչների հետ Խորհրդատուի գրասենյակում՝ գլխամասային հանգույցը գետի հունով ներքև տեղափոխելու անհնարինությունը ցուցադրելու համար	Ապրիլի 21, 2015

Համայնքի հարցադրումը	ԾԻԳ-ի ձեռնարկած միջոցառումը	Ժամկետ
տեղափոխելու առաջարկություն	Դաշտային այց ապագա խողովակաշարի ամբողջ երկայնքով՝ բարձրությունների ԳՏՀ չափումներով, նպատակ ունենալով ցույց տալ, որ գլխամասային հանգույցի տեղափոխելը գետի հունով ներքև անհնարին է	Հունիսի 3, 2015
Հնարավոր բացասական ազդեցություն Ազատի կիրճի բնության վրա	ԾԻԳ-ի հետ քննարկվել են մի քանի առաջարկություններ՝ ուղղված Ազատի կիրճի բնության բարեկարգմանը: Դրանցից են հետևյալ հնարավորությունները. (ա) կանոնավոր մաքրման աշխատանքներ կիրճում; (բ) ծառատունկ գլխամասային հանգույցի ստորին բյեֆում, և (գ) գլխամասային հանգույցի մոտ Գառնիի բնակիչների համար երեք փոքր տաղավարների կառուցում: Բանկի թիմը քննարկում է ԾԻԳ-ի հետ (և գյուպետի), թե ինչն է հնարավոր անել, նշելով, որ Բանկը ծրագիր ունի կիրճում, որի շրջանակներում իրականացվելու է ճանապարհի նորոգում:	Ընթացքի մեջ է
Պահպանել և ապահովել բնապահպանական թողքի պահանջի կատարումը (առաջնահերթ է ոռոգման համեմատությամբ)	Ըստ գլխամասային հանգույցի նախագծի, բնապահպանական հոսքի ջրթողը գտնվում է ոռոգման ջրառներից ներքև, ինչը ֆիզիկապես անհնարին է դարձնում ջրառը նախքան բնապահպանական թողքի ապահովումը: Այս նախագիծն արտացոլում է Հայաստանի օրենսդրությունը, որը առաջնային է համարում բնապահպանական թողքի ապահովումը՝ օգտագործման բոլոր մյուս նպատակների համեմատությամբ, այդ թվում՝ ոռոգման պահանջարկի: Գլխամասային հանգույցում կիրականացվի մշտադիտարկում՝ պահանջների կատարումը և համայնքի կողմից վերահսկման իրականացումն ապահովելու նպատակով:	Ընթացքի մեջ է
Մտավախություններ, որ շինարարությունը կազդի զբոսաշրջության վրա և բնապահպանական թողքը կպակասի	ԾԻԳ-ը կշարունակի ուսումնասիրել, թե ինչ հարմարություններ կարելի է ստեղծել՝ գետի երկայնքում գեղագիտական տեսքը բարելավելու համար: Քննարկվել են նաև ինժեներական լուծումներ, օրինակ գլխամասային հանգույցի վրա հուշարձան	Ընթացքի մեջ է

Համայնքի հարցադրումը	ԾԻԳ-ի ձեռնարկած միջոցառումը	Ժամկետ
	կամ մշակութային արժեք տեղադրելը, նպատակ ունենալով բարձրացնել հանգույցի հանրային հատկանիշները՝ մարդկանց համար այն գրավիչ դարձնելու մտադրությամբ:	
Մտավախություններ՝ կապված մոտակա չորս բնական հուշարձանների հետ:	ԾԻԳ-ը նամակ է ուղարկել Բնապահպանության նախարարին՝ այդ հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ակնկալիքներով: Այդ հուշարձանները դեռ պետք է պաշտոնական ձևակերպում ստանան, իսկ հետազոտական աշխատանքը չի սկսվելու մինչև 2019թ: Սակայն Նախարարությունը տվել է իր հավանությունը այդ ենթածրագրի բնապահպանական գնահատումների վերաբերյալ: Առավել մեծ օբյեկտը՝ Քարերի սիմֆոնիան, գտնվում է վերին հոսանքում՝ ավելի քան 1 կմ հեռավորության վրա: Դրանցից և ոչ մեկի վրա ազդեցություն չի ակնկալվում:	Ավարտված է
Մրցակցություն ՋՕԸ-ների միջև ջրային ռեսուրսների օգտագործման համար	Ջրտնտպետկոմը պետք է աշխատի Բնապահպանական պետական տեսչության հետ, որպեսզի ստուգի ապօրինի գերջրառը և կայացնի իրավիճակի շտկմանն ուղղված որոշում	Ընթացքի մեջ է
Լրացուցիչ առաջարկություններ՝ կապված ինքնահոս ոռոգման համակարգի հետ (օր., պատվար, նոր պոմպեր, արևային պոմպեր)	ԾԻԳ-ը պատրաստել է վերլուծություն, որը ցույց է տալիս, թե ինչու է ինքնահոս համակարգն ավելի գերադասելի, քան այլընտրանքային առաջակությունները	Քննարկվել է ՔՀԿ-ների հետ հանդիպման ընթացքում, 2016թ. մարտ

Սույն փաստաթուղթը հաշվետվության անգլերեն բնօրինակի թարգմանությունն է: Անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն բնօրինակը:
Բնօրինակի անգլերեն տարբերակը նաև տվյալ փաստաթղթի միակ պաշտոնական տարբերակն է: